



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

1808 GRAD
EREN
2122

BÜHL

ՍԻՐԱԲ ԵՒ ՍԱՄՈՒԵԼ

ΕΠΡΕΨΟΡ

ԿՐԹԱԿԱՆ ԴԱՍԵՐ

- 103 -

9-6-10

ԱՐԴՅՈՒՆԱ Հ ՄԵՐԻՆ

Digitized by srujanika@gmail.com

ՀԱՅՈՎ ՀՈՐՅ ԵՒ ԶԱՐԳԱՑՆԱԾ ՈՐԴԻՈՎ

ԵՐԻՐԾՈՎ ՀԱՅԿԱՆԻ ՊԻՆԱԿ


— ४८५ —

۳۷۳ نویروی و خستگاهیه طبع اولشدر


h. 901 b

ՏԵՐԵՆԻ. ԿԱՐԱՆ Կ. ՊԵՐՎՈՎԻՆԱ

1897



ՍԻՐԱԲ ԵՒ ՍԱՄՈՒԻԼ



Եհվանս Քյուէ
ՍԻՐԱԲ ԵՒ ՍԱՄՈՒԷԼ

ԲԱՐԻ ՀՕԹ

ԿՐԹԱԿԱՆ ԴԱՍԵՐ

Հիմակ և գործած
Գրես

ԽՐԻՍՏԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Ի ՆՈՒԵՐ

ՀԱՅՈՑ ՀԱՐՑ ԵՒ ԶԱՐԴԱՑԵԱԾ ՈՐԴԻՈՑ

ԱՐԿՐՈՐԴ ՏԳՈՎՐՈՒԹԻՒՆ



معارف نظارت جلیله سنه ۲۷۳ نومروی رخصتنامه سیله طبع شندر

Կ. ԳՈԼԻՍՈ
ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ԳԵՐԳԵՐԵԱՆ

1887



UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

卷之三十一



ՅԻՇԱՏԱԿ ԱՆՄՈՒԱՑ

ԿՈՆԴՈՆՆ ԶԱՑՈ ՐԱՀՈՐՉՈՒ

ՄԱՅՐ ՈՐԴԻՈՎՔ ՀԱՆԴԵՐՁ

Ի ՑՐԵՑՈՒՄ ԵՐԾԻՑԵՈՑ

ՀԱՆԳԹԻՅԵԼՈՑ Ի ՏԵՐ

ՄԿՐՏԻՉ Էֆենդի ՓԱՓԱԶԵԱՆ

6700

2700

2700

2700

ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ
Ձ 1920. 7. 22.
Օ!

Ա.Ռ.

Ա Զ Ն Ի Ի Ե Ւ Մ Ի Մ Ե Լ Ի

ԼԵՒՈՆ ՊԵՅ Մ. ՓԱՓԱԶԵԱՆ

Սիրոք եւ Սամնուկի անուն երկասիրութիւնը, որ
բարի հօր կրթական դասեր կ'աւանդէ. ընդունե-
ցէք որ զայն հանգուցեալ հօրդ յիշատակին նըւի-
րեմ. Զի կը ճանաչեմ զծեզ թէ բարեկամ էք կըր-
թութեան, բարեկամ ազգին եւ բարեկամ յառաջ-
դիմութեան :

Չեմ երկբայիր երբէք, թէ իբրեւ ծնողասէր եւ
երախտապարտ որդի, գիտէք պատուել Զեր հօր
յիշատակ, ոչ միայն խաչաքար մի կանգնել նորա
գերեզմանին վերայ . կամ նորա սառւերագիը
պատկեր նկարել տալով՝ կախել ընտանեկան յար-
կի պատէն . այլ առաւել գնահատել գիտէք այն-
պիսի յիշատակարանով մի պատուել Զեր հան-
գուցեալ ծնողին յիշատակ որ անշշունչ քար չ'է
եւ ոչ անխօսուն պատկեր . այլ գիր է, լեզու ու-
նի եւ կը խօսի դարէ ի դար :

Թող քաղցր լինի քեզ այն հօր յիշատակ, որ
բարգաւաճ մի գերդաստան կազմեր է : Եւ ես
ինքնին կը գուշակեմ թէ ոչ այնչափ աշխարհին
բախտ օժանդակ էր նմա. այլ առաւել աշխատու-
թիւն, խոնեմութիւն, եւ իմաստուն տնտեսու-
թիւն . յարգելով միշտ չափաւոր կեանք եւ պար-
կեշտութիւն :

Դուք այսօր երկու ծաղկահասակ նարազատ-ներովդի հայրենի տան բարեյիշատակ ժառանգորդն էք . Եւ եկ կը ցանկամ յամենպին սրտէ զի դուք տիրապէս ժառանգորդ լինիք հայրենի տան . այսինքն երբ նիւթականին հետ՝ ժառանգէք նաև նոգեկանն . ապն է՝ հարաւաք գործով հան-դերձ , եւ երկիւղած Աստուածպաշտութիւն՝ ըն-կերսիրութեամբ հանդերձ :

Թէ յիշենք անցեալը՝ կը խիլամտինք Թէ սոսկ նիւթական նոխութիւն կարօզ չ'է մի գերդաս-տանի կեանք անվետար պարհել . սոսկ առատու-թեան խղ Թէեւ լինի ծովու չափ , դարձեալ կա-րող չէ հայրենի տան նրագ վառ պահել . գէթ մի դար տանել հասցունել տան փառաց լոյսը .

Թէ քառաւուն տարի յառաջ ճնէիր՝ պիտի տես-նայիր ու յիշէիր այսօր Պօլսոյ նախնի Ամերայից ու սեղանաւորաց հարատութեան նոխութիւն . Ո՞ւր մնացին նոքա , այսօր զլ կան ի մրցի , մեռան գը-նացին , որդիքներ մնացին . այլ աւա՛ղ մուրացին ու մարեցին հայրենի տան նրագ , եւ ինչ էր սորա պատճառ , խօսիմ ծեզ . Թէ չես հաւատար ծերե-րուն հարցուր եւ գու ինքնին իմաստասիրէ . խե-լամիւտ կը լինիս . Թէ այդ յետնամեաց ժառան-գորդ որդիքները՝ միայն նիւթական կեանք ժա-ռանգեցին . եւ ոչինչ համարեցին բարոյական կեանքի ժառանգութիւն . Այլ չը գիտեմ , Թէ այդ նոխութեամբ պանծացեալ Ամիրամեր ամէնքն եւս ունէի՞ն արդեօք բարոյական կեանքի հարստու-թիւն ինչպէս Արքահամ , Յովք . որպէս զի իբրեւ ժառանգութիւն՝ Թողնէին իրենց որդւոց , Կամ

պիտանի ուսմամբ եւ դաստիարակութեամբ պատրաստեցի՞ն իրենց որդիքներ ապագայ ժառանգութեան համար :

Գիտենք, չենք ուրանար, թէ կային ի նոցանէ ումանք, որ նիւթականին հետ' հաւատով եւս շատ հարուստ էին եւ մեծ ընծայաբերութիւն ունեին առ ազգն եւ եկեղեցին . որոց կանգնած հոյակապ տաճարներ եւ զարդուց համշերձանքներ վկայ են այսօր եւ ցոյց կուտան թէ այդ մերձաւոր նախնիք քան զմեզ մեծագործ էին :

Սակայն ինչո՞ւ փլան այդ մեծամեծ տուներ . կասեն թէ արտաքին հեղեղներ բաղխեցին ու կործանեցին : Ես էլ կ'ասեմ թէ ներքին ծովացածք զեղծունքներու մէջ խեղջուեցան . եւ աւելի ճըմարիտ է եթէ ասեմք ումանք եւս զիրեար դաւանելով տնաւեր եղան : Ափսո՞ս, այդ ականաւոյ ընտանիք, որոց մնացորդ նշխարներ սակաւագիւն են այսօր :

Միրելի Լեւոն պէյ, թէ կարդաս Միրաքայ դասեր թէ վերծանես Դրախտի ընտանիք, յայնժամ կը խելամտիս թէ ի՞նչպէս ընտանիքներ կը բարձրանան եւ կը խոնարհին . անշուշտ պատճառներ կան, եւ բաւական բացատրուած են պատճառներ այդ երկու երկասիրութեանց մէջ :

Պէտք է ուրեմն խոյս տանք այն կործանիչ պատճառներէն, որով ընտանիքներ կը խոնարհին եւ կը չքանան իսկ, պէտք է նաեւ միրենք ու գրկենք այն արդար եւ տնաշէն պատճառներ, որով ընտանիքներ կը բարձրանան եւ կը յարատեւն :

— Ժ —

Սիրելի է ինձ , Ազնիւ Լեւոն պէյ , զի դուք որ
երկու հարազատներսվդ իբրեւ երեքնդի շառա-
ւիդներ բուսած էք ծնողական արմատին քնոյն
վերայ . Եւ տակաւ տակաւ դէպ ի վեր կ'աճիք .
Թէպէտ արմատին կէմն ցամքած է , այլ եւս Զեր
աճման հիւթ չի տար . բայց մայրենի արմատն պա-
հեր է խնամական Աստուած . որ իւր կենդանի
օրինակով եւ աւագ աչքով պահպանէ զջեզ , եւ
որ մայրական եւ հայրական իրաւունքով միան-
գամայն կիշխնէ . Ռւրախ կը լինիմ , երբ կը տեսնամ
զջեզ որ իբրեւ հլու բարեկիրթ գաւակ ամենայն
երկիւղած պատկառանօք կը պաշտէք Զեր մայր :

Եւ ես կ'աղօթեմ որ Մայր նանդերձ Որդւովք
միշտ ողջ մնաք եւ աւելի եւս ի լաւ անդր յառա-
ջադիմէք եւ ծեզմով յաւէտ բարձրանայ հայրենի
տան փառք :

— ՀՅՈՒՅՑ —

ՆԱԽԱՐԱՆ



ԲԱՐԵԿԱՄ ԺՈՂՈՎՈՒՐԴ ՀԱՅՈՑ

Դրախտի լոնուանիքին յետոյ , Ոիրաք և Սամու-
լի անուն նոր երկասիրութիւնս , զոր Հայոց
հայրերուն համար գրեցի , դարձեալ ձեզ կը նուի-
րեմ , ժողովուրդ Հայոց . որոյ նիւթ և պարունա-
կութիւնն՝ աշխարհիս կեանքի կրթական դասերն
են , զորս բարի հայր Սիրաք կաւանդէ իւր զար-
գացեալ Սամուէլ որդւոյն :

Սիրաք իւր դասերը կը խօսի աշխարհիս բազ-
մագիմի առարկաներու վերայ , և Սամուէլ մոտա-
դիւր ուկն կը դնէ : Սիրաք հայրական և բնական
սիրով կաւանդէ մարդկային կենաց ամենակարե-
ւոր խրատներ , և Սամուէլ որդիական հնագուն-
դութեամբ կընդունի հայրախօս դասերը , որ կը
կրթէ ու կը մարզէ զինքն իւր կենաց յառաջդի-
մութեան յասպարէզ :

Նախագլխոյն մէջ՝ ցոյց կուտայ Սիրաք . թէ ինչ
է մարդն աշխարհիս վերայ և ինչ է իւր կոչումն ,
պարտիք և իրաւունք մեր ընկերական կնանքին
մէջ , և այլն :

Երկրորդին մէջ համառօտիւ կը բացատրէ լնդ-
հանուր աիեղերաց բնական և յաւիտենական օ-
րէնքներ . որով օրինակարգ Արարիչն այդ անյեղի
օրինաց սանձը իւր ձեռքն առնելով կը կառավա-

րէ վերնաշխարհ և մեր բնակած երկրագունդը։ Կը խօսի նաեւ բարոյական օրինաց վերայ, զոր Տէր Աստուած Մովսիսին և Յիսուսին ձեռքով աւանդեց մարդոյն, որպէս զի մարդն եթէ մոռնայ իւր խղճին բնական օրէնքն, գէթ յիշէ ու կարդայ Աստուծոյ դրական և դրական օրէնքները. որ միշտ լոյս կուտան և յուշարար լինելով՝ կուղղեն մարդոյն խոտորեալ կեանքը։

Երրորդին մէջ կը խօսի Սիրաք մարդկային ընկերութեան անհաւասար կեանքին վերայ. ընդ որ կարծամիտ և թերահաւատ մարդիկ մեղադիր կը լինին Աստուծոյ, թէ ինչո՞ւ համար մարդիկ հաւասար կեանք ու բախտ չունին աշխարհիս վերայ. չխորհելով անգիտարար թէ՝ աշխարհիս վերայ մարդկային ընկերութեան ամրապնդող հզօրագոյն կապն՝ անհաւասարութիւնն է. որ կը կապէ և կը փարէ մեր ընկերական կեանքը։

Չորրորդ դասին մէջ կը խօսի աշխարհիս տիրող իշխանութեան և հպատակ ժողովուրդին վերայ. երկարաճառելով ցոյց կուտայ, թէ ի՞նչ է իւրաքանչիւրին պարտիք և իրաւունք և թէ ի՞նչպէս կը զեղծանի իշխանութիւնն, երբ ի բաց դնելով օրինաց արդարութիւնը՝ միայն սրով և գաւազանով կիշխսէ. երկրին բարգաւաճման և յառաջդիմութեան ճամբան չի բանար, որ իշխանութեան զօրութիւնն է։ Նմանապէս կը զեղծանին հպատակ ազգեր, երբ անսաստող կը լինին սահմանադրեալ օրէնքին դէմ։

Մեծապէս և առաւել կը սիսալին ժողովուրդներ ունայնամիտ յոպսերով, երբ իրենց բաժնին և ու-

Ժին չափով յառաջդիմութեան ճանապարհ չեն բանար . այլ հեղդամիտ լինելով ամենայն ինչ կառավարութենէն կսպասեն :

Հինգերրորդ դասին մէջ նկարագիր կը հանէ Սիրաք աշխարհիս ժողովրդոց և ազնուական դասերուն . ցոյց տալով թէ ժողովուրդն է բուն աշխատութեան մայր և երկրին կեանք տուսղ ոգին : Սորա հետ կը յարէ թէ ճշմարիտ ազնուականութիւն՝ հոգւոյ մեծութիւնն է , և թէ նոցա պարտիքն է աշխարհիս վերայ մեծագործել և ժողովրդասէր լինել :

Վեցերրորդ դասով՝ մարդոյն աշխատութեան և աշխատութեամբ հայթայթուած հացին վերայ կը խօսի Սիրաք . յայտնելով թէ հացին ու հարըստութեան աղբիւրը երկիրն է , հողն է , և զայն բեղմնաւորող մարդոյն աշխատութեան ձեռքն է : մարդ կը չըքաւորի , մուրացիկ կը լինի երբ անաշխատ ձեռքով հաց կը խնդրէ , և առանց վարուցանի՝ հնձել կուզէ :

Եօթներրորդ դասն աւանդելով Սիրաք , կենաց ուղիղ տնտեսութիւնը կուսուցանէ . յառաջ բերելով թէ անօգուտ է դանձ և հարատութիւն երբ դանձատէր հարուստն տնտեսել չգիտէ . և խիստ չուտով կնպառի դանձն՝ դանձատունէն , և ցորեանը՝ շտեմարանէն : Կը յաւելու նա և թէ ուղիղ տնտեսութիւնը գիտէ արդարութեամբ հատուցանել իւր պարտիքը . Կայսերին՝ Կայսեր տալ և Աստուծոյն՝ Աստուծոյ , և ապա իւր բաժին վայելել :

Ութներրորդ դասով ցոյց կուտայ Սիրաք , թէ

առանձին մարդոյն և թէ աշխարհիս ժողովրդոց մեծ աքայլ յառաջդիմութիւն՝ ինքնաշխատութեան զօրաւոր ջանքն է . եթէ կայ բախտ աշխարհիս վերայ , այդ միայն ինքնաշխատութեան ձեռքն է . ով որ հեղգութեան մէջ փակէ իւր ձեռքը՝ բախտն իրմէն կը խուսափի : Անարժան է այն ձեռք որ առանց աշխատութեան հացը յիւր բերան կը տանի . « Զեռք սր ոչ աշխատիցեն , կերիցեն մի » . սուրբն Պօղոս կը պատուիրէ :

Իններորդ դասով կը ճառէ Սիրաք թէ ինչպէս ինքնաշխատութիւն , հանճար և ընկերական զօրութիւն , այս երեք հզօր դաշնակիցներ միանալով քաղաքակրթեցին զաշխարհ . ինքնաշխատ հանճար ծնաւ գիւտեր , արուեստներ , այլ ընկերական զօրութիւն զարդացոյց . և այսպէս այս երեք անզէն դաշնակիցներ աշխարհիս տիրեցին :

Տասներորդ դասով կիմաստասիրէ Սիրաք աշխարհիս երջանկութեան և ապերջանկութեան վերայ . ցոյց կուտայ բնական փաստերով թէ այդ երկու հակառակ տարերք մարդոյն կենաց հետ միշտ համընթաց կը լինին , և թէ կարելի չէ որ մարդ աշխարհիս վերայ միայն երջանկութեան ծաղկները քաղէ առանց փուշերէն խոցուուելու :

Մետասաններորդ դասին մէջ քննաբար ցոյց կուտայ Սիրաք . թէ ի՞նչ են այն զօրաւոր ներքին և արտաքին պատճառներ , որով աշխարհիս ազգեր կը բարձրանան և կը խոնարհին , կը բարգաւաճին և կը նուազին : Այս պատճառները Ա . Գրքէն առնելով Սիրաք կը հաստատէ թէ՝ մեղք և արդարութիւնն է :

— ԺԵ —

Երկուտասաններորդ դասին կարգը կը խօսի Սիրաք ժամանակի և աշխարհիս այլեւ այլ պատահարներու վերայ . Կը խոստովանի թէ այն , կան աշխարհիս վերայ բնական տարերաց այնպիսի պատահարները , որոց վերահաս զօրութենէն մարդ կարող չէ խուսափիլ : Բայց Իշխարհի դէպքերով կը հասկառէ Սիրաք . թէ մարդ մարդոյն՝ առաւել չար և մեծագոյն պատահարն է . որոց առաջ շատ նուազ են և առ ոչինչ կը համարուին բնական պատահարներ :

Երեքտասաններորդ դլխով կաւարտէ Սիրաք իւր դասերը , և իրեւ աներկմիտ հաւատացեալ ոգեւորուելով կը խօսի Աւետարանի քարոզած ընկերութեան վերայ . առակով և օրինակով ցոյց կուտայ թէ մարդոյն ազատ և երջանիկ կեանք՝ ընկերութեան մէջն է . ցոյց կուտայ թէ աշխարհիս վերայ տիրող թշուառութեան միայնակ դեղնու դարման՝ ընկերսիրութիւնն է . ցոյց կուտայ նաև թէ առանց Աւետարանի ճշմարիտ ընկերսիրութեան որչափ ճգնի քաղաքակրթութիւն՝ կարող չէ մարդոյն ապերջանիկ կեանքը բարւոքել , կամ նորա խոռված ոգւոյն խաղաղութիւն տալ :

Սիրաք , որ Աւետարանին սիրահարն է . միւս դասերուն վերայ իրրեւ դլուխ և պսակ հիւսելով կաւանդէ իւր սիրական Սամուէլին , որպէս զի Աւետարանի ընկերսիրութեան դասերն իւր բոլոր կենաց մէջ հոգւով և ճշմարտութեամբ ընդունի :

Ահաւասիկ այսչափով բովանդակեցի Սիրաքայ բարի Հօր կրթական դասեր . սիրով կարդացէք , խելամտելով ի միտ առէք , ո՛վ դու Հայոց ժողո-

վուրդ , Հայոց հայրեր , Հայոց գաստիարակներ և
Հայոց զարգացեալ որդիքներ :

Առ հասարակ ձեզ համար գրեցի այս պիտանի
դասեր . դուք ևս Սիրաքայ հօր բարի օրինակին
հետեւելով աւանդեցէք ձեր որդիքներուն . աւան-
դեցէք ձեր աշակերտներուն . վասն զի զարգաց-
եալ նոր սերունդին համար՝ աշխարհի գիտու-
թիւն և մեր ընկերական կենաց գասերն՝ ամենա-
կարեոր գիտութիւն ու հմտութիւն են .

Սոսկ դպրոցական ուսումներ բաւական չեն
Հայոց զարգացեալ պատանիներուն համար , որ նոր
կը թևակոխեն աշխարհի կենաց շրջանին մէջ . այլ
պէտք է զի նոքա Սամուէլի նման ականջ դնելով
միշտ բարեխրատ լինին ու յառաջադիմեն գէպ ի
լաւագոյն կեանք . որոյ միջոցը մի միայն ուզիդ
գաստիարակութեան ձեռքն է , որ կուզդէ և կը
վարէ զիրենք :

Սիրաքն այդ կրթական ձեռք յօրինեց և կու-
տայ Հայոց հայրերուն ձեռքք . թէ սիրաբար ըն-
դունիք , ով գաստիարակ Հայրեր , Սիրաքայ տըք-
նող ձեռքն ու գրիչ այլ ևս պիտի շարունակէ իւր
բարոյախօս գասեր :

ՍԻՐԱՔ

ԵՒ

ՍԱՄՈՒԵԼ

ԹՈՐԻ ՀՕՐ ԿՐԹԱԿԵՆ ԳՈՒԵՐ



ԴԱՍԱ-

ՄԱՐԴ ԵՒ ԱՇԽԱՐՁ

Ենձ հօրս լուարում,
որդիակէ . եւ այնպէս
արարէմ , զի ապրես-
չիմ . Սիրամ . ԶԼ . Դ .



ԲԳԵԱԿ իմ Սամուէլ , զարոցի գա-
սերդ արդէն փոքր ի շատէ աւար-
տեցիր . հասակդ զարգացաւ և այժմ
հասեր ես մինչեւ ութն և տասն ամ .
իբրեւ հայր պարտական եմ ես , որ
աշխարհի ընդհանուր դասերը ես
ինքս աւանդեմ քեզ . թէ ինչ է
մարդն աշխարհիս վերայ , ի՞նչ է իւր ընկերական
կեանք , ի՞նչ է իւր պարտիք և իրաւունք , ի՞նչ է
իւր առանձին կոչումն , ի՞նչ էր մարդոյն հին կեանք .

և ի՞նչ է արդի կեանք , զոր քաղաքակրթութիւն կը կոչեն . և ի՞նչ են առհասարակ մարդոյն յառաջադիմութեան պայմաններ . ի՞նչ են աշխարհիս վերայ այն բնական և պատահական պատճառներ , որով զմարդն երջանիկ և ապերջանիկ կառնեն : Մի խօսքով , աշխարհիս վերայ մարդուն վարած ընկերական կեանքին մի փոքր նկարագիրը պիտի հանեմ քեզ :

Որդեակ իմ , ընտանեկան կեանքին մէջ ծնար և հայրենի տան ու գաւառին մէջ զարգացար . այսուհետեւ կեանքիդ անձուկ շրջանն ընդարձակելով կը մտնաս աշխարհի լայնածաւալ շրջանին մէջ . քո պարտիքն է աշխարհ և մարդիկ ճանչնալ . և ինչ որ աչքի և մոռքի լուսով կը տեսնաս աշխարհիս մէջ՝ առանց դիտելոյ ապշութեամբ չ'անցնիս . այլ քննես ու հետամուտ լինիս , թէ ի՞նչպէս կը կառավարուի աշխարհ և մարդկային ընկերութիւն :

Եթէ ի բնէ և ի մօրէ կոյր ծնէիր , ես այս դասերը չ'էի աւանդեր քեզ . վասն զի առանց աչքի լուսոյ այս աշխարհ և բովանդակ տիեզերք տեսնալու՝ անհնարին կը լինէր , որ ես աշխարհի դասերն աւանդէի քեզ . անհնարին կը լինէր նաեւ , որ դու միայն մտքի լուսով կարող լինէիր գաղափարել աշխարհիս իրաց դիտութիւնը : Սորա համար կաղղակէր Յիսուսին՝ մի կոյր , « Տէ՛ խընդրեմ զի բացայց : » Դժբաղդ կոյր աչքի լոյս կը խընդրէր , յայտ է թէ աշխարհ և կենդանի կեանք տեսնալու համար էր : Նա իւր կուրութեան մէջ թշուառ էր , ոչ ինչ չ'էր տեսնար և ոչ ինչ չ'էր զգար , ոչ երկինք կը տեսնար լուսագունդ աստղերով , և ոչ

երկրագունդ կը տեսնար ծառերով, ծաղիկներով, որպէս զի վայելէր և փառք տար իւր ստեղծողին և օրհնէր աշխարհի Արարարիչը :

Իսկ դու , բարեբախտ որդեակ իմ, որ աչքի լուսով ծներ ես, բիւրանգամ ծունր դիր և փառք տուր քո բարերար Ստեղծողին : Շնորհապարտ եղիր նաև քո ծնողին, որ կ'աշխատի լոյս տալ ու բանալ մտքիդ աչքը , որպէս զի դու երկու լուսով տեսնաս աշխարհ : Մարդիկ կան , որ կը շրջին աշխարհիս վերայ , կը տեսնան ու չ'են տեսնար . այս մարդիկ մտաւորական լոյսէն զուրկ են . միայն աշխարհի արտաքին երեսն իրրեւ ստուեր կը տեսնան , և չգիտեն աշխարհի ներքին կեանք . բնական և բարոյական օրէնքներ , վարիչներ և շարժման զօրութիւններ և այլն :

Զանադիր եղիր , որդեակ իմ . որ մտաւորական լոյսդ պայծառ լինի , և որչափ պայծառանայ մըտքիդ լոյս՝ այնչափ պայծառ ու պարզ կը տեսնաս աշխարհ և աշխարհի բաները , դու ստուերի նման չես անցեր աշխարհէս և աշխարհս ստուերի նման չես տեսնար . այլ տիրապէս կը տեսնաս թէ Բնչէ մահկանացու մարդոյն կոչումն աշխարհիս վերայ , և Բնչէ նորա գործ , վախճան ու նպատակ իւր կենաց մէջ :

Մարդոյն կոչումն և գործ շատ մեծ է աշխարհի վերայ : Աստուած կը ներշնչէ և Մովսէս կը պատմէ , թէ մարդ իւր Արարշապետին տիրական պատկերն զգեցած է . և Բնչէ այս պատկերին նմանութեան կնիքն . — անմահ հոգին , և բանաւորութիւն , որով մարդն կը զանազանի բոլոր ստեղծա-

կան արարածներէն, խօսուն լեզուով, բանականութեամբ և հանճարով ճոխացած :

Սակայն դու մի այնպէս հասկնար, որ մարդն Աստուծոյ նոյնատիպ, և ամենայնիւ հաւասար ճշգրտահան պատկերն է : Քառ, եթէ այսպէս կարծուի՝ ամրարշտական մեծամութիւն է, զի մարդըն իւր բարերար սկզբնատիպ Արարչին մի ամենափոքրիկ տիպարն է . նորա կատարեալ և անհաս իմաստութեան առաջ՝ մի անգէտ մանուկ է, մի նշոյլ է, որ մշտնջենաւոր լուսէն երկրիս վերայ ձգուած է, և յաւիտենական անմահութեան առաջ մի հողակերտ մահկանացու է : Եւ Ի՞նչ համեմատութիւն կայ կաթ մի ջուր Ովկիանոսի ծովուն հետ, և կաթ մի չող՝ արեւու համատարած լուսոյն հետ :

Ուստի պէտք է ողջմտութեամբ այսպէս իմանամք, որ մարդն իւր բանականութեան խելքով ու հանճարով խիստ չափաւոր սահմանի մէջ փակուած է, և նորա բարերար Արարիչն այնչափ ձիրք ու զօրութիւն չնորհեր է մարդոյն, որչափ կամեցեր է : Այո՛, մարդն այս աշխարհիս հողագնդին վերայ իրեւեւ իշխող տիրապետ կարգուած է իւր Արարչապետէն, տիրել բովանդակ երկրին, իշխել ծովուն ու ցամաքին, անասնոց ու թռչնոց, և ինչ որ կան, կը չնչեն ու կը սողան երկրիս վերայ, զորս առ հասարակ մարդոյն հրամանին տակ դըրաւ, ինչպէս կը խոստովանի Դաւիթ թէ « Զամենայն ինչ հնազանդ արարեր ի ներքոյ ոտից նորա » և այլն . . . Աստի կիմանամք և ինչպէս կիմաստասիրեն եկեղեցւոյ վարդապետք՝ թէ Տէր Աստուած

աշխարհիս ամէն բան մարդոյն համար ստեղծեր է , իսկ մարդն՝ Աստուծոյ համար , որ յաւիտեան օրհնէ և փառաւորէ իւր Արարիչն , իւր արդար և առաքինի կեանքով , որպէս ասէ Յիսուս . « Տեսցեն զգործս ձեր բարիս և փառաւորեսցեն զՀայր » . Սակայն կը յաւելում ասել մանաւանդ թէ՝ մարդ մարդուն համար կարգեր է , զի մարդոյն կեանք ընկերական է . մարդն ինքնին առանձին առանձին ոչինչ է , և ոչինչ զանազանութիւն չունի վայրենի կենդանիներէն , որոց բնակութիւն՝ լեռներու խորշեր և անտառներու մէջն է :

Ահաւասիկ այս պատճառաւ կը բարձրանայ մարդոյն կոչումն մեր ընկերական աշխարհին մէջ , և ընկերաբար վարելով իւր կեանքը կը յառաջադիմէ . մինչդեռ անասնոց կեանք նոյն կը մնայ առանց երրէք յառաջդիմութեան : Մարդոյն յառաջադիմութիւն՝ իւր ընկերական կեանքէն է . ապա թէ ոչ՝ մարդն եւս վայրենութեան և անասնոց կարգին մէջ կը մնար , ոչինչ չնորհ չ'էր իւր լեզուին և խօսակցութեան առաւելութիւն , երբ նորա միտք ու հոգին վայրենութեամբ թանձրացած լինէր : Մարդոյն ընկերական կեանքէն յառաջ եկաւ աշխարհաշինութիւն . մարդիկ աշխարհիս վերայ տիրապէս տիրեցին և տիրապէս կատարեցաւ Աստուծոյ հրամանն :

Դաւիթ կ'ասէ , թէ Տէր Աստուած տիեզերքի ժառանգութիւն բաժնեց . Երկինքն՝ իւր բաժին առաւ , և Երկիրը՝ մարդոց որդիքներուն ժառանգութիւն տուաւ . և բովանդակ աշխարհ իբրեւ միդրախտ զարդարելով՝ յանձնեց մարդոյն , որպէս զի

գործէ ու պահէ զայն։ Յոյց կուտայ Տէր Աստուած թէ՝ մարդն աշխարհիս ագարակին մէջ մի գործաւոր մշակ է։ պէտք է անդադար աշխատի արդիւնաւորել զայն, և որչափ ժրագործ լինի՝ զաշխարհ մշակութեամբ, շինութեամբ, գործունէութեամբ արդիւնաւորել, այնչափ աւելի կը վայելէ և կը բարգաւաճի իւր կեանք։

Այլ դու մի այնպէս ըմբռներ, որդեակ իմ, որ ամենահարուստ մեծատունն Աստուած, աշխարհս իւր հարստութեամբ մարդոյն տուաւ իրեւ սոսկ նիւթական կեանք։ որ նա աշխատի, վաստակէ, ուտէ և վայելէ միայն երկրին բարիքը։

Եթէ այսպէս լինէր՝ ոչինչ գերազանցութիւն և առաւելութեան շնորհ չէր ունենար մարդն, երբ նա սոսկ նիւթական կեանքով ապրէր ինչպէս կապրին անասունք։

Գիտենք, մարդ աշխարհին հետ և նիւթական կեանքին հետ կապուած է, բայց իւր մեծ կոչումն կը պահանջէ, որ նիւթականին հետ կապէ բարոյական կեանք։ և այդ է միայն, որ կը բարձրացընէ մարդոյն պատիւ և արժանաւորութիւնն։ ապա թէ ոչ մարդ կը նուաստանայ ու կը հաւասարի անասնոց։

Ուստի աշխարհիս վերայ մարդոյն կոչումն, պատիւ, փառք, արժանաւորութիւն՝ իւր գործքերու կշիռն է։ նա ինչ վիճակի մէջ կը լինի թող լինի։ նորա նուիրական պարտիքն է ճանչնալ իւր կոչումն, ճանչնալ մարդկութեան վայելուչ կեանք, ճանչնալ նա և թէ ինքն այս աշխարհիս վերայ դիպուածով և ունայնաբար չ'է եկեր։ այլ մեծամեծ

պարտիքներ կատարելու համար ծներ է , քանի որ կեանք ունի՝ պէտք է գործէ . վասն զի մահն ու գերեզման գիշեր կը բերեն , յորում այլ եւս մարդ կարող չ'է գործել : Այս աշխարհ մարդոց առաքի-նութեան ասպարէզն է , ով որ ընթանալ գիտէ՝ նա միայն մրցանակ կ'առնու :

Կարդա Սուրբ գիրք , կարդա Հայոց աշխարհի պատմութիւն և տես թէ առաքինի ողիներ ի՞նչ-պէս ընթացան : Նոյ իրբեւ այր կատարեալ՝ արդա-րութեամբ ընթացաւ՝ մրցանակն առեց . Աբրահամ հաւատով ընթացաւ մրցանակն առեց . Յակոբ ժուժկալութեամբ ընթացաւ՝ մրցանակն առեց . Յովսէփ ողջախոհութեամբ ընթացաւ՝ մրցանակն առեց . Մովսէս Աստուծոյ ժողովուրդին իրբեւ ա-ռաջնորդ ընթացաւ՝ մրցանակն առեց . Յովք համ-բերութեամբ ընթացաւ՝ մրցանակն տռեց . Յեսու յաղթութեամբ ընթացաւ՝ մրցանակն առեց . Սա-մուէլ հնազանդութեամբ ընթացաւ՝ մրցանակն ա-ռեց . Դաւիթ ապաշխարելով ընթացաւ՝ թողու-թեան մրցանակն ընդունեց : Յիսուս Դաւիթի որ-դին խաչակրութեամբ ընթացաւ՝ առեց այն մրցա-նակն և անունն , որ ի վեր է քան զամենայն ա-նուն : Առաքեալք նոյն խաչակրութեամբ ընթա-ցան՝ մրցանակն առին , Հայրապետք եկեղեցին բա-րեզարդելով ընթացան՝ մրցանակն առին . Վարդա-պետք ուսուցանելով ընթացան՝ մրցանակն առին . Սուրբ Գրիգոր , իւր Որդիք և Թոռունք Հայոց աշխարհի համար ընթացան՝ մրցանակն առին , Սուրբն Սահակ ու Մեսրովակ , աշակերտներով հան-դերձ գրելով թարգմանելով ընթացան՝ մրցանակն

առին . քաջն Վարդան իւր ուխտադիր խմբով խաչով ընթացան՝ մրցանակն առին . և այլ ո՞ր մէկ համրեմ քեզ Հայոց աշխարհէն , որք առաքինական վաստակով ընթացան մրցանակն առին :

Թողունք անցեալ աշխարհի առաքինեաց դասն , թողունք եկեղեցւոյ սուրբ նահատակներ , որ արիւնով ընթացան . ներկայ քաղաքակիրթ աշխարհին մէջ մտնենք . Ո՛վ կարող է համար բերել այն աշխատաւոր առաքինեաց թիւը , որք զօրհանապազ կը տքնին և կ'ընթանան աշխարհիս ասպարէզին վերայ , հանճարով , գիւտերով , արուեստով , աշխարհաշինութեամբ , մեծագործութեամբ և այլ բազմադիմի շահաւեէտ և արդիւնաւոր վաստակներով ձոխացուցին լիացուցին մարդոյն ընկերական կեանք . չ'եմ յիշեր գրիչներ և մամուլի անխոնջ թեւերը , որ կտիւ և զգիշեր ըստ տարածելով կը լուսաւորեն մարդոյն մտաւորական աշխարհ :

Արդ կ'աւարտեմ այս դասը , և ուխտիւ կ'աւանդեմ քեզ . ծանիր , թէ ի՞նչ է քո կոչումն աշխարհիս վերայ , և համեմատ ընթացիր քո կոչմանդ , որ հասնիս նպատակին և մրցանակն ընդունիս : Թէ իբրեւ հաւատացեալ՝ բոլոր սրտով պաշտէ քո տէր Աստուած . թէ իբրեւ աշխարհի մարդ՝ քաղաքավարութեամբ առաքինացիր . թէ իբրեւ ազատ մարդ՝ մի ստրկանար , այլ պաշտպանէ մարդ՝ կութեան պատիւ . թէ իբրեւ իշխան՝ օրէնքովիշխի ; արդարութիւն և իրաւունք սիրէ , թէ իբրեւ հալատակ՝ օրէնքով հնազանդիր . թէ իբրեւ եկեղեցւոյ հովիւ՝ հօտիդ վերայ անձնադիր եղիր . թէ իբրեւ գառն՝ արածող հովուին հետեւիր . թէ իբ-

բեւ ընկերական մարդ՝ ընկերական պարտիքներ սիրով կատարէ և միանգամայն ճանչցիր իրաւունքը. թէ իբրեւ հայ և հայու զաւակ՝ ազդդ սիրէ. թէ իբրեւ Աւետարանին ընդհանուր մարդասիրութեան աշակերտ՝ ամէն մարդ անխտրապէս սիրէ :

Մի բան եւս պատռէր տամ քեզ, միշտ յուշիդ պահէ Պօղոսին խրատ, ուր և կը լինիս, թէ հայրենեաց և թէ օտար աշխարհի մէջ անդրդուելի կաց կոչմանդ վերայ, կարճմտութեամբ կրօնէ ի կրօն մի փոխուիր : Հայոց աշխարհի զաւակն ես. Հայաստանեայց ազատ եկեղեցւոյ ազատ որդեգիրն ես, ի նոյն կաց և ի նոյն մեռիր . թող հայ ժողովուրդ տանի թաղէ զքեզ քո հարց ու նախնեաց գերեզմանին ծոցը :



ԴԱՍ Բ:

ՏԻԵԶԵՐԳ

ԻՆԱԿԵՆ ԵՒ ԲՈՐՅԱՑԱԿՈՆ ՕՐԻՆԵ

Արարեր զլւսին վա-
սրն ծամանակի , ա-
րեզակն ծանեաւ բգ-
ծամ մնանելոյ իւրայ .
Սաղմոս ձն . ԳԼ :

ՄԻԱՑԵՍ ԵՍ , որդեակ իմ Սամուէլ , աչքըդ բաց
նայէ տիեզերքին վերայ . դարձիր դու խորապէս
մտաքնին եղիր . զի տէր Աստուած իւր պետական
աթոռը երկնից մէջ դնելով՝ բոլոր տիեզերքը՝ բը-
նական և յաւիտենական օրէնքով կը կառավարէ .
իւր օրէնքներն անշարժ և անփոփոխ են և ոչ ոք
կարող է զայն չրջել կամ խախտել . ինչպէս աշ-
խարհիս դրական և քաղաքային անհաստատ օ-
րէնքներ . զորս միոյն մատ կը գրէ և միւսին կեղ-
ծանէ :

Բնական օրէնքով կը դառնայ արեւը , կը ծա-
գի առաւօտ , լոյս կուտայ տիեզերաց , յերեկուն ի
մայր կը մտնէ : Արեւը մեր կեանքին և ժամանա-
կին չափն ու կշխոն է . կորոշէ մեր օրեր , տարին
ու դարեր : Թող այս՝ իւր լուսով ու ջերմութեամբ
կը կենդանածնէ մեր աշխարհ , մարդիկ նորա լու-
սոյն տակ կը գործեն . եթէ անլոյս մնան կը դա-

դարին . « Ելանէ մարդ ի գործս իւր , ի վաստակս ձեռաց իւրոց մինչեւ յերեկոյ » . Աստի կ'իմանամք եթէ բնական աշխարհին լոյս պէտք է . որ մարդիկ գործեն . քանի՞ առաւել պէտք է լոյս մարդոյն մտաւորական աշխարհին , որ կարենան ուղղութեամբ գործել .

Բնական օրէնքով գիշերավար լուսին մերթ կը նուազի և մերթ կը լրանայ , կը մեռնի և դարձեալ կը ծնի . իւր շրջանն երեսուն օր է . և այս թուով կը չափէ ամիսը , և տասն երկու ամիսով՝ մի տարին կը բոլորէ : Երկնակամարդին այս երկու մեծ լուսաւորներ մեզ նման բանաւոր մարդ չ'են . բայց բնական օրէնքով գիտեն կատարել Աստուծոյ կամք , ինչպէս սաղմուսելով Արարչին մեծագործութիւնը կը հռչակէ Դաւիթ . « Արարեր զլուսին վասն ժամանակի և արեգակն ծանեաւ զժամ մտանելոյ իւրոյ » :

Աստեղագէտ չեմ , որ երկնից բովանդակ համաստեղութեանց վերայ ճառեմ և ծանօթութիւն տամ քեզ , թէ որպէս տիեզերքի անհուն տարածութեան մէջ կը շարժին կը դառնան , մերթ կերեւին մերթ կաներեւութանան , և այս ամէն անսայթաք ընթացքը բնական օրէնքով կը կատարեն , և երբէք զիրեար չեն դիմահարեր : Դու կը տեսնաս մարդիկ աշխարհիս վերայ կը շրջին , շատ անդամ իրենց գլուխը իրարու զարնելով կը պատառեն : Երանի թէ մարդոց գլուխներն եւս ճանչնային իւրաքանչիւր իրենց սահմանն ու շրջան :

Դառնանք երկրիս վերայ : Մեծն Ովկիանոս երբեմն իւր ահեղ ալիքներով կուռի կը լեռնանայ և

դարձեալ գաշտանալով իւր տեղը կը խաղաղի , այդ եւս բնական օրէնքով է . զի ծովերու ամենիշան Տէր՝ մանր աւազով պարիսպ քաշեր է ու մռնչող ալիքներուն դէմ սահման դրեր է , որ անդըր չ'անցնին ու չ'ողողեն երկիրը : Երանի՛ թէ այդպէս մի սահման եւս մարդոյն համար դնէր գերիշան տէր , և իւր մէջ փակէր աշխարհակալութեան ոգին . որպէս զի արեան ծովերով չողողէր խեղճ ժողովուրդը :

Մամիկն՝ բնագէտ չ'է որ տեսնայ , այլ միայն զարմանալով փառք կուտայ Աստուծոյ . նա չը գիտէ թէ Բնչպէս յամարան անձրեւ կուգայ և ձմերան ձիւն . մեր մամիկներ մեզ կը պատմէին թէ հրեշտակներ ալիւրի նման ձիւն կը մաղեն երկրիս վերայ , մերթ մանրիկ մանրիկ , և մերթ խոշոր խոշոր :

Բայց դու գիտես , որ ծովէն ու ցամաքէն արեւուն զօրութեամբ գոլորշիներ ի վեր կը բարձրանան և խտանալով ամազ կը լինին . ամպերէն անձրեւ և ձիւն կը տեղան երկրիս վրայ , ազրիւրներ ու վտակներ յորդելով կառատանան , գետերու մէջ կը վազեն , գետերն եւս կերթան ի ծով կը թափին . և այսպէս ծովու ջրեր շրջան կառնուն , ոչ կը նուազին և ոչ կառաւելուն , ինչպէս կը դիտէ մեծն Սողոմոն թէ « Ամենայն ուղիսք ի ծով գնան . և ծով ոչ լնու , ի տեղի յոր ուղք գնան , անդ նոքին դառնան ի գնալ » : Ահաւասիկ զարմանալի այս անդրադարձութիւնն եւս բնական օրէնքով է , որ ծովեր ու ջրեր նոյն քանակութեան մէջ կը պահէ . որչափ և որքան են

ի սկզբանէ անտի՝ նոյն պիտի մնան մինչեւ ցյաւիտեան. զի Տէր Աստուած ամէն բան չափով և կը սովոր ատեղծեր է :

Ո՞վ, քանի՞ զարմանալի է Արարչին կարգադըրութիւն, զմեզ շրջապատող տարերք բոլորն եւս բնական օրինաց տակ հնազանդելով՝ նորա հրամանը կը կատարեն. Դու կը տեսնան երբ գարուն կուգայ, գիտես թէ մեռած ցուրտ հողագնդիս նոր յարութիւն կուտայ, բոլոր բուսական տարերք մայրենի հողին ծոցէն ի վեր կը զարթնուն. կը ծին կը բողրոշին, նախ տերեւներ կը բանան և ապա կը ծաղկին, յամարան կը պտղաբերեն, յաշնան տերեւաթափ կը լինին և ի ձմերան կը դադարին գործելէ. և երբ ցուրտ կը ցամքեցնէ բուսականներու վերի մասն՝ ի ներքուսա ջերմիկ հողին տակ կը մնանին արմատներ և կը յղանան սերմեր, այդ եւս յաւիտենական ու բնական օրէնքով է : Հուժկու հովերն եւս բնական օրինաց զօրութեան տակ կը հպատակին. մերթ հիւսիս կը շընչէ, մերթ հարաւ, մերթ արեւելք մերթ արեւմուտք : Երկնից և երկրի դատարկութեան մէջ գիտես թէ պատերազմ բանալով կը մրցին իրարուդէմ և կը յաղթահարեն վիրեար :

Դաւիթ կը գիտէր այս և կը հրաւիրէր տարերք, որ օրհնեն զտէր Աստուած. «Օրհնեցէք զՏէր, հուր և կարկուտ, ձիւն և սառն, հողմ և մրրիկ, որք առնէք զբան նորա : »

Այսպէս եւս ամէն շնչաւոր կենդանիք նոյն բնական օրէնքով կը վարին. տես դու, ձնձղուկ իւր բոյն ծառի ճղի վերայ կը դնէ . տնասէր ծիծառն իւր կաւակերտ բունիկ տան գերանի կողէն

կը կախէ , ընտանի հաւն ի թուխս կը նստի , ամէնքն եւս իրենց ժամանակին ճագեր կը հանեն . կաթ տաղով կը սնուցանեն և երբ մեծնան թեւարոյս լինին՝ ազատ կը թողուն :

Այն հզօր առիւծ՝ որ բոլոր կենդանեաց իշխող թագաւորն է , և իւր պալատ անտառներու խորերն են , ուր և կը ծնի կորիւնները . որք երբեմն առ քաղցի կաղաղակեն . դուցէ Դաւիթ իւր հովութեան մէջ տեսաւ ու լսեց նոցա մռնչիւն , ուստի կասէ . «Կորիւնք առիւծոց մռնչեն և յափշտակեն , խնդրեն յԱստուծոյ գկերակուրս իւրեանց : Ի ծագել արեւու ժողովին և ի մորիս իւրեանց դադարին » :

Կուզե՞ս բնութեան Արարջին մեծագործ կարգադրութեան վերայ պանչանալ , զոր նա կը գործէ բնական օրինաց ձեռքով , հիացեալ ողւով կարդա հարիւր երեք գլուխ Սաղմոսն , որ այսպէս կակսի . «Օրհնեա անձն իմ զտէր , տէր Աստուած իմ , մեծ եղեր յոյժ . և այլն » : Այս գլուխ ծայրէ ի ծայր վսեմագոյն նկարագիր մի է բնական օրինաց , զոր կը հանէ Դաւիթ օրհնելով ու փառւորելով զմեծադործն Աստուած :

Իսկ բանաւոր և ազատ մարդ , որ իւր խելքով ու հանճարով կիշխէ երկրիս վերայ և մերթ եւս տարերաց դէմ կը մրցի . կը մեծամտի որ հողմեր , ամպեր , ծովեր , ալիքներ , եղանակն ու ժամանակ անսան ու հնազանդին իրեն : Բայց նա եւս բնական օրինաց իշխանութեան տակ նուաճուած է . կը ծնի , կաթով ու հացով կապրի , կաճի ու կը զարդանայ . հուսկ յետոյ կը ծերանայ և կը մեռ-

նի , հողէն ի մարդ , և մարդէն ի հող կը դառնայ անդրէն . ուստի տիրական մարդն եւս բնական օրինաց հպատակ ծառայն է : Միայն թէ մարդն առզատակամ է , իւր կեանք և գործեր վարելու համար : Միթէ առիւծն եւս ազատ չ'է^o անտառավայրին մէջ շրջել և իւր որսեր հոգալ : Արծիւն ազատ չ'է օդային թագաւորութեանց մէջ ազատաբար սաւառնել . և իւր գահը դնել բարձրագագաթ լեռներու վերայ :

Բաւ է այսքան , որդեակ իմ , ես բնախօս չ'եմ , որ բնական օրինաց գիտութիւնն ընդարձակ հըմտապէս ճառեմ քեզ . այժմ սկսիմ համառօտել քեզ բարոյական օրէնք , որ միայն բանաւոր մարդոյն կը վերաբերի :

Ինչպէս բնական օրինաց , նոյնպէս և բարոյական կամ գրաւոր օրինաց աղբիւրը նոյն յաւիտենական իմաստութիւնն է . և ինձ այնպէս կը թուի երբ տէր Աստուած նախամարդն ստեղծեց՝ նորա սրտին և ոգւոյն մէջ դրոշմեց մի միայն խղճի այս օրէնքը : « Զամենայն զոր ինչ կամիցիք թէ արասցեն ձեզ մարդիկ , այնպէս արարէք և դուք նոցա » : Այս գերագոյն ու կատարեալ օրէնք մարդոյն համար շատ բնական ու բաւական էր , եթէ մարդն անեղծ պահէր զայն ու չը զեղծանէր : Ադամէն սկսեալ մինչեւ ի Մովսէս բոլոր նահապետներ զարմերով զաւակներով հանդերձ այս օրէնքով վարուեցան , որք առ հասարակ արդար հանդիսացան աշխարհի և Աստուծոյ առաջ :

Իսկ այն ապդ և ժողովուրդ , որ սոյն խղճի օրինաց գիրը քերեցին իրենց սրտէն , ապականե-

լով ապականեցան ու եղծաւ մարդկութեան պատիւը : Սորա համար Տէր Աստուած մի անդամջըր-հեղեղով լուաց երկրին երեսը , ողողեց ամբարիչտ մարդոց մեղքերը , միայն արդար նահապետ մի թողուց իրեւ արմատ նոր սերնդեան :

Գերագոյն օրէնսդիր Աստուած , որ զօրհանապազ մոլորեալ մարդոց ուղղութեան համար կը հոգայ . նա իւր ծառայն Մովսէս պատղամաւոր ընտրեց և նորա ձեռքով շատ բարոյական և գըրաւոր օրէնքները առւաւ իւր ընտրեալ ազգին : Այս ընդհարձակ և ընդհանուր օրէնքներէն կան , որ կրօնի պաշտաման կը վերաբերին , այսինքն քահանայական և ծիսական օրէնքներ . կան նաեւ որ մասնաւոր խրատներ և պատուէրներ են , որ սըրտի փափկութեան և գթութեան կը վերաբերին , զոր օրինակ . կը պատուիրէ որ զգառն ի կաթն մօր չը մորթեն . չը դպին ճնճղուկի բունին՝ երբ նա ձագեր հաներ է , կամ գրաւ չառնել երկանի մի քարն , որ տան պիտանի գործիքն է , և այլն :

Իսկ հիմնական և բարոյական մեծ օրէնքներ Տասնարանեայ պատուիրաններն են , որ բանաւոր մարդոց ընկերական կեանքին պարտուց և իրաւանց սահման կը դնեն . որք դարձեալ ամբողջ այս ամէն օրէնքներ խղճի օրինաց աղբիւրէն կը բդիին :

Մովսէս իւր օրէնքով իշխեց մինչեւ ի Քըրիստոս , եկաւ փրկիչ Յիսուս , որ չնորհք և ճշմարտութիւն էր . նա եւս իւր Աւետարանի ձայնով ու տառով նոյն խղճի օրէնք կրկնեց , « Զամենայն զոր ինչ կամիք թէ արացեն ձեզ մարդիկ և այլն » : Յիսուս այս յաւիտենական հիման վերայ հաս-

տատելով իւր չնորհական օրինաց բարձրագոյն շէնքը՝ ասաց . Մարդիկ, սիրեցէք միայն, և բաւ է : Մովսիսի օրինաց ծրագիրը թերի էր, Յիսուս լը- րացոյց զայն : Եւ գիտե՞ս թէ Բնչ զանազանու- թիւն կայ Մովսիսին և Յիսուսին մէջ, միոյն օրի- նաց գրքէն մահ կը հոտէր, իսկ միւսոյն՝ Աւետա- րան և կեանք . միոյն մէջ միշտ պատժական փո- խարինութիւն կար, իսկ միւսոյն՝ միշտ չնորհք եւ ներողութիւն . և ո՞չչափ, գիտե՞ս, մինչեւ եօթա- նասնիցս եօթն, այսինքն անկէտ և անսահման : Մովսէս սուրին յազդերէն կախած իսկոյն յանցա- ւորին վմիռ կը հատանէր . Յիսուս Պետրոսին ա- սաց, սուրդ ի պատեան դիր, զի ես կեանք տա- լու համար եկայ :

Ծունր դիր, որդեակ իմ, Յիսուսի ներող մար- դասիրութեան առաջ . պարանոցդ ծռէ և առ նո- րա քաղցր լուծը և փոքրոդի բեռն : Ծանիր, որ Աւետարանի բարոյական օրէնք մեր աշխարհի վայրենի վիճակը յեղաշրջեց . մարդոյն ստրկական վիճակը բարձրացոյց, դերութեան շղթաներ խոր- տակեց և ասաց . « Այսուհետեւ ազատ էք ի Քը- րիստոս Յիսուս : » Եթէ այսօր գիտութիւն և քա- ղաքակրթութիւն կը պարծի, այդ յառաջդիմու- թիւն՝ Աւետարանի ազատութեան չնորհն է . այս- պէս կը խոստովանին աշխարհիս բոլոր ողջամիտ իմաստասէրները :

Ծունր գիր նաև քո մեծադործ Արարչին ա- ռաջ, որ իւր ձեռակերտն տիեզերք այսպէս բնա- կան ու յաւիտենական օրէնքով կը կառավարէ : Եւ դու՝ մինչ կենդանի ես աշխարհիս վերայ, կոյր

թերեհաւատ մի լինիր , ինչպէս աշխարհիս անըզգամներ . և անմիտներ : Այլ Դաւիթի նման հիանալով դոչէ « Որպէս զի մեծ են 'գործ քո , Տէր , և այլն » : Եթէ հասնի քեզ , որ Նեւտոնի չափ ներկուն լինիս , ու քննես տիեզերաց օրէնքին բնական կարգն ու շարժումն , այնչափ առաւել զարմացիր և օրհնէ քո զարմանագործ Արարիչը : Եթէ ռամիկն սոսկ աշքով կը դիտէ աիեզերք , կը հաւատաց առանց գրի ու գիտութեան , յամենայն ժամփառք կուտայ և լիարերան կ'օրհնէ իւր ստեղծող . քո պարտիքն այլ ևս կը մեծնան ու կառաւելուն , երբ տիեզերաց օրէնքներ քննելով նորա գերագոյն Արարչապետ գիտութեամբ ճանչնալ կուզես . ծանիր ուրեմն , որդեակ իմ , որ հեթանոս իմաստասիրաց նման սոսկ աստուածագէտ չը լինիս առանց արժանապէս պաշտելոյ զայն :



ԴԱՍ Դ

ԱՆՀԱՌԱԾԱՐ ԿԵՍՆՔ

ՄՈՒԴԿԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՈՆ

Թէ մարդիկ աշխարհիս վերայ եւ արեւուն տակ անհաւասար կերեւին, հռդին ու գերեզմանի բառուերին տակ կը հաւատարին :

ՄԱՐԴԻԿ ՀԱւասար կը ծնին, անհաւասար կ'ապրին և հաւասար կը մեռնին :

Անհաւասարութիւն չ'է թէ միայն մարդկային ընկերութեան մէջ, այլ և ընդհանուր տիեզերքին մէջ կ'երեւի : Աչքդ բաց ու տես, որդեակ իմ, որ ամէն բան զանազան ու աննման կը տեսնաս, թէ երկնից երես թէ երկրիս վերայ թէ բովանդակ աշխարհիս բնական արարածոց մէջ և թէ մարդոյն նիւթական և բարոյական կեանքին մէջ : Մարդ պէտք է ափչի, հիանայ և օրհնէ իւր մեծագործ Արարիչը, որ ամէն բան զանազան և աննման յօրիներ է և և կը յօրինէ : Սորա մէջ կ'երեւի Արարչին անհուն զօրութիւն, անհուն իմաստութիւն և անհուն հանճար. որ ստեղծեալ իրաց թէ արտա-

քին ձեւն ու պատկեր և թէ ներքին բնական զօրութիւններ, ամենայն ինչ, իրարու աննման, զանազան ու անհաւասար են, և այս անհաւասարութեան մէջ ամենայն ինչ չափով ու կըռով համեմատ կարգադրելով անհաս և անհաւասարն Աստուած կը յափինէ և կը վարէ տիեզերք :

Աչերդ յառէ, որդեակ իմ, գէպ երկնից կամարը, ամենարուեստ Արարչին զարմանագործ ձեռաց հրաշակերտ գործեր տես, համայն աստղեր մեծութեամբ, լուսով, դրիւք և շարժումով զանազան են, արեւն և լուսին՝ զանազան են . չգիտենք ու չ'ենք զօրեր՝ տեսնալ թէ այլ եւս ո՞րչափ անզանազան էակներ կան երկնաշխարհին մէջ : Դարձիր գէպի մեր երկրագունդը՝ նոյնպէս ամենայն ինչ զանազան և անհաւասար կը տեսնաս : Յամաքն անհաւասար, լեռներն անհաւասար, դաշտերն անհաւասար. ազդիւրներ, վտակներ, գետերն առ հասարակ անհաւասար, ծաղիկներն անհաւասար, ծառերն անհաւասար, գայներով, ձեւերով, համով, հոտով և ներքին զօրութեամբ, բնաւին անհաւասար : Առյնպէս բոլոր կենդանեաց սեռն նոյն անհաւասար օրէնքին տակն են : Անհասարութիւն դու պէտք չ'է այնպէս հասկնաս թէ միայն տարասեռ իրաց մէջ կերեւի . այլ մի և նոյն տեսակին մէջ անհաւասարութեան հրաշք կը տեսնաւի : Մաղկանց թագուհին վարդ, իւր տեսակին մէջ գայնով, հոտով, ձեւով և նոյն իսկ թերթերով անհաւասար է . նուանապէս բոլոր ծաղիկներ : Խնծորենին իւր տեսակին մէջ պտուղներու մեծութեամբ և գայնով անհաւասար է . սոյնպէս բոլոր սլտղաւու-

ծառերը։ Մտիր մայրի անտառը, անդ եւս կը տեսնաս մեծութեամբ, բարձրութեամբ և ճիւղերու ընդարձակութեամբ իրարմէ անհաւասար են, մի և նոյն ծառի տերեւներն անգամ հաւասարութիւն չ'ունին։

Իսկ մարդն, որ քովանդակ արարածներէն հըրաշակերտն է, այդ անհաւասարութեան հրաշքն աւելի ունի։ թէ ներքին և թէ արտաքին ամէն հանդամանքներով անհաւասար է իւր ընկերին հետը։ Ուղեղն անհաւասար, միոքն անհաւասար, իղձն ու ոգին անհաւասար, վարքն ու բարք անհաւասար, երեւն ու դէմքն անհաւասար։ Ճեռն ու մատունք և ոտքն անհաւասար, քայլերն անհաւասար, ուժն անհաւասար բոլոր զդայական անդամներ՝ ճեւով ու զօրութեամբ անհաւասար։ Եւ նոյն իսկ մի մարդոյն վերայ անհաւասարութեան օրէնքը յայտնապէս կը տեսնուի, աչքեր, ականջներ, ճեռքեր, ոտքեր անհաւասար են իրարու։

Այս ընդհանուր նկարագրէն յետոյ, այժմ՝ ըսկըսինք մարդոց ընկերական կեանքին անհաւասարութեան նկարագիրը հանել, որ մեր այս դասին նպատակն է։

Մարդկային ընկերութիւն և քաղաքային աշխարհ նոյնպէս անհաւասար տարերքներէն կազմուած է։ Աշխարհ՝ աշխարհի հետ, ազգ՝ ազգի հետ, ժողովուրդ՝ ժողովուրդի հետ, թագաւոր՝ թագաւորի հետ, իշխան՝ իշխանի հետ, կառավարութիւն՝ կառավարութեան հետ, զօրութիւն՝ զօրութեան հետ, հարստութիւն՝ հարստու-

թեան հետ, և այլ չատ բաներ ու հանգամանք-ներ իրարու հետ անհաւասար են:

Եւ նոյն իսկ մի աշխարհ, մի թագաւոր, մի ազգ և լեզու՝ անհաւասար տարերքներով կազ-մուած է: Կը զարմանաս, թէ որ ասեմ քեզ, որդ-եակ, թէ աշխարհիս մարդկային ընկերութեան հզօրագոյն կազն անհաւասարութեան օրէնքն է, որ թագաւորը՝ հպատակ ժողովուրդին հետ, իշ-խան՝ գաւառին հետ, զօրավար՝ զօրքերուն հետ, առաջնորդ՝ եկեղեցւոյն հետ, ամուսին՝ ամուսնոյ հետ, ազգական՝ ազգականի հետ, բարեկամ՝ բա-րեկամի հետ կազեր է: և բոլոր անհատական մարդիկ այդ անլոյծ կազով միացնելով՝ մեր ըն-կերական տարերք կազմեր է:

Եթէ ասես, արդեօք ևս բարի ու լաւագոյն չէ՞ր լինէր որ այդ անհաւասարութիւն բնաւ չլինէր. թէ մեր կեանքի պիտոյք, թէ մարդոյն նիւթա-իսն և բարոյական զօրութիւններ, այսինքն հա-ւասար ծնելով՝ հաւասար ապրէինք. աշխատու-թիւն հաւասար, հացն ու սեղան հաւասար, մեծն ու փոքր հաւասար, մարդիկ առ հասարակ և ա-մենայն ինչ հաւասար:

Այն, որդեակ իմ, չատ անգամ քեզ նման կը դատեն միամիտ, բարեսիրտ և գորովահոգի մար-դիկ, կարեկցելով մեր ընկերական թշուառու-թեանց վերայ, որ մեծ մասամբ ապերջանիկ կեանք կը վարեն աշխարհիս երեսը. չարչարուած, աշխա-տութեան մէջ մաշուած, ստրկացած ու կորացած են երկաթէ լծերուն տակ, աղքատութեան ու կա-րօտութեան մէջ:

Այդ քո գատաստանը՝ մեղադրանք մի է, զոր մարդիկ մինչեւ երկնից նախախնամութեան դէմ կը հանեն, արտօնջելով որ աշխարհիս կեանքը անհաւասարութեան մէջ դրեր է, մին երջանիկ կը լինի և սւրիշի մի թշուառութեամբ կ'ապրի: Մին գլուխ կը լինի և միւսն ոտք, մին կը տիրէ և միւսն կընկծի, մին ցյադ կուտէ և միւսն սովամահ կը կորնչի: ևայն :

Խօսիմ քեզ, որդեակ, որ գատաստանիդ մէջ ուղղախոհ լինիս : Նախախնամող կարդադրիչ իմաստութիւնը կամեցեր է, . որ այդ անհաւասարութեան կապով մարդկային ընկերութիւն կանգուն և կենդանի մնայ: Եթէ մեր ընկերական կեանքը ամենայնիւ միորինակ հաւասար լինէր, այլ ևս ընկերական միութիւն չէր մնար աշխարհիս վերայ, բոլոր յարակցութեան կապերը կը քանդուէին. և պէտք էր յայնժամ մարդիկ ապրէին այնպէս՝ ինչպէս կապրին անասուններ :

Եթէ մեր ընկերական կեանք հաւասար լինէր, և մարդիկ երբէք իրարու ձեռնտուութեան չի կարօտէին, այնուհետեւ մարդոց մէջէն կը բարձուէր բովանդակ արդարութիւն, կ'եղծանէին առ հասարակ պարտք և իրաւունք, կեղծանին մարդոյն ազատութեան կամք և բնաւորութեան օրէնքներ, կը մեռնէր մարդոյն մէջ յառաջդիմութեան ողին և մրցումն, աշխատութիւն կը դադրէր և հանճարը մարդոց ուղեղին մէջ թմրած անշարժ կմնար: Ազատ մարդ՝ հարկի տակ պիտի ապրէր առանց բանաւորութեան: Այնուհետեւ մարդոյն կեանքը խորհրդով հանճարով ու յառաջդիմութեամբ չէր:

բարդաւաճեր, այլ կը չքանայր իւր մտաւորական կարողութեան մէջ, և հոն կը մնար մարդ՝ ուր կան այժմ Ափրիկէի և Ամերիկայի հեռաւոր վայրենիները. որոց կեանքը անասնոց կեանքէն եւս վատթարագոյն է. իբրեւ մարդ ծնիլ, մարդ անուն կրել, և անասնաբար ապրիլ, բարին ու չար, լրյուն ու խաւար չորոշել:

Մանիր ուրեմն, հանճարեղ որդեակ իմ, թէ մարդոյն Արարիչ՝ մարդն ընկերական, բանաւոր և ազատակամ ստեղծեր է. նորա լեզուն և ոտքեր բնական օրէնքով չէ կապեր, որ չի խօսի և չը յառաջադիմէ, ինչպէս անասնոց սեռ, որ խկզրաննէ անտի ուր որ են՝ անդ կան ու կը կենան: իսկ մարդոյն և ընկերական կեանքին մէջ մղիչ զօրութիւն մի կայ, որ ամէն կարդի և վիճակի մարդ կը մղէ և կը վարէ դէպի յառաջդիմութիւն. և այդ մղիչ ու շարժիչ զօրութիւնը՝ ուրիշ բան չէ, քան թէ իւրաքանչիւր մարդոց անհաւասարութեան վիճակ և կեանք:

Սորա համար բովանդակ մարդկային ընկերութիւնը մի զմիով ել և էջ առնելով՝ կը նկրտին և կը ձգտին և միշտ քան զընկերս առաւելու:

Թաղաւոր կը ձգտի իւր գահն իւր աթոռակիցներէն բարձր դնել, և մերթ եւս աշխարհակալել: Իշխանը կը ձգտի իւր իշխանակից ընկերէն յառաջ անցնիլ զօրապետն մը ձգտի իւր զինակիցներէն աւելի յաղթանակ տանել. հարուստն կը ձգտի իւր հաւասարէն աւելի եւս հարստանալ. աղքատն կը ձգտի իւր թշուառութենէն ազատիլ. բովանդակ ժողովուրդ կը ձգտի աշխարհիս հրա-

պարակին վերայ մէն մի իւր ընկերէն անցնիլ, կամ հաւասար երթալ և կամ եթէ չկարէ առաւելու՝ գէթ յետս մնալով չնուազիլ։ Այնպէս նաեւ գիւտի հանձարներ գերազանցել կը մրցին, գրոց հեղինակներ մատենագրելով կը մրցին։ Մամուլի ազատութեան խմբագիրներ ազատաբանելով կը մրցին։ ճարտասաններ իրաւաբանելով կը մրցին։ վարդապետներ ուսուցանելով և դաստիարակելով կը մրցին։ ձեզ նման պատանիք յառաջադիմելով կը մրցին։

Արդ երբ ընկերական անհաւասարութենէն կը ծնին այսչափ յառաջդիմութեան մրցանակ տանողներ, խելամտութեամբ նկատել պէտք է որ մեր ընկերական անհաւասարութիւնն՝ իւր յոռի ծընունդներ եւս ունի։ Անտի կը ծնի նախանձ ու մախանք, որոյ ապացոյց և օրինակ Յովսեփայ ծաղկեայ պատմուճանն է։ անտի կը ծնի բռնութիւն և զրկանք, երբ զօրաւոր զտկարն միշտ նուաճելով կը յաղթահարէ և կը հարստահարէ։ անտի կը ծնի անյադ արծաթսիրութեան մոլեգին ախտ։ անտի կը ծնի մեծամիտ տիրապետութեան ոգին, անտի կը ծնին այլ և այլ թշուառութիւններ, և կապականեն։ ընկերական կեանք։ Բայց ինչպէս ուրիշ գասերուդ մէջ բացատրած եմ թէ ամէն լրյս իւր խաւարն ունի։ ամէն գեղեցիկ իւր տգեղ մասն ունի, և ամէն առաքինութեան կետ՝ մոլութիւն համընթաց է, և առաքինութեան ծընունդ միշտ երկուորեակ է։ Երբ զրարին ծնի, չարն եւս անդէն գիտես թէ ի միասին ծնունդ կառնու, ինչպէս Եսաւ։ Եւ միթէ ծնողքն եւս

չար ու բարի զաւակներ մի և նոյն արգանդէն չե՞ն ծնիր։ Ուստի բնական օրինաց ուղիղ հետեւանքն է, որ անհաւասար կեանքէն անհաւասարութիւն ծնի։

Լիգուրկոս, Սպարտացի մեծ օրէնսդիր, ուզեց այդ բնական օրէնքին դէմ կառւիլ ու ջնջել զայն։ օրէնքավ ոսկին և արծաթ հալածեց իւր աշխարհէն։ որպէս զի ագահութեան ընչաքաղցութիւնը բառնայ հարուստներու սրտէն։ և հասարակաց սեղան հաստատելով օրինադրեց, որ աղքատ և հարուստ մի և նոյն սակաւապէտ սեղանին վրայ հաւասար ընկերութեամբ ուտեն զհաց։ Օրէնք դրաւ, որ հարուստներու հայրենի կալուածները երկրի ընդհանուր ժողովուրդին վերայ իրրեւ հաւասար ժառանգութիւն լարաբաժին լինին Եւ այսպէս բոլոր Սպարտացի ժողովուրդ, իրրեւ մի ընտանիք և գերդաստան կազմելով՝ կը հաւատայր այդ անքանաւոր օրէնսդիրն թէ՝ կարող եղեւ անհաւասարութեան օրէնքը խսպառ եղծել իւր աշխարհէն։ Ուստի մոտարերեց երթալ ի Դեղրիս պատղամ ընդունել թէ՝ արդեօք իւր օրէնքներ՝ դիցն առաջ հաճոյ եղեր ե՞ն, ու երբ իմացաւ թէ խիստ հաճելի թուեր են դիցն, անդ ինքնասով կամակար մեռաւ։ որպէս զի իւր օրէնքը նուիրագործելով կենդանի պահէ աշխարհին մէջ։

Երանի՛ թէ Լիգուրկոսի նման Անդդիոյ մայրերը նոր օրէնսդիր մի ծնէին, որ ելնէր կորտերուն աշխարհագրաւ կալուածներ հաւասար բաժնէր մակ ժողովուրդին վերայ, ինչպէս Լիգուրկոս, որ ոք մի հնձոյ ժամանակ՝ տեսնելով արտերուն մէջ

հաւասարաբաժին ցորենի խուրձեր, ասաց . « Ա-
հաւասիկ եղբարցս՝ հաւասար ժառանդութիւն . »
թերեւս կ'ակնարկէր հանճարեղ օրէնսդիրն, թէ
այլ եւս կոռւելու, զրկելու, բաժնելու պատճառ
չէ մնացեր :

Այլ և այլ ժամանակի մէջ, մեծ օրէնսդիրներ
ծնաւ աշխարհ . ումանք իրրեւ ժողովուրդին հայր,
ու մայր՝ ջանացին օրէնքով հայրենի ժառանդու-
թենէն ժողովուրդին բաժին հանել, և չը թողուլ
որ մշակ ժողովուրդն անժառանգ մնալով ստրկա-
նայ : Հողային հարստութեան մէջ, թերեւս փոքր
ի շատէ յաջողի միայն երկրադործ ժողովուրդին
համար . բայց միթէ հնարաւո՞ր է քաղաքային կամ
առևտրական հարստութիւններ հաւասար բաժնել
որ շահավաճառութեան, արուեստի, և մարդոյն
ինքնաշխատութեան իրրեւ արդար արդասիք հա-
մարուած՝ իրրեւ հողային կալուած հաւասարաբա-
ժին առնել . թողունք երկրին կառավարութեան
պաշտօնեանները, որ մէն մի՝ իւր աստիճանի բարձ-
րութեան չափով ռոճիկ կ'ստանայ :

Թողունք այս ամէն, որդեակ իմ, պէտք է ներ-
կային մարդ՝ ներկայ կեանքին վրայ մտածէ, հին
աշխարհ իւր հին օրէնքով ու ժողովուրդով ան-
ցեր է . այժմ Լիգուրկոսի և Սողոնի ժամանակն
եւս անցեր է . վասն զի քաղաքակրթութիւնը՝ նոր
դար, նոր օրէնք, և նոր ժողովուրդ կազմեց . ա-
մենայն ինչ իւր հնութենէն յեղափոխեցաւ : Քա-
ղաքակրթութեան ազատ օրէնք և նոյն իսկ Աս-
տուծոյ բնական օրէնք թոյլ կուտան, որ իւրա-
քանչիւր մարդ ինքնաշխատութեան արդիւնքն՝ ին-

քըն ազատապէս վայելէ , բաւական է որ արդար
լինի մարդ իւր աշխատութեան մէջ . Բաւական է
և երջանիկ կը լինի ժողովուրդ , եթէ երկրին օրէնք
և իշխանութիւն հսկէ . որ աշխատող ժողովուրդին
վաստակն ապահովի և նա կարենայ ազատութեամբ
միայն իւր վաստակն վայելել . և չէ թէ հարուստի
վաստակէն բաժին ընդունել : Ո՞րչափ չնորհակալ
կը լինի բաւականասէր ժողովուրդն , եթէ հարուս-
տըն եւս իւր արդար վաստակովն բաւականանայ ,
և չ'կոփէ ու չ'հարստահարէ զանաւագ ժողովուրդն :

Կրկնելավ այս դասն , գարձեալ կ'ասեմ քեզ ,
որդեակ իմ . քանի որ աշխարհ կայ , քանի որ
մարդիկ թէ բնապէս և թէ կրթութեամբ իրարմէ
կը զանազանին . անհաւասարութեան կեանք իբրեւ
մշտնջենաւոր անյեղի օրէնք պիտի տիրէ աշխար-
հիս վերայ . և դու եւս այս օրէնքին տակ պիտի
հնազանդիս ու ապրիս :

Ուսաի գքեզ կը յորդորեմ , որ ջանաս աշխա-
տութեանդ մէջ արդար լինել , բնաւ երբէք աշք
չը դնել ու չը նախանձիլ ուրիշի վաստակին . այլ
բարենախանճ լինելով՝ ճգտիր , որ դու եւս հա-
րցստանաս . բաւական է , որ արդար վաստակիդ
հետը զրկանք ու նենգութիւն չի խառնես : Տէր
Աստուած պատուէր տուեր է , որ մարդ իւր ճա-
կատին քրտինքով ապրի . զգուշացիր , որ կաթիլ
մի ուրիշ ճակատի քրտինքէն չը խառնես քո քըր-
տանց հետը : յուշ բեր այն առակը , զոր կը պատ-
մեն մեր մամերը . թէ՝ պառաւ կին մի այծ մ'ու-
նէր , և նորա կաթը վաճառելով կ'ապրէր . բայց
միշտ կը խարդախէր իւր կաթը՝ մեծ մասն ջուր

խառնելով։ Արդար Աստուած պառաւին չը խնայելով՝ պատժեց զայն, վասն զի կաթին մէջ խառնուած ջուրերը միանալով գետ դարձան, ու դաշտէն գլորեցին տարան պառաւին այծը։

Դու կը զարմանա՞ս այս առակին վերայ։ տեսնելով որ ներկայ աշխարհին մէջ ամէն կաթերը խառնուած են։ Բայց դու կաթդ արդար ու անարատ պահէ, միշտ երկնչելով Աստուծոյ արդարութենէն, որ կը հրամայէ ամպերուն, անձրեւով ու հեղեղով կորու սանել աշխարհիս անիրաւ նենդողները։ Զը մասաբերես երբէք թէ կարեմ ես հեղեղէն փախչիլ, տունս հեղեղատին քովը չ'եմ չիներ։ Կ'ուզես բարձրաւանդակի վերայ չինէ և ուր կը լինիս եղիր։ արդարութեան հատուցումն կը հասնի քեզ։ ջուրը կը թողու և գետնաշարժով կը քանդէ։ Սորա համար Դաւիթ վարանելով կատէր, Ես ո՞ւր փախչիմ, Տէր իմ, եթէ երկինք ենեմ։ դու անդ ես, և թէ գժոխան իշնեմ, անդ աւելի մօտ ես։ Ուրեմն արդարութեամբ գործէ, արդար վաստակով յառաջադիմէ, այլ եւս հարկ չը մնար քեզ Աստուծոյ ամենահաս ձեռքէն փախչիլ։



ԴԱՍ Գ.

ԽԾԽԱՆՁԵԹԵՒՆ

ԵՒ ՀՊԱՑՈՒ ԺԻԼԻՎՈՒՐԴ.

Իշխանութիւն՝ ժաղավարդին
եւ ժաղավուրդ իշխանութեան
միշտ պէտք են աշխարհիս
վերայ. երէ մին կամ միւս
պակասի՝ կը դադարի կամ
կը խոռոչի բնկերգարութեան
կետնի :

ՄԵՐ Առեղջող իշխան Արարիչ, երբ զմարդն
ստեղծեց, այնպէս կը թուի որ նախամարդոյն
սերունդին հաւասար իշխանութիւն տալով՝ զայն
տիրող իշխան կարդեց երկրին վերայ, ասելով թէ
« Աճեցէք և բազմացարուք և լցէք ու տիրեցէք
երկրին ». այսինքն ծովուն ու ցամաքին և այն
ամէն կենդանեաց, որ կը հպատակին մարդոյն իշ-
խանութեան տակ. թէ և ոմանք մարդէն առաւել
հուժկու և զօրաւոր են :

Դաւիթ մարդոյն այս տիրական իշխանութիւնը
հաստատելով կասէ. « Զամենայն ինչ հնազանդ
արարեր ի ներքոյ ոտից նորա, զիսաշն և զարջառ
և զամենայն ինչ » : Թէ և այնպէս կը թուի Սուրբ
գրոց պարզ իմաստէն, որ մարդ իւր առանձին
իշխանութեան սահման, և իւր ընկերին հաւասար

իրաւունքը ճանչնալով՝ պէտք չէր որ բռնանար ու տիրապետէր իւր ընկերին վերայ :

Բայց դու յիշէ, խոհական որդեակ իմ, եթէ քաջ խելամուտ եղար նախորդ գասիդ իմաստին, դու ինքնին կարող ես իմաստասիրել, որ իշխանութիւն մարդոց անհաւասար կեանքէն, խոռվար ոդիէն, տիրոզական բռւռն ձգտումն և զօրութենէն ծներ է : Եւ ինչպէս յայտնի է, մարդիկ հաւասար ձերքով, հաւասար ուժով, հաւասար խելքով և հաւասար տոհմային ազնուականութեամբ չեն ծներ : Ոմանք աչքի հետ մտաւոր լցոս ունին՝ ընկերին կառաջնորդեն . և ոմանց մտքին լցոս նուազ լինելով՝ կատիպուին այլոց ետեւէն երթալ . ոմանք զօրութիւն ստանալով կը տիրեն, և ոմանք ակար լինելով կը հպատակին :

Աշխարհի պատմութիւն ցոյց կուտայ, որ իշխանութեան առաջին խանճարուրն ընտանիքն է . և մինչեւ ցայսօր իրբեւ բնական օրէնք ընտանեաց հայրն կիշխէ բոլոր գերդաստանին վերայ, և ինքն իւր տան մէջ նախաթոռ բազմելով կը վարէ ու կը կառավարէ զայն . որպէս զի խաղաղութեան և երկիւղած հնազանդութեան մէջ կենայ ընտանեկան կեանքն :

Իսկ երբ ընտանիքէն ընտանիք կազմուելով՝ շատ ընտանիք ի միասին բնակեր են . բնական է որ խոռովութիւն, կադ ու կոիւ զանազան պատճառներէ յառաջ գալով մարդկանց հետ կ'աճի . հարկն ստիպեր է յայնժամ, որ ամէն տանուտէր հայրերու մէջէն մի տանուտէր հայր ընտրեն իբրեւ գատաւոր և իշխան, որ պատկառելի ծերու-

թեամբ, համբաւով, զօրութեամբ ու հարստութեամբ առաւելութիւն ունեցեր է միւս տանուտէրներէն . և աստի նախապէս կազմուեր է փոքրը տանուտերական իշխանութիւն : Եւ որչափ մարդիկ և ընտանիք բազմացեր ու տարածեր են աշխարհիս վերայ, այնուհետեւ իշխանութեան աստիճանն եւս աճելով և մեծնալով՝ հասեր է մինչեւ աշխարհակալութեան ծայրագոյն դիրք . որոց հզօր գաւազանին տակ փոքրիկ իշխանութիւներ կտմ իսպառ ջնջուեր են, և կամ նուաճելով հըպատակեր են :

Ուստի քաջայայտ կ'երեւի, որ իշխանութեան առաջին շառաւիդ՝ ընտանեկան արմատէն բուսեր է, փոքր ինչ մեծնալով ընտանիքէն ելեր բոլոր ցեղին վերայ տարածեր է թեւերը . աւելի եւս մեծնալով այլ եւ այլ ցեղեր իւր իշխանութեան տակ հնազանդութեան բերելով՝ տիրեր է շատ քաղաքներու և գաւառներու վերայ : Հուսկ յետոյ կարի զօրանալով, ու բարձրանալով կամ թագ կապելով՝ թագաւոր եղեր է և կամ այլ և այլ իշխանութեան առանձին գաւազաներն իւր միահեծան գաւազանին տակ նուաճելով՝ իրեւ կեսար, կայսրութեան բարձր տիտղոս ստացեր է :

Եւ այսպէս աստիճան առ աստիճան բարձրանալով՝ իշխանութիւնն իւր գագաթնածայր հասեր է : Բայց իշխանամիրութեան ոգին երբէք իւր ծայր և սահման չ'ունի : Քանի այս աշխարհ կայ՝ իշխանութեան գաւազաններ պիտի մրցին իրարու կ'ետ . և ով գիտէ, գուցէ ապագային մէջ բռվանդակ երկրագունդը մի գաւազանի տակ ընկճուի . և

միթէ այս բանն՝ աշխարհիս կայսրեր չե՞ն երա-
զեր։ Սակայն աշխարհի պատմութիւն և փորձ
շատ օրինակներով ցոյց կուտայ , որ իշխանութեան
կեանքն եւս իւր ծերութիւն և վախճանն ունի ,
և եթէ Նարուգոդոնոսորայ ծառին չափ բարձրա-
նալով իւր գաւաղանին շառաւիզներ տարածէ
բովանդակ աշխարհին վերայ . ի վերջոյ յերկիր կոր-
ծանելով կը տապալի ինչպէս Մակեդոնականն , Հը-
ռովմայ , Բաբիլոնի և Ասորեստանի իշխանութիւն-
ներ , որպէս զի ճանչնայ և խոնարհի մարդոյն մե-
ծամութիւն . թէ՝ Բարձրելոյն մշտնջենաւոր զօ-
րութիւնը կը տիրէ , և ժամանակի ահեղ տապա-
րով պիտի կտրէ ու կործանէ այն ամէն իշխանու-
թեան ծառերը , որ երկնից զօրութեան գէմ կը
բարձրանան և կը ջախջախեն ժողովուրդին կեանք
և զօրութիւն :

Եթէ մտաքերես , որդեակ իմ , ինչպէս մտա-
բերելով կը ցանկան ծայրայեղ ազատամիտներ . թէ
արդեօք աւելի լաւ եւս չէ՞ր լիներ , եթէ մարդ-
կային ընկերութիւն ազատ անիշխան ապրէր , և
իշխանութեան ծանրակիր լուծ չը կրէր իւր պա-
րանոցին վերայ . մարդն ինքնիշխան ինքնավար լի-
նէր , և չը պարտէր երբէք տուրք , հարկ , զին-
ուոր , և այլ բազմապատիկ օրինական և ապօրինի
բռնի պահանջներ վճարել :

Լուր , որդեակ իմ , ես պատասխան տամքեղ ,
ամենայն խելամոռութեամբ ուշ դիր : Մարդկային
ընկերութիւն բնաւ կարելի չէ որ առանց իշխա-
նութեան , առանց օրինաց , և առանց դատաս-
տանի և հատուցման սյս աշխարհիս վերայ ապրի

և խաղաղ կեանք վարէ . ինչպէս երկնից թուշուններ և լեռներու ազատ էրէվայրիներ , և այլն . Զէ թէ աշխարհիս այլ և այլ ազգեր , այլ նոյն իսկ մի ազգ և մի համազգի ընտանիք առանց հայրական իշխանութեան հնար չէ կառավարել . կը տեսնամք եղբայր եղբօր դէմ սուր կը հանէ , և համարիւնն՝ իւր համարիւն հարազատին արիւն կը թափէ . և մերթ եւս ստահակ որդիքներ հօր դէմ կապստամբին . ո՞ւր կը մնայ անընտանի օտարն օտարին հետ խաղաղութեամբ ապրի ու վարի :

Կան մարդիկ , որ կը մտածեն . թէ իշխանութիւնը հին աշխարհի վայրենի ընկերութեան համար պէտք էր , բայց արդ երբ գիտութեան լոյս և քաղաքակրթութեան դարը մարդոց հին կեանք վոխեց . վայրենական բիրտ ոգին զգօնացոյց . մարդ ճանչցաւ իւր պարտիք և իրաւունքը . ճանչցաւ իւր ընկերին հաւասարակշիռ իրաւունք . Աւետարանին հաւատալով ճանչցաւ նաեւ Օխոտաին աւանդած մարդկութեան ընդհանուր խզճին օրէնքը . «Զամենայն զոր ինչ կամիցիք թէ արասցեն ձեզ մարդիկ , այնպէս արարէք և դուք նոցա» :

Այլ եւս զի՞ պիտոյ է իշխանութեան նուաճող գաւազան , կամ սպառնացող սաստն ու սուր . օրէնք և իշխանութիւն խաժամուժ ամրոխին համար է , որ ոչ գիր գիտէ և ոչ օրէնք :

Երանի՝ թէ քաղաքակրթութիւն զմարդն այդ ծայրագոյն կատարելութեան տանէր . սուրն և իշխանութիւն բարձուէր աշխարհէս . Բայց դումի հաւանիր , որդեակ իմ , այդ կարծիք՝ ազատասէր մարդոյն երեւակայութեան երազն է : Թո-

ղունք Ասիական ազգեր , ուր քաղաքակրթութիւն գեռ չէ ծներ , և եթէ ծներ՝ տակաւին մանուկ է : Երթանք նւրոպա , ուր քաղաքակրթութիւն ծներ և զարգացեր է , և եթէ այդ եւս բաւական չես համարիր , անցնինք Ովկիանոս , երթանք Ամերիկա . ուր կը կարծուի թէ ազատ քաղաքակրթութիւնն իւր արբուն հասակն առեր է : Ուր ժողովուրդ առանց թագի , առանց կայսերական հզօր գաւազանի , մի նախագահով և օրէնքով կը կառավարուի . Արդ այնպէս համարենք , որ այդ աշխարհէն բարձուի նախագահն , վերնան բոլոր օրէնքներ , սուրն ու թնդանօթ ժողովուին դարբնոցին մէջ , միայն երկրագործին համար խոփ ու մանգաղ չինուին . և ընդհանուր Ամերիկայի կիսաշխարհին մէջ հրատարակուի այսպէս թէ . «Այսուհետեւ իշխանութիւն և օրէնք բարձուած է , դատաստան հատուցումն չիկայ այլ ևս . իւրաքանչիւր մարդ թող իւր ազատակամ իշխանութեամբ վարի , մարդն ինչ որ կարէ գործել ազատ է , իւր համար հսկող ոստիկան , ատեան և հարցափորձ չիկայ . » ևայլն :

Դու կը տեսնաս յայնժամ , թէ ի՞նչ կը լինի սորա հետեւանքն . այդ քաղաքակիրթ աշխարհն Ամերիկա , այդ հասարակապետական օրինասէր ժողովուրդն . մի վայրկենի մէջ վայրենի կը դառնայ , խուժանն և քաղաքակիրթն միանգամայն ի զէն կը դիմեն , ընկերութեան հրապարակն արեան ծով կը լինի . հարուստներն առ հասարակ կը կողոպատուին , խաղաղութիւն տեղի կուտայ , խոռովութիւն կը յուղի ինչպէս Ովկիանու ալիքներ . ով

որ բուռն է կը տիրէ , ով որ տկար է կը նուաճի բռնութեան տակ . վերջապէս ընկերութեան բոլոր շէնքեր կը քանդուին , կապեր կը կտրուին , մարդիկ կռուով ու արով կապառեն զիրեար մինչեւ յետին ճետն ու սերունդ :

Եթէ քաղցեալ առիւծ հանես իւր վանդակէն և արձակ թողուս ժողովուրդին հրապարակ , ի՞նչ կը լինի և ի՞նչ կը գործէ . այդ յայտնի է , իւր ժանիքներով ամէն բան կը ծախէ . այսպէս նա և մարդկային ընկերութիւն , թող քաղաքակիրթ լինի նա , եթէ զայն ի դուրս հանես իշխանութեան և օրինաց շրջափակ վանդակէն և արձակ թողուս , նոյն կը գործէ մարդն ինչ որ կը գործէ վայրենի առիւծն , թերեւս հնար լինի ողոքել զառիւծն երբ յագենայ , բայց մարդոյն կատաղութեան երբէք յագուրդ չիկայ :

Համոզուեցա՞ր այժմ , ազնիւ որդեակ իմ , որ աշխարհս առանց իշխանութեան չի կառավարուիր : Մի թէ հաւատալ կարելի՞ է , որ տիեզերք առանց Աստուծոյ և յաւիտենական օրինաց կառավարուի , նաւն առանց նաւապետի և զեկավարի ուղղուի . և կամ ամենի մին առանց սանձահարի : Ով չի գիտեր թէ մարդն քան զծին ամենի է . միայն իշխանութեան և օրինաց սանձն է որ կը վարէ զայն , ապա թէ ոչ՝ նա սանձակուսոր լինելով կը գահավիժի : Սորա ապացոյց և օրինակ քանիցս անդամ ցոյց տուած է ֆրանսիոյ այն մեծ ազգ , որ քաղաքակիրթ աշխարհին մէջ զինքն իրեւ փայլուն աստղ մի կը կարծէ , և երբ անիշխանութիւն կը տիրէր՝ այդ կրթեալ և ուսեալ ժողո-

վուրդը, խուժան կը դառնար և ամէն բան կը տապալէր, թէ և այն բան՝ իւր հայրենեաց փառք ու պարծանք լինէր։ Ես այնպէս կը դատեմ, որ քաղաքակրթութիւնը մարդոյն վայրենութեան բարքը կեղեւով մի պատեր է արտաքուստ։ Եթէ վերցնես իւր գլխէն իշխանին սուր և օրէնք՝ նա իսկոյն իւր բուն կրից ժանիքներով կը պատառէ այդ կեղեւը և հին վայրենութիւն դուրս կը հանէ։ Ուրեմն իշխանութիւն և օրէնք վերին տեսչութեան յաւիտենական կարգադրութիւնն է, որ պէս զի մարդիկ երկիւղածութեամբ և բանավարութեամբ ապրին ընկերական կեանքին մէջ։

Արդ սկսիմ համառօտել թէ՝ իշխանութիւն և ժողովուրդ ինչ պարտիք և իրաւունքներ ունին իրարու հետ, զորս կը չափէ արդարութիւն որ միշտ հաւասարակշիռ լինին և երկուստեք պարտքեր վճարուին և իրաւունքներ պահանջուին։

Իշխանութեան առաջին պարտիքն է ճանշնալ ու հաւատալ. թէ իշխանութիւն Աստուածակետական զօրութենէն իրեւ աւանդ տրուած է, ինչպէս Հոգին կը խօսի Սողոմոնի բերնով, «Ի տեառնէ տուաւ ձեզ հարստութիւնդ և իշխանութիւնըդ ի Բարձրելցյն. որ պահանջեսցէ զգործս ձեր և քննեսցէ զխորհուրդս»։ Իշխանութիւն իւր հաշիւն ու համար միայն Աստուծոյ չի տար. այլ և ժողովուրդին. երբ ինքն սահմանադրապէս ընտրուած է։ Իշխանութեան՝ մեծ ու նուիրական պարտիքն է, արդարութիւն սիրել և օրինաց իրաւացի վճիռը արդարութեամբ ի գործ դնել. առ այս կը յորդորէ Սողոմոն, որ դատաւոր և

Թագաւոր էր Աստուծոյ ժողովուրդին : «Սիրեցէ՛ք զարդարութիւն , որք դատէք զերկիր» : Իշխանութեան պարտիքն է , երկրին խաղաղութեան համար հսկել . հանապազ հոգալ ժողովուրդի բարօրութեան , բարդաւաճման ու յառաջդիմութեան համար . ուղղապէս խորհելով , որ իշխանութեան աթոռը՝ ժողովուրդի պատուանդանին վերայ հաստատուած է , և երբ ժողովուրդ կործանի՝ անշուշտ իշխանութիւնն եւս կանգուն չի մնար : Իշխանութեան իրաւունքն է չափով և արդարութեամբ ժողովուրդէն հարկեր պահանջել . բայց երբէք դատասաան և իրաւունք չէ , որ ծանր ծանր բեռներով ժողովուրդին թիկունք մինչև իգետին կորացուցանէ : Եթէ այսպէս ջլատէ ժողովուրդին ուժն և ոգին , ինքն ևս , իւր զօրութենէն կը թափի . զի ով չի գիտեր թէ ժողովուրդըն իբրև գործող անդամ կը համարուի կառավարութեան , երբ անդամներ ուժաթափին՝ գլուխըն եւս նորա հետ կուժաթափի , այնուհետեւ կը կորուսանէ իւր խորհուրդ . կը հիւանդանայ առաջնորդող գլխոյն առողջ ուղեղն և յայնժամ ժողովուրդին և իշխանութեան զօրութիւն միապէս կսպառին և երկրին վերայ կը հասնի և կը տիրէ աղետաբեր վիճակ :

Իշխանութիւն՝ երկրին և ժողովուրդին երաշխաւորող հաւատարիմ աւանդապահն է . այնպէս պէտք է պահէ այդ սուրբ աւանդը , որպէս թէ իւր կեանքն է , իւր փառքն է , և իւր կենդանատու հոգին և զօրութիւնն է :

Իշխանութեան զօրութիւն և հաստատութիւն ,

արդար և հաւասար օրէնքն է : Ուստի իւր ամենամեծ պարտիքն է . որ երկրին օրէնք անաշառ ճշգութեամբ հաւասարապէս գործադրէ տկարին և զօրաւորին վերայ . իշխանին և ժողովուրդին վերայ . չը թողուլ, որ զօրաւորներ հեստեն օրէնքին դէմը . և նոքա , որ կարգեալ են օրէնք պաշտպանելու՝ նոքա զեղծանին օրինաց մէջ և առ ոչինչ համարին զայն :

Իշխանութիւն իբրեւ օրինաց վրէժիսնդիր ու նախանձաւոր , իւր պարտիքն է . երկրին , ժողովուրդին և առաւել վարիչ պաշտօնեայներու մէջէն օրինաց զեղծումներն առ հասարակ բառնալ . ապա թէ ոչ , զեղծումներ յաճախելով յաճախելով՝ ի վերջոյ իշխանութիւնը կը բառնան , և կը մատնեն զայն օտարին ձեռք . վասն զի ներքին զեղծումներն զհայրենիք աւելի կը դաւաճանեն քան թէ օտար թշնամիք :

Իշխանութիւն պէտք է առաքինութեան պաշտպան հանդիսանայ և մոլութիւն սանձահարէ . իւր մեծ նուիրական պարտիքն է չը թողուլ երբէք , որ ժողովուրդին կեսնք և բարք ապականող զեղծումներ տարածեն երկրի մէջ , իբրեւ տարափոխիկ հիւանդութիւն . որ ի վերջոյ մահ և կորուստ կսպառնան ընդհանուր իշխանութեան երկրին : Միայն կրօնի պաշտօնէից քարոզն ու խրատ բաւական չէ հեստող ժողովուրդին կամք նուածել , այլ պէտք է նաև իշխանութեան սաստն և սուր . որ ձեռնհաս կը լինի զեղծումներ քաղաքային օրէնքով բառնալ :

Իշխանութեան պարտիքն է մեծ իմաստու-

թեամբ տնտեսել երկիրը . յթողուշ որ իւր հարս-
տութեան գետերը երթան թափին օտար ծովերու
մէջ , ի վերջոյ երկրին ջուրը ցամքի , դառնայ ծա-
րաւ մի անապատ . երկրին հարստութեան գետեր
երկրին մէջ պահելու համար՝ պէտք է զայն շրջա-
պատել օրէնքով և այն միջոցներով , զոր քաղա-
քային տնտեսութիւն կ'ուսուցանէ :

Եթէ իշխանութեան զօրութիւն կը յաւելու
երկրին հարստութիւնք և բարգաւաճանք , ուրեմն
իւր ձեռնհասութեան պարտիքն է ժողովուրդին
առաջը հորդել յառաջագիմութեան ճանապարհ .
բառնալ ամէն խոչ և խութեր , յորմէ ժողովուրդ
խուսաբելով կանգ կառնու շահավաճառութեան
առաջ . նաւարկութիւն բանալ , լեռներ և ձորեր
հարթել , արուեստ և արուեստագիտները քաջա-
լերել , երկրագործ ժողովուրդին ազատութիւն և
ապահովութիւն տալ , որ երկիրը մշակելով արդիւ-
նաւորէ : Քանի որ շահավաճառութեան մէջ իւր
երկրի բերքն ուրիշ երկիրներէ ընդունուած բեր-
քերուն հետ հաւասարակրութիւն չ'ունի , պէտք
է օրէնքով հաստատել և զսպել ժողովուրդին վա-
յելշասիրութեան ցանկութիւնը , որ իւր երկրի
բերքերով շատանայ , սակաւապէտ կեանքի մէջ
վարժելով զայն . թէ և ընդհանուր վաճառակա-
նութեան օրէնք ազատ է , բայց իւրաքանչիւր իշ-
խանութեան ազատ իրաւունքն է իւր երկրին շա-
հը առաւել պաշտպանել :

Իշխանութեան սրբազն պարտիքն է միշտ խա-
ղաղութիւն սիրել , խաղաղութեամբ կառավարել ,
և ամէն հնարաւոր միջոցներ . ի գործ դնելով պա-

տերազմ չը յարուցանել ոչ ուրիշ իշխանութեան դէմ, և ոչ պատճառ տալով ուրիշ իշխանութեան մը՝ իւր գէմը։ Բայց երբ դաշնակցութիւն կեղծուի, ուրիշ իշխանութիւն մի կը բռնանայ իւր վերայ և երկրին չահը կը վտանգի, յայնժամ իւր պարտիք և իրաւունքն է պատերազմ՝ հրատարակել, որ թշնամին չոտնհարէ երկրին ազատութիւն և իրաւունքը։ Միայն թէ պատերազմող իշխանութիւնն՝ առոտ պէտք է յիշէ Քրիստոսի առակը, որ նախատեսութիւն կուսուցանէ. նախ պէտք է հաշուէ իւր ծախսեր, և իւր զօրութիւնը՝ թշնամոյն զօրութեան հետ կշիռ դնելով՝ հասու լինի, թէ կարող է տասն հազարով պատերազմ տալ նորա դէմը, որ քսան հազարաւ կուգայ իւր վերայ։ Ապա թէ ոչ, մեծ խոհեմութիւն է հրեշտակութիւն առաքել և հաշտութիւն խօսիլ։ Վասն զի շատ բարի է և երկրին չահ, թէ մեծ և թէ փոքր զոհողութեամբ խաղաղութիւն հաստատել քան թէ պատերազմով երկրաւեր լինել. թող այն, որ երկրին գանձ կ'ապառի, այլ և արիւնով և մահով ժողովուրդին կայտառ որդիք զոհ կերթան և կսպառին պատերազմի դաշտին մէջ, որով ինքն պարտական ու պատասխանատու կը մնայ. « Զի թագաւորն ոչ միայն զիւրն տացէ պարտիս այլ և որոց եղեւ պատճառ մահուան »։

Իշխանութեան առաջին և վերջին մեծ պարտիքըն է ըստ, գիտութիւն և կրթութիւն տարածել ընդհանուր երկրին մէջ. իշխանութեան աթոռէն սկսեալ մինչեւ խոնարհ ժողովուրդին խրձիթը հաւատաբապէս լոյս ծաւալել. հաւատալով, որ երկ-

րին բարդաւաճանք ժողովուրդին լուսաւոր կըր-
թութենէն կը ծնի . ինչպէս որ թշուառութիւնը՝
նորա տգիտութենէն :

Նատ մեծ սիալ , և անիրաւ քաղաքականու-
թիւն է . եթէ ասէ իշխանութիւն , թէ՝ ժողովուր-
դը տգիտութեան և անզգայ թմրութեան մէջ պա-
հեմ . որպէս զի նա կոյր մնայ չանսաստէ իշխա-
նութեան դէմ , և ես անկասկած և գիւրութեամբ
իշխեմ : Որչա՛փ յոռի և յետադէմ է այս դրութիւն
քաղաքակիրթ աշխարհին լուսամիտ գաղափարին
առաջ , որ միշտ կը ջանայ ժողովուրդին մտաւո-
րական զարգացումն յառաջ տանելով լուսաւորել
զայն , հաւասարի լինելով որ երկրին յառաջդիմու-
թիւն և բարդաւաճ կեանքը ժողովուրդի լուսա-
ւորութենէն է , ինչպէս թշուառութիւն տգիտու-
թենէն . միթէ ինքնին երջանի՞կ կը լինի իշխանու-
թիւն , երբ ժողովուրդ թշուառանայ , և ի՞նչ փառք
ու պարծանք է թշուառին վերայ իշխել : Թշուառ
ժողովուրդին կեանք անշուշտ վախճան մի ունի .
նա կը մեռնի թէ վաղ թէ անադան . և երբ մեռ-
նի , իշխանութիւն այլ ևս ո՞ւմ վերայ կիշխէ , ան-
շէն և անապատ երկրին վերայ : Նոյն ժողովուրդի
թաղուած գերեզմանին մէջ կը թաղուի իշխանու-
թիւն . եթէ ջանայ նախ ժողովուրդը թշուառու-
թեան գերեզմանին մէջ թաղել , և բռնութեան
ծանր կափարիչով փակել նորա բերանը :

Այսչափ և այսպիսի են , սիրելի որդեակ իմ .
իշխանութեան պարտիքներ , զոր փոքր ի շատէ
միայն գրեցի . կան տակաւին ուրիշ պարտիքներ .
թողի զայնս որ դու ինքնին իմաստափերես : Երկ-

րին իշխանութիւն կը զեղծանի , եթէ այդ պարտիքներ չկատարելով ընդհակառակն վարի , եթէ թողու օրինաց արդարութիւն և միայն բռնի և սրով իշխէ : Եթէ մեղկանալով զեխութեան մէջ շուայտի , չխոկալով երբէք թէ թշնամին քաղաքը պաշարեր է . եթէ ժողովուրդին և իշխանութեան շահն իրարու հետ չկապէ , որ երկրին ընդհանուր շահն է . այլ միշտ ջանայ որոշել իշխանութեան շահն և այնպէս վարիլ , կամ անգիտութեամբ և կամ խորամանկութեամբ :

Իշխանութիւն կեղծանի իւր վարչութեան մէջ : Երբ անընտրող կը լինի , արժանաւորին և անարժանին յարգ մի կը ովալ կը չափէ . մերթ ևս պատիւ և բարձ կընծայէ նմա , որ երկրին շինութեան հիման մի քար չէ դրեր . կը թողու լաւն ու կարող , և ժողովուրդին կառավար կը դնէ այնպիսիներ , որոց միտք թափուր է կառավարութեան ուսմունքէն և օրէնքէն , որք առաւել կարօտ են կառավարուելու քան թէ կառավարելու :

Իշխանութիւնն անիրաւութեամբ կը զեղծանի . եթէ դատաստանի առաջ նուիրական չհամարի օրինաց հաւասարութիւն , աշառելով խտրէ տեառըն և ծառային դատաստան , զօրաւորին և տըկարին դատաստան , և թողու որ դատաւորաց կամք՝ դատարանին մէջ իրբեւ օրինադիրք վճռէ :

Իշխանութիւն չարապէս կը զեղծանի եթէ երկրին չարերը չպատժէ արդարապէս , այլ թողու որ չարեր աճելով բազմանան ու հեղձուցանեն բարիքները . նոյնգունակ մեծապէս կը զեղծանի , երբ բարիքները կը թողու անվարձ անպսակ , նո-

քա որ երկրին յառաջագիմութեան անձնանուէր կը լինին , որ հաւատարմութեան ուխտն անդրժելի կը պահեն :

Իշխանութեան զեղծումներ շատ և բազմագիմի են , դժուարին և երկար բանից կարօտ է նորա նկարագիրը հանել . բայց դու թէ հետաքրքիր լինիս , հետազօտես երկրին իշխանութեան և ժողովուրդին կեանքը , զեղծումներու երեւոյթ պատկերը յանդիման կը տեսնաս :

Այլ եւս կը մնայ ինձ խօսիլ , որդեակ իմ , թէ ժողովուրդին պարտիք և իրաւունքն ի՞նչ է առ իշխանութիւն . և բովանդակել այս գասն՝ որ բաւական ընդարձակեցաւ , և դու գիտես , որ գորա պատճառը նիւթին և առարկային մեծ կարեւորութիւնն էր :

Ինչ որ իշխանութեան պարտիքն էր , այն է աւասիկ ժողովուրդին իրաւունք : և ինչ որ իշխանութեան համար իրաւունք է , այն է տիրապէս ժողովուրդին պարտիք :

Ժողովուրդին առաջին պարտիքն է ճանշնալ ու հաւատալ . թէ իշխանիւթեան գաւազանը երկընքէն գէպ ի երկիր ձգուեր է . նորա վերին ծայրը տիեզերքը վարող պետական աթոռին կը ցուած է , և միւս վարի ծայրը աշխարհիս վերայ հաստատուած է : Սորա համար Սուրբ Պօղոս կասէ . իշխանութիւն յԱստուծոյ է , և որ ենն՝ յԱստուծոյ կարգեալ են : Թողունք այս . մեծ քան զՊօղոսն՝ Յիսուս վարդապետ . Պոնտացի դատաւորին առաջ վկայեց , երբ Պիղատոս կասէր . Եթէ ես իշխանութիւն ունիմ դքեզ խաչ հանել կամ ար-

ձակել . Յիսուս պատաժան տուաւ «Աչ ունէիր դու իշխանութիւն ի վերայ իմ և ոչ մի , եթէ ոչ էր տուեալ քեզ ի վերուստ» : Քրիստոս և քրիստոնէան կրօնի ուսուցիչներ առ հասարակ կը պատուիրեն ճանչնալ իշխանութիւնը , պատուել , հնագանդիլ , երկնչել . և տալ կայսերին՝ կայսեր . եւայլն :

Ժողովուրդին պարտիքն է իշխանութեան հետ ճանչնալ նաեւ երկրին ընդհանուր օրէնքները , քաղաքային օրէնքներ , դպասատանի օրէնքներ , արրոց և հարկի օրէնքներ , կալուածական օրէնքներ , եւայլն : Վասն զի իւր պարտիք և իրաւունք այս օրէնքներէն կորոշին , և օրէնքն է որ կը չափէ և կը կշռէ ժողովուրդին և իշխանութեան իրաւունք և պարտիք : Ուստի ժողովուրդն ամենայն խնամով պէտք է սորպի երկրին օրէնքներ . որպէս զի օրինավարներ ժողովուրդի անգիտութեան և ապշութեան համար չը համարձակին նոյն իսկ օրէնքով հարստահարել , որոց օրինակ բազում անդամ և բազում տեղ կը տեսնամք աշխարհին մէջ :

Ժողովուրդ երբ իւր հպատակութեան պարտիքներ սրտի մաօք և անթերի կը կատարէ , նա իրաւունք ունի իշխանութենէն պահանջել այն ամէն պարտիքներ , զորս գրեցի ի վեր . և երբ իշխանութիւն մի իւր իրաւունք ժողովուրդէն լիսմին կ'ըստանայ և առ ժողովուրդն ունեցած պարտիքներ կը մոռնայ , այլ եւս ժողովուրդ Բնէ միջոցաւ կարող է այդ անվճար և մոռացեալ իրաւունքը ճեռք բերել :

Իսկ դու , ազնիւ որդեակ իմ , որ ընդ իշխանու-

Թեամբ ծնած ես և ժողովուրդին կրթեալ զաւա-
կըն ես , պարտիքներդ սրտի մտօք տար ու կա-
տարէ , իբրեւ քրիստոնեայ ուշ դիր Պօղոսի խրա-
տուն , որ կը յորդորէ հնազանդ լինել իշխանու-
թեանց . և հատուցանել որում զպարտո՞ զպարտ ,
որում զմաքս՝ զմաքս , որում զերկիւզ՝ զերկիւզ ,
որում զպատիւ՝ զպատիւ . եւայլն : Նոյն Պօղոս
կասէ թէ՝ իշխանութիւն վայրապար չ'է կապեր սու-
րը իւր մէջք , որով աշխարհիս չարագործներուն
հարուած կսպառնայ . իսկ եթէ դու կուզես իշ-
խանութենէն չերկնչիլ և ազատ վարել կեանքդ՝
բարիք գործէ . զի բարութիւն և բարեգործն , ա-
ռաքինութիւն և առաքինին միշտ ազատ են այդ
երկիւղէն ու հարուածէն :

Բայց թէ մերթ ընդ մերթ բարութեանդ փո-
խարէն ապիրատութիւն ընդունիս , յայնժամ յիշէ
Պետրոսին խօսք որ կասէ . « Ձինչ երախտիք ի-
ցեն , եթէ յորժամ մեզանչիցէք տանջիցիք և համ-
բերիցէք . այլ եթէ զբարիս գործիցէք , չարչարի-
ցիք և համբերիցէք . այն չնորհք յԱստուծոյ են ,
քանզի ի դոյն իսկ կոչեցարուք » . եւայլն :

Թանի որ աշխարհ կայ , չարչարանքներ աշխար-
հէս չ'են բարձուիր , միայն թէ կը պակասին . ժո-
ղովուրդ և մարգիկ անհրաժեշտ է պիտի կրեն չար-
չարանքներ . թէ առաւել թէ նուազ , թէ իշխա-
նութեան ձեռքէն և թէ նոյն իսկ իրենց ձեռնէն ,
թէ իբրեւ մեղապարտ՝ յանցաւ որ դատուելով , և
թէ իբրեւ անպարտ՝ անիրաւի կրելով :

Կը փափաքիմ քեզ համար , որդեակ , որ ոչ դու
անձինդ համար չարչարանք քու ձեռքովդ պատ-

րաստես և ոչ նաեւ յանցապարտ լինիս , որ իշխաւ նութիւն զքեզ չարչարէ . բայց թէ աշխարհի ծանրացող ձեռք զքեզ և ժողովուրդ հաւասար չարչարէ , այդ եւս քո քրիստոնէական պարտիքն է , զոր պէտք է յօժարաբար տանիս ու համբերես և մինչեւ իսպառ համբերես , հաւատալով թէ վախճանը կեանք է :



ԴԱՍ Ե.

ԺՈՂՈՎԱՌԻԴ ԵՒ ԱԶՆԱԽԱԿԱՆՔ ԱՇԽԱՐՀԻՍ

Ճշմարիւա ազնուականութեան
նշան՝ հոգւոյ մեծութիւնն է .
ոչ հոգն է եւ ոչ ոսկին , ու
որ ունի զայն : Նա է աշխար-
հիս աթրապէս ազնուական .ո-
րոյ փառք միայն ժողավրր-
դասիրութեան մէջ կը փայի :

ԱՇԽԱՐՀԻՍ խոնարհ ժողովուրդին և ազնուական
կոչուած բարձրագոյն կարգին դասը պիտի խօսիմ
քեզ , անտոհմիկ որդեակ իմ , գու գիւղական ժո-
ղովուրդի մի զաւակն ես , ժողովուրդի մէջ կ'ազ-
րիս , պէտք է գիտնաս ու ճանչնաս նաեւ այն բարձ-

բարդոյն դասն մարդոց, որոց կեանքն ու վիճակ
հասարակ ժողովուրդի կեանքէ շատ բարձր է, ու
շատ զանազանութիւն ունի :

Դու պէաք է լիովին գիտնաս ժողովուրդին
կեանք և գործեր, և թէ Բնչ են հարուստ աղ-
նուականաց դասն, իրենց կեանք և գործեր, և
իրաքանչիւրին պարտիք և իրաւունք աշխարհիս
վերայ :

Բոլոր երկրագնդիս երեսը բնակող մարդկային
ընկերութեան ամենամեծ մասն միշտ ժողովուրդն
է . և նա է ծներ ամէն կարգի աղնուականաց և
իշխանաւորաց դասն . կայսր, թագաւոր, իշխան,
պայազատ, ամէնքն եւս ժողովուրդի զաւակներն
են, զի ժողովուրդն է բուն արմատ և մայր ամէն
կարգի և վիճակի մարդոց :

Աշխարհիս մեծագոյն շինարար մասն ժողովուր-
դըն է . դաշտային գիւղերու բնակիչ աշխատաւոր
և հաց վաստկող մշակ՝ ժողովուրդն է . նմանապէս
քաղաքներու բնակիչներն մեծ մասամբ ժողովուր-
դըն է : Խիստ փոքրագոյն մասն կը կազմեն աղ-
նուականաց կարգն, որք ընդհանրապէս մայրաքա-
ղաքաց և քաղաքներու մէջ կը բնակին :

Ժողովուրդ մարդկային ընկերութեան մէջ՝
բուն մարդոց կեանք և պիտոյք կազմող և պատ-
րաստող ամենաշխատ և պիտանի օգտակար մասն
է : Ժողովուրդն է, որ իրրեւ երկրագործ մշակ
կարգիւնաւորէ երկրին բարերերութիւն, և կը մա-
տակարարէ աշխարհին : Նա է, որ հաց, միս, իւղ
և այլ կաթնեղէն նպարներ կը հանէ : մեր սեղան :
Նա է որ այդ եգորքութեամբ մեր խնձոյից բա-

Ժակներ պատուական գինւով կը լեցնէ : Ժողովուրդ իւր տնկած պարտիզէն բազմազան ազնիւ պտուղներ հանելով՝ քաղաքացւոց և ազնուականաց սեղան առ հասարակ կը զարդարէ : Նա է, որ բուրդով, փափկասեր այծենով, բամբակով . վըշով, և այլ բազմատեսակ բուսական նիւթերով՝ ժողովուրդին պարզ հանդերձ և ազնուականաց պերճանքներ կը պատրաստէ :

Ժողովուրդ իբրեւ արհեստաւոր, բիւր հազար տեսակ արուեստական աշխատութեամբ մեր կեանքի անհուն անհամար պէտքեր կը հոգայ, մանաւանդ քաղաքակիրթ աշխարհին մէջ, ուր կառաւելուն միշտ նորասիրութեան պերճանքներ : Նա կը շինէ ու կը զարդարէ թագաւորի պալատ, իշխանաց ապարանք և այլ ամէն ինչ, որ կը վերաբերի նոցա ճոխ կեանքին ու վայելման :

Ժողովուդն իբրեւ գիւտերու և արուեստներու հնարիչ՝ իւր արդիւնք և յառաջադիմութիւն շատ մեծ է . և այս մասին մէջ երբէք համեմատութիւն չունի, այլ միշտ կառաւելու ազնուականաց դասէն :

Ժողովուրդ իբրեւ աշխատութեան մայր՝ բոլոր ծովագնաց նաւերուն համար նաւապետ և նաւաստի կուտայ . բոլոր մեծամեծ գործարանաց համար գործաւոր մշակ կուտայ, բոլոր հանքերուն համար գետնի տակ անարեւ անլոյս խորերուն մէջ հանքահաներ կ'ուտայ, համայն երկրագունդ բեղմնաւորելու համար հողագործ աշխատաւորներ կ'ուտայ :

Ժողովուրդ իբրեւ գրականութեան անխոնջ մը-

շակ , իրբեւ մատենագիր հեղինակ , իրբեւ լուսաւորութեան և յառաջադիմութեան առաջնորդ՝ աշխարհ թուղթերով , գրքերով ու թանգարաններով լցոյց , խաւարն ու մութ փարատեց մարդոց մաքէն և լուսաւորեց մարդոյն մտաւորական աշխարհ :

Կը խելամտի՞ս , որդեակ իմ , թէ աշխարհիս վերայ մարդկային ընկերութեան կեանք պահող և արդիւնաւորող ժողովուրդին աշխատութեան կեանքն է : Թող այդ ամէն արտաքին մասերը , որ ժողովուրդի աշխատութեան կեանքէն կը բղիի , և աշխարհ նոցա վստակով կը յագենայ ու կը ճոխանայ : Ժողովուրդ նաեւ իւր ներքին ամուսնական և ընտանեկան կեանքին մէջ չատ պտղուռ և բարգաւաճ է . գիւղեր ու քաղաքներ նորա զաւակներով կը լեցուին . դրախտի օրհնութիւն իսկապէս ժողովուրդ կը վայելէ , որ միշտ աճելով բազմանալով կը լնու երկիրը . և աշխարհ իւր որդիքներով չէն կը մնայ :

Բայց դու , ժողովրդասէր որդեակ իմ , արդեօք կը սրտմտիս կամ անիրաւութի՞ւն կը համարիս երբ կը տեսնաս աշխարհիս կարգն ու դատաստանը . զի երբ ժողովուրդն ընդհանուր մեր ընկերական կեանքին մէջ այսչափ մեծամեծ պարտիքներ կը կատարէ . զօրհանապազ չարաչար կը տքնի և քիրտն կը թափէ մարդկային յառաջադիմութեան համար . ո՛հ , քանի՞ դառն ու դժուար է որ իւր յառաջ բերած անբաւ արդիւնքէն խիստ նուազ և յոռի մասն կը վայելէ : Ազնիւ ցորեան և պառուական հացն՝ ազնուականին կուտայ , և ինքն գա-

րի ու կորեակ կուտէ , նմանապէս գէր կենդանիներ նոցա բաժինն է , ժողովուրդ թանապուրով և յամաք հացով կ'ապրի . անուշահամ գինին նոցա բաժինն է , ժողովուրդ պարզ ջրով իւր ծարաւ կ'անցունէ . բեհեղն ու ծիրանին և տարազագործ կերպասներ ազնուականին կուտայ , և ինքն պարզ կոտաւ կամ շալ կը հագնի . շքեղ ու փառաւոր ապարանքներ կը չինէ նոցա համար , ինքն անշուք տուներու և մերթ եւս խրճիթներու մէջ կապրի :

Ժողովուրդի մեծագոյն մասն երկրիս վերայ միշտ կարօտ ու չարչարուած կեանք կը վարէ : Նա ոչ միայն արեւելքին մէջ , այլ և արեւմտեան քաղաքակրթութեան աշխարհին մէջ , ուր լոյս տարածուած է , տակաւին ժողովուրդին մեծ մասն ծանր աշխատութեան և կարօտութեան մէջ կը մաշի : Զի ես լսեր եմ և հարցնելով գիտեմ թէ՝ եւրոպիոյ գործաւոր մշակներու կեանք շատ դառն է , որոց ապրուստ միայն օրական պարէն ու հացըն է , գործաւորին համար գանձ ու ապագայ չը կայ , գործաւոր միշտ գործաւոր կը մնայ . և գործարանապետ անհուն հարստութեան տէր կը լինի :

Այդչափ և այդպիսի են , ազնիւ որդեակ իմ , ժողովուրդին գործունեայ կեանք և ընդհանուր աշխարհի մատուցած մեծամեծ արդասիք , յորս մեք հարեւանցի տեսութեամբ անցաք , և պէտք է խոստովանիլ , որ քաղաքակիրթ աշխարհին մէջ ժողովուրդ մեծ տարերք կը կազմէ , և յառաջադիմութեան ընդարձակ ասպարէզը՝ ժողովուրդին աշխատութեան ոտք չափեց :

Այժմ դառնամք և ազնուականաց դասուն նը-

կարագիր հանենք , որոց դիրք , կարգ , աստիճան , պաշտօն , պարտիք և կենցաղավարութիւն աշխարհի առաջի ժողովուրդի խոնարհ դասէն շատ վերագոյն կը համարուի :

Այս վերակարգ դասուն կը պատկանի աշխարհավարութիւն , աշխարհաշինութիւն , քաղաքագիտութիւն , դատաւորութիւն և այլն : Դոքա քան զժողովուրդն առաւել պէտք է կրթեալ լինին , հանճարեղ , իմաստուն և խորհրդական լինին , վասըն զի երկրին կառավարութեան սանձն իրենց ձեռքն է , երկրին շահն ու վնաս կշռող նժարք՝ իրենց խելքն է : Այդ վարիչ իշխանական կարգն է որ կը խորհի , կը կարգագրէ , և յառաջ կը վարէ քաղաքակրթութեան կառք :

Թողունք այդ ազնուական դասուն աշխարհավարական մասն , որուն համար արդէն նախագոյլ-խոյն մէջ գրեցի թէ ի՞նչ է իշխանութեան պաշտօն և պարտիք :

Այժմ խօսինք ազնուականաց դասուն այլ և այլ հանդամանաց և պարտուց մասին : Նոքա որոց բախտ յաջողեր է հարուստ և մեծատուն լինել աշխարհիս վերայ . նոքա մեծ պարտիքներ ունին կատարելու , « Զի որում շատ տուաւ , շատ խնդրեսցի ի նմանէ » ասաց Քրիստոս :

Բայց դու , հարցասէր եղիր , որդեակ իմ , քննենք թէ ո՞յք են աշխարհիս վերայ իրօք և ճշմարիտ ազնուականներ , ինչպէս Աբրահամ , Յակովի և Յովի , որոց արդար վաստակին հետ զըրկանք չէ խառնուած , և ո՞յք են անարդար և նինդող ազնուականներ , որոց հարստութեան հողն

ու ոսկին յանիրաւութենէն գոյացեր է . կամ տիրապետելով , կամ զրկելով ու հարստահարելով և կամ նենդութեան բիւր հնարքներ ի գործ դնելով՝ մեծատուն , իշխան , պայազատ և ազնուական եղեր են աշխարհիս վերայ : Այս անարդար ազնուականաց նկարագիր կը հանէր երբեմն ծսային . « Վաճառականք ձեր խառնեն զջուր ընդ գինի , իշխանք ձեր ապատամբ՝ գողակիցք են գողոց , սիրեն զկաշառս , վրիժագործք , որրոց իրաւունս ոչ առնեն և դատաստանի այրեաց՝ ունկն ոչ դընեն » ևայն . որով ցոյց կուտայ Մարգարէն թէքանի՞ մեծ անիրաւութիւններ կը գործէին իսրայէլի ազնուական կոչուած իշխաններ : Դոքա շատ անգամ եւս խիստ խորամանկ միջոցներ ի գործ դնելով կալուածատէր կը լինէին . ինչպէս կը յայտնէ դարձեալ նոյն մարգարէն . « Վայ այնոցիկ որ յարեն զտուն ի տուն և ագարակ առ ագարակ մերձեցուցանեն . զի զընկերին հանիցեն . միթէ միայն բնակելոց իցէք յերկրի : » Աստուած այսպէս կը դատի աշխարհիս անիրաւ ազնուականներ , բայց աշխարհիս դատաստանը այսպէս չէ . զի ով որ ոսկեգանձ ունի , ով որ կալուածատէր է , ով որ իշխան է և կը տիրէ՝ նա միշտ աշխարհիս աշքին դատաստանով ազնուական կը համարուի :

Իսկ արդար վաստակով և ուղիղ աշխատութեամբ հարստացած ազնուականներ շատ հազուագիւտ են աշխարհիս վերայ , եթէ որոնենք՝ կը դտնենք առաւել վաճառական , արհեստաւոր և երկրագործ կարգերուն մէջ : Դու այնպէս չըմբըռնես . թէ իրօք մեծահարուստ ազնուական լինեա .

Եւ համար Անգղիացի լրտերուն չափ անհուն ոսկի և հող ունենալու է . վասն զի ճշմարիտ ազնուականութեան յատկանիշ միայն հողն ու ոսկին չէ , որ սոսկ նիւթական հարստութիւն կը կազմէ , այլ առաւել մեծ է հոգւոյն և բարուց ազնուականութիւն , որ բարոյական առաքինութեան օրէնքներ կը պահէ , որ ժողովրդասէր է և ամբարհաւամ լինելով չի մեծամտեր , որ ագահելով , ժըլատելով ձեռք չի կծկեր , այլ իւր հարստութեան ոսկին հասարակաց բարւոյն համար առատ կը սփռէ . որ առանց փառասէր ոգւոյ կը մեծագործէ ուղիղ և բարի նպատակով ժողովուրդի յառաջդիմութեան համար , որ լուսոյ տուներ ու գպրոցներ կը կանգնէ . գրատուններ և թանգարաններ . կը հաստատէ . հեղինակ մատենագիրներ կը քաջալերէ . գործարաններ կը բանայ . ազգին ազքատ ու պարապ որդիքներուն գործ կը գտնէ , բարեպաշտ ու մարդասիրութեան ոգւով ազքատանոց , հիւանդանոց շինելով ազգին թշուառներ կը պատապարէ . Յովքայ նման իւր ոչխարաց բուրդերէն բաժին հանելով մերկերուն թիկունք կը ջեռուցանէ , և այսպէս կը կատարէ իւր պարտք ճշմարիտ ազնուականն . և նա կը խորհի զօրհանապազ Աստուծոյ և աշխարհին առաջ միայն մեծագործ առաքինութեամբ բարձրանալ . Նա իւր առաքինութեան վարձ՝ երբէք ժողովուրդէն երկըրպագութիւն չի խնդրեր , միշտ յիշելով Յիսուսի պատուէրը՝ Աջով կը գործէ և ձախը չիմանար . իւր փառք և սրտին հաճոյքը՝ միայն իւր առաքինութեան մէջ կը շատանայ :

Տեսցուք նաև անիրաւութեամբ ու զրկանօք հարսացած ազնուականաց գործն ի՞նչ է :

Այդպիսի սուտանուն ազնուականաց ճանապարհ շատ բազմադիմի է աշխարհիս վերայ : Ոմանք հարստահարելով, յափշտակելով կը հարստանան, ոմանք դիպուածով կը հարստանան, զոր բախտ կը համարին, և յանկարծ մի աւուր մէջ մեծնալով ազնուական կը դառնան, միայն թէ՝ այն հարրստութեան գանձեր զոր մարդ առանց աշխատութեան դիւրութեամբ կը գտնէ, շատ բնական է որ զայն դիւրութեամբ կը կորուսանէ : Այսպիսեաց օրինակներ շատ կան աշխարհիս վերայ, և մեք մեր ժամանակի մէջ տեսանք ու տակաւին կը տեսնանք : Ուր են Պօլսոյ մեր հին հարուստ ու Հայ սեղանաւորներ . որոց վստահութեան յանձնուած էր Ցէրութեան գանձ, այսօր նոցա որդիքներէն շատերը հայրենի ժառանգութեան մեծագանձ հարստութեան հետ՝ կորուսին նաեւ ազնուականութեան պատիւ : Ոմանք եւս հնարագէտ և ամէն խարդակ միջոցներ ի գործ դնելով կը հարստանան . իսկ ոմանք գիտես թէ ի բնութենէ արծաթասէր բարեք ունենալով անհնարին ագահութեամբ և ամենախիստ խնայութեամբ կեանք վարելով կը հարստանան : Զը մոռնանք, յիշենք նաեւ այս կարգին հետ այն կալուածատէր ազնուականներ . որոց հարստութիւն կը կարծուի թէ հողն է, բայց հողէն առաւել հողագործ մշակներու ճակատէն թափուած քրտինքն է : Այդ անգութ և խստաբարոյ կալուածատեարք իրենց վաստակաւոր մըշակներ աշխատութեան մէջ զօրհանապազ կը մա-

շեցնեն . կամ կիսավարձ և կամ վարձահատ առնելով՝ խեղճ մշակները՝ միշտ մշակ մնացեր են , և կալուածատէրը՝ ազնուական դարձեր է : Թող վարձահատութեան զրկանք , մի ուրիշ քան զայս առաւել սոսկալի զրկանքներ պատմեմ քեզ , որոց ես ինքս ականատես եմ և հարցափորձելով տեղեկացայ :

Միանգամ մայրաքաղաքիս Հայ ազնուականաց միոյն ագարակը դնացի , որուն մէջ շատ ծառայող մշակներ կային , և ես այն պահուն պատահեցայ երբ մշակներ աշխատութենէն դադրած նատեր հաց կ'ուտէին . դիտեցի , որ իրենց կերակուր միայն սեւ հաց և խաշած լուրիա էր , ուրիշ ոչինչ : Ես այնպէս կարծեցի որ մի աւուր պատահումն էր այս , ուստի հարցուցի ագարակատէր ազնուականին . թէ ձեր մշակներու կերակուր միշտ այս է , մանաւանդ Զատիկի այս մեծ օրերը : Այո՛ ասաց , տարին բոլոր դոցա կերակուր այդ է միայն . մը-շակներու համար Զատիկի , Բարեկենդան չը կայ , այլ միշտ մի օրինակ հաց ու լուրիան է նոցա կերակուր : Ոգիս խռովեցաւ , կրկին հարցուցի . միթէ այս աշխատաւոր մշակներ , որոց ձեռքէն բազմապատիկ բերքեր կ'ընդունիք բուն ագարակէն ելած , միթէ դոքա կաթէն , մածնէն , իւղէն , պանրէն և այլ զանազան բերքերէն մասն ու բաժին չ'ունին : Ոչ , պատասխանեց ազնուականն . եթէ ագարակի մշակներ այդ բերքերէն ուտելու իրաւունք և բաժին ունենան , այլ եւս մեր ագարակին շահն ոչինչ չը մնար , վասն զի մեր դլխաւոր շահը պէտք է նոցա խիստ ու սակաւապէտ կեանքէն դոյանայ :

Ահաւասիկ ագարակատէր մեծատանց ազնուականութեան փառք, դու ինքնին դատաստան արա մտքիդ մէջ, ազնիւ որդեակ իմ, հազար անգամ Ասիոյ և մեր հայաբնակ աշխարհի մշակներ երջանիկ ու բախտաւոր են, որք կաթով, իւղով. և այլ կերակուրներով կը սնանին: Թող այս, փողոցի աղքատներն եւս գոնէ տարուան նաւակատեաց օրերը մատաղ ուտելով մսի համ կառնուն, իսկ այդ ազնուականաց մշակներ չգիտեն թէ միսն ի՞նչ համ ունի:

Սորա համար Աստուած վերէն կը տեսնար և մշակները զրկող ու հարստահարող կալուածատեարց համար Մարգարէին բերնով կը խօսէր, « Եւ բողոք հնձողաց եհաս յականջս իմ, և այլ » :

Մեծատունն Յովք, որ կին աշխարհին մէջ մի ճշմարիտ ազնուական նահապետ էր, նա յառաջ կը բերէր իւր ազնուականութեան պարտիքներ, զորս անթերի կատարեր էր. մինչդեռ իւր բարեկամներ վիճելով կասկած կը յարուցանէին: իսկ ազնուական նահատակն մեծ համարձակութեամբ ցոյց կուտար իւր առաքինութեան հանդէս և կը խօսի. « Եթէ խոտեցի՞ երբէք զիրաւունս ծառայի կամ աղախնոյ մատուցելոյ առիս յատեան, և զի՞նչ գործեցից եթէ հարցափորձ արասցէ ինձ Տէր. և եթէ այցելութիւն՝ զի՞նչ պատասխանի արարից: Ո՞չ ապաքէն որպէս ես եղէ յարգանդի և նոքա եղեն. ի նմին որովայնի եղաք: իսկ տկարք, որոց պէտք ինչ էին՝ ո՞չ արդեօք երբէք վճարեցի: Զակըն այրւոյ ոչ կողկողեցուցի: Եթէ կերայ արդեօք զպատառն իմ միայն և որբոյն ոչ կարկառեցի: »

Զի ի մանկութենէ իմմէ սնուցի իբրեւ գհայր , և յարդանդէ մօր իմոյ առաջնորդեցի : Եթէ արարի՞ անտես զմերկն կորուսեալ և ոչ զգեցուցի : Եթէ ո՞չ օրհնեցին զիս տկարք և ի կտրոյ խաշանց իմոց ջեւան թիկունք նոցա : Եթէ վերացաւցի՞ ձեռըն ի վերայ որբոյն՝ յուսացեալ թէ բազում է օգնականութիւն իմ , ապա թափեսցի յանրակէ ուս իմ և բազուկ իմ յարմնկանէ իմմէ խորտակեսցի » ևայլն :

Ահաւասիկ ճշմարիտ ազնուականութեան գործ ու պարտիքը , զորս մեծանձն Յովք վեհանձնարար կը ճառէ ու վստահութեամբ կարդարանայ Աստուծոյ առաջ . թէ և բարեկամ դատաւորներ մեղապարտ կը դատէին զինքն կարծելով թէ հարոււածեալն Յովք իւր զրկանաց երեսէն պատուհասուեր է :

Ե՛ , ազնուամիտ որդեակ իմ , համեմատէ դու այժմիկ հին աշխարհի և մեր դարու ազնուականաց գործն ու կեանք . և դու ինքնին դատաստան արա , թէ աշխարհիս ամէն հարուստ մեծատունք որ ազնուականութեան տիտղոս ստացեր են՝ նոքա իրօք և ճշմարիտ ազնուական չեն : Մի կարծեր թէ ընդարձակ հողն ու ոսկին և անուն զմարդն ստոյգ ազնուական կանեն , եթէ նորա ոգին ընչափաղութեամբ ստրկացած է և զուրկ մեծանձնական առաքինութենէն : Կան մարդիկ , որք թէպէտ մեծահարուստ չեն , այլ իրենց չափաւորութեան մէջ առաւել կը մեծագործեն քան համբաւեալ ազնուականն :

Իսկ դու , անանուն որդեակ իմ , որ ազնուա-

կան չ'ես ծներ . այլ շինական ժողովուրդին մի հասարակ զաւակն ես , ջանացիր փոքրկութեանդ մէջ փոքրիկ ազնուական լինել . ոչ գանձ ունիս և ոչ մեծ կալուածատէր ես , որ ոսկւով և հարստութեամբ մեծագործես . բայց դու դրով , ուսումով և կրթութեամբ մեծագործէ :

Սիրէ նաեւ բարուց ազնուութիւնն , անկեղծ կենցաղարութեան ազնուութիւն . և քան զամէն առաւել՝ ընկերսիրութեան ազնուութիւն : Եթէ աշխարհիս դէպքեր յաջողեն քեզ , կամ դիրն և աշխատութիւն քեզ ոսկի բերեն , և դու յանկարծ խոնարհ ժողովուրդի վիճակէն բարձրանալով ձգտիս դէպի ազնուականութեան դասն՝ մի անարդեր դիրն ու գորիչ . այլ գուն գործէ , որ գրով ու ոսկւով միանգամայն ազնուանաս :

Գիտեմ ես , գիտես նաեւ դու , Քրիստոս որ աղքատ և ժողովրդասէր էր , վկայեց թէ մամօնայն անիրաւ է , անիրաւ են և նոքա որ սոսկ մամօնայիւ ազնուականութիւն կը կեղծեն . բայց արգար և ժողովրդասէր ազնուականը գիտէ բարւոք ի գործ դնել զայն , և շահեցուցանել թէ ի սակաւուն և թէ ի բազմին իբրեւ հաւատարիմ ծառայ Աստուծոյ տնտեսութեանն :

Կը փափաքիմ քեզ համար , որդեակ , որ դու ի փոքրուն , այսինքն այդ քո այժմեան վիճակին մէջ միշտ հաւատարիմ լինիս , որպէս զի բազմին արժանանաս :

Որչափ և կարես կեանքդ ազնուացուր աշխարհիս վերայ . մի ասեր թէ ես մարդոց կեանքին մէջ և նոցա աշքին առանց ոսկւոյ ու մեծութեան միշտ

նուաստագոյն կը համարուիմ։ Կը գովեմ զքեզ ե-
թէ անձնածանաչ լինելով խոնարհամտիս, այլ չեմ
ներեր քեզ թէ այնչափ նուաստանաս մինչեւ մո-
ռանաս մարդկութեան հաւասար պատիւ։ Գիտ-
ցի՛ր դու, որ Աստուած զմարդիկ հաւասար աղ-
նուական ստեղծեր է և այնպէս կը համարի . ոչինչ
զանազանութիւն չը կայ ազնուականին և ժողո-
վուրդին մէջ . միայն աշխարհին աչք ու դատաս-
տանը խնիր կը դնէ և այնպէս կը տեսնայ . իսկ
Աստուծոյ մեծութեան առաջ՝ աստուածազատկեր
մարդն հաւասար աղնուական է : Մանաւանդ ե-
կեղեցւոյ հաւատացեալ ընկերութեան մէջ . որոց
համար ասաց Քրիստոս թէ « Դուք ամենեքին եղ-
բայր էք »

Վերջին խրատ մի եւս աւանդեմ քեզ, Սողո-
մօնի բանէն . և այն լինի միշտ քո խնդրուած Աս-
տուծոյ առաջ : « Մեծութիւն և տնանկութիւն մի
տար ինձ, այլ կըռեա ինձ զարժանն բաւականու-
թեամբ : Զի մի մեծացայց և ստեցից և ասիցեմ
թէ ո՞վ տեսանիցէ զիս . կամ աղքատացայց գողա-
ցայց և երդուայց յանուն Աստուծոյ իմոյ : »



ԴԱՍ Զ.

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ

Աշխատութիւն մարդոյն կեանք
արդիւնաւորող Առառևծոյ օրհ-
նած սերմ ն է, երէ յուսով ցա-
նես զայն՝ շահաբերութեամբ
կը հնձես, կեանքդ լիասեղպն
հացով եւ բարեօֆ կը լիցով.
երէ չշանես՝ ոչ ինչ չես հնձեր
եւ կեանքդ կը սովամանի.

ՄԱՐԴՈՅՆ աշխատութեան և գործունեայ
կեանքին պիտանի և օգտակար դասը պիտի խօ-
սիմ քեզ, ժիր ու գործասէր որդեակ իմ, ականջդ
բաց և ինձ տուր քո միտքը. զի այս կենսական
դասն է, որ քո կեանքը կը բեղմնաւորէ, դու
անպէտ անպտուղ ծառ չես լինիր մարդկային ըն-
կերական դրախտին մէջ, որ աշխատութեան պը-
տուղ չը տալով՝ միայն երկիր կը խափանեն. զոր
իրաւամբ հատանել պէտք է, կը վճռէ Յիսուսին
բացախօս առակը. Եթէ մարդն ինքնին աղատ ի-
րաւունք ունի իւր տնկած և դարմանած պար-
տիզին անպտղատու ծառեր հատանել, քանի՞ ա-
ռաւել աշխարհիս դրախտ տնկագործող Արարիչը
տիրապէս իրաւունք ունի հատանել այն ապարդիւն
մարդատունկեր, որք ոչ միայն հակառակ կը վա-

րին տիրական վճռոյն դէմ. այլ և տիեզերքի բը-
նական օրինաց դէմ շատ մեղապարտ կը լինի մարդ
երը կը դիտէ ու կը տեսնայ , որ երկինք ու եր-
կիր կը շարժին և կը գործեն , անդադար միշտ
արդիւնաւորելով այս մեծաշահ դաստակերտ թէ
ի պէտս մարդոյն և թէ ի փառս բարեխնամ Ա-
րարչապետին :

Տեսողութեամբ ու մտքով կոյր մի լինիր և կո-
րահայեաց , Որգեակ իմ Սամուէլ , գլուխդ ի վեր
առ , աւագ աչքով դիտէ և տես բովանդակ տիե-
զերաց գործունէութեան հանդէսը . որ զտիւ և
գիշեր շարժման և փոփոխութեան մէջ անվրէպ
կը կատարեն իրենց սահմանեալ ընթացքը՝ միշտ
հպատակ լինելով յաւիտենական օրինաց տակ : Եւ
նոյն ինքն աիեզերք վարող Արարիչը միթէ անգործ
կը հանգչի^o , ոչ , զի ասաց Քրիստոս . « Հայր իմ
մինչեւ ցարդ գործէ և ես գործեմ » : Եւ ի^oնչ է
նորա գործը . դու տես թէ ինչ է : Իւր աներե-
ւոյթ գահէն տիեզերաց սանձ բռնել ու վարել .
նախախինամել արարած էակները որ գոյութենէն
ի չգոյութիւն չը դառնան , մեռեալներ հողին տալ ,
հոգիներ յանմահութիւն կոչել , և նորածնելոց՝
նոր հոգի տալով՝ մարդոյն կեանք վերանորոգե-
լով պահպանել : Զմոռնանք նա և նորա գերագոյն
արդարութեան դատաւորութիւնը , որով կը տես-
նայ աշխարհիս դատաստանն . և մարդիկ չը դիտեն
թէ հողմն ուստի^o կուգայ և ուր կերթայ :

Երանի՛ թէ մեր աչք պարզապէս զօրէր և մեք
տեսնայինք թէ այն կապուտակ երկնակամարին
անհուն անհամար մարմնոց մէջ ի^oնչ աշխատու-

թիւն և տքնութիւն կայ : Արեւ , լուսին , մոլորակներ և բոլոր համաստեղութիւնք , որք թէպէտ մարդոյն նման ազատ էակներ չեն . այլ իրք ի՞նչպէս ինքնավար , ինքնաշարժ կը մղուին կը վարին արարչադիր օրէնքով :

Իսկ մեր աշխարհ որ մեր աչքին առաջ և մեր ոտքին տակն է . և զոր մարդկային իմաստասիրութիւն հանապազ կը հետազօտէ ու կը տեսնայ , թէ ի՞նչպէս ծովն ու ցամաք , բոլոր բուսական խոտէր ու ծառեր , անշունչ և չնչանոր էակներ , տարերք , ժամանակ , եղանակներն և առ հասարակ բովանդակ երկրագունդ անդադար շարժման և աշխատութեան մէջ են . որոց արգիւնք և նըպատակ շատ յայտնի է մեզ : Մարդոյն կեանք և նորա հետ բոլոր կենդանեաց կեանք մի աւուր մէջ կը չքանայ , եթէ երկիր ցորեան չիտայ մեզ համար , եթէ խոտ չբուսուցանէ անասնոց համար , և ծառեր չպտղաբերին և արեւ իւր լուսով ու ջերմութեամբ չկենդանածնէ մեր աշխարհ . և այս ամենուն հետ եթէ արարչական խնամքն իւր երեսը դարձնէ՝ ի՞նչ կը լինի մարդոյն և բոլոր շընչաւորաց կեանք . այդ կը խոսանվանի Դաւիթ , « Դարձուցանես զերեսս ի նոցանէ՝ խո ովին , հանես զոդի ի նոցանէ՝ արակասին և ի հող դառնանա» :

Իսկ մարդոյն աշխատութեան համար կը խօսի , « Ելանէ մարդ ի գործս իւր ի վաստակս ձեռաց իւրոց մինչև յերեկոյ » : Զի մարդն այս աշխարհիս վերայ գործաւոր մշակ մի է . քանի որ կեանք ունի , աշխատութիւն՝ իւր բնական ու բարոյական պարտիքն է :

Մարդկային ընկերական պշխարհ թագաւորէն սկսեալ մինչև գիւղական մշակն՝ ամէնքն եւս անդադար աշխատութեան մէջ կը դեգերին ու կը պարապին։ Բայց դու պէտք է գիտես, Որդեակ իմ, թէ աշխարհիս վերայ ամէն մարդ իւր աշխատութեան բաժինն ունի։

Հին աշխարհին մէջ մարդոց աշխատութիւն խիստ պարզ և անծուկ վիճակի մէջ էր. բայց նոր աշխարհ և քաղաքակրթութիւն մարդոց աշխատութեան գործ և ասպարէզ կարի շատ ընդարձակեց. և այսօր բիւր հազար տեսակ գործերու մէջ կը պարապի մարդկային ընկերութիւն։ Այդ եւս բաւ չէ, տակաւին կը տքնին մարդիկ անդուլ անդադար նորանոր արուեստներ և գործեր հընարել զբաղասէր մարդոյն համար։ Այլ գիտես թէ մարդ որչափ իւր կեանքին պէտքեր հնարէ, բազմապատկէ՝ այնչափ եւս իւր ցանկութիւն կը գըրգըռի և երբէք շատ չասեր։ Ո՛վ գիտէ, թերեւս Նախախնամութիւն՝ մարդոյն ցանկութեան չափ չը գրաւ. որպէս զի մարդ հնարասէր գործասէր լինի և հայթայթէ իւր կենաց պէտքեր։ Բայց թէ ինչո՞ւ համար ոմանց ամենածանր և ոմանց ամենաթեթեւ աշխատութեան բաժին հասեր է. մի զարմանար, այդ եւս անհաւասարութեան օրէնքին տակն է։ Բայց թէ ծանր և թէ թեթեւ, թէ մտքով ու թէ մարմնով՝ մարդիկ ընդհանրապէս աշխատութեան դատապարտուած են։ Թագաւոր՝ զոր մեք անաշխատ կը կարծենք, նաեւս մտքով և աշխարհի հոգերով կաշխատի, իշխան, դատաւոր՝ աշխարհավարութեան մէջ կաշխատին, զօրա-

վար , զինուոր պատերազմի դաշտին մէջ արիւնով կաշխատին : Այսպէս նաեւ վաճառական՝ իւր վաճառականութեան մէջ , արուեստաւոր՝ իւր արուեստին մէջ , իմաստաէր՝ իւր կարասին մէջ , մատենագիր հեղինակ՝ իւր մտաւոր ու գրաւոր աշխատութեան մէջ , և քան զամէն առաւել երկրագործ մշակ՝ արեւակէզ դաշտին մէջ :

Ես ո՞ր մէկ թուեմ քեզ բազում զբաղման գործեր . որոց մէջ հէք մարդ հոգւով ու մարմնով կը տառապի՛ ու կը տառապի : Եւ գիտե՞ս դու թէ ի՞նչ է իւր նպատակ և ջանք . Սօլոմոն կը բացատրէ քեզ այդ . « Ամենայն ջան մարդոց ի բերան » . այսինքն թէ մարդ այս աշխարհիս վերայ իւր բերնին ու փորին համար կը ջանայ և կ'աշխատի : Երանի՛ թէ իւրաքանչիւր մարդոց աշխատութեան հաց՝ իւր բերանը հասնէր . զի մարդիկ կան , որ բիւրաւոր մարդոց աշխատութեան հաց իրենք կուտեն և ես չեմ յիշեր քեզ , դու ինքնին գտիր . թէ ո՞յք են այդ կարգի մարդիկ աշխարհիս վերայ :

Այս անհաւասար բաժնին ու կեանքին դասը՝ պէտք չ'է կրկնեմ քեզ , Որդեակ , աշխատութեան վերայ խօսիմ միայն , որ մարդոյն և իւր կեանքին ճակատագիրն է . մարդ կարող չ'է քերել ու եղծել զայն : Մեծն Սօլոմոն իւր գահէն կարեկից աչքով տեսաւ մարդոյն քաշած վշտակիր ու տառապանաց կեանքը՝ ասաց . « Զրապումն չար ետ Աստուածորդւոց մարդկան , զբաղիլ ի նոսա : » Զիստորիս , Որդեակ իմ , այլ ուղիղ մոքով իմացիր Սօլոմոնի բան , որով կը պարսաւէ ունայնամիտ և չարարուեստ մարդոց անշահ աշխատութիւն և ագահու-

թեան ընդունայն դեգերանքն : Քաւ թէ այնպէս կարծեմք , որ լարեխնամ Արարիչը՝ լարի աշխատութիւնն իրբեւ չար զբաղումն տուաւ մարդոյն : Եթէ այսպէս կարծենք՝ ուրեմն Աստուած զմարդըն ստեղծեց , որ զայն չարազբաղ աշխատութեան մէջ ջախջախէ և ինքն զրօսնու կամ զուարճանայ : Բայց չէ . նա զմարդն աշխարհիս ագարակին մէջ դրաւ . որպէս զի գործէ ու փայելէ իւր արդար վաստակը , երախտապարտ լինի : օրհնէ ու փառաւորէ իւր Արարիչը :

Գրենք այժմ թէ ի՞նչ է մարդոյն նիւթական աշխատութեան արդիւնք : Այդ ինքնին շատ յայտնի է մեզ , որ մարդոց աշխատութեան արդիւնք հաց և հարստութիւնն է . և հարստութեան առաջին և մշտնջենաւոր աղբիւրը՝ հողն ու երկիրն է . զոր մեծատունն Աստուած տուաւ մարդոյն իրբեւ օժիտ կամ իրբեւ ժառանգութեան կալուածը , որ գործէ ու պահէ : Մարդոյն այս ամենահարուստ կալուածն՝ իւր ծոցէն և ակնէն իրբեւ անհատահոս աղբիւր չարունակ կը բղխէ և կը հոսէ յորդեալ գետերու պէս անսպառ և անհատնում հարըստութեան գանձերը : Զէ թէ միայն հաց կամ ուրիշ արմտիք , որք մեր կեանքին բուն սնունդն են , այլ և հանգային գանձեր , ոսկի , արծաթ , պղինձ , երկաթ , անագ , կապար և այլ շատ պէս պէս մետաղներ . որ գարձեալ մեր կեանքին կը ծառայեն արուեստաւորաց ձեռքով , և բազմապատիկ կը յաւելուն մարդոյն հարստութեան մեծութիւնը :

Սակայն երկրին այս բնական հարստութիւն

բաւական չէ, այլ պէտք է, որ մարդոյն աշխատութիւն միանայ հողին ու երկրին հետ։ Քրիստոս կասէ թէ երկիրն ինքնին կը բերէ պտուզ։ այս, շատ բաներ կան, որ առանց մարդոյն աշխատութեան երկիր իւր ինքնաբերութեամբ կը մատակարարէ։ զորօրինակ անմշակ անտառներ և այլ անձեռատունկ շատ վայրենի ծառեր. թողումք լեռներու և դաշտերու բուսական խոտեր։ Բայց Քըրիստոսի խօսք, որ մասնաւորապէս ցորենաբոյսին համար է։ այդ եւս մինչեւ մշակ գետին չհերկէ և չցանէ սերմն, արտն ինքնին ցորեան չի բերեր։

Ուստի եթէ հարստութեան առաջին ամենաբուղիս աղրիւր երկիրն է։ պէտք է համարինք որ այդ աղրիւր առատացնող ձեռքը՝ մարդոյն աշխատութիւնն է։

Հանճարեղ մարդ շատ պէս պէս վայրենի բոյսեր, կենդանիներ ընտելացոյց։ որք այսօր առ հասարակ մեր պէտքերուն կը ծառայեն։ Երկրասէր մշակ իւր աշխատութեամբ հազար տեսակ հունտերը կը ցանէ, մատաղ տունկեր կը տնկէ և բիւրապատիկ բազմազան բերքերը հանելով կը հարըստանայ։ Վաստակասէր մարդ սոսկ երկրին երեսը բաւ չը համարեց իւր անդուլ աշխատութեան ասպարէզ։ այլ փորեց հողը, մոտաւ մինչեւ երկրին սիրտը, կրկտեց գտաւ ոսկին ու արծաթ, հանեց ճոխացոյց իւր հարստութեան գանճարանը։ Երկաթ հանեց, երկրագործին խոփն ու մանկաղշինեց, ափսոս որ, խոփին ու մանկաղին հետ՝ սուրն եւս կոփեց իւր ընկերին կեանքը բառնալու համար։

Մարդոյն հարստութեան երրորդ ամենամեծ

աղբիւրն , որ կը միանայ հողին և աշխատութեան հետ , և որով ահագին Ովկիանոսի շափ հարստութեան ծով կը կազմէ . Բնչ է , գիտե՞ս . հարցուր , Որդեակ իմ , և ես խօսիմքեզ . գիտութիւն և արուեստն է , որ այնչափ և անհամար նորանոր հարցատութեան աղբիւրներ բացաւ , զորս չը կարեմ թուել ու ճառել :

Դու պէտք է գիտնաս թէ կին գարերում երբ գիտութիւն և արուեստ իւր խանձարուրին մէջն էր , գեռ չէր զարդացեր ու չ'էին ծներ այն մեծ և աշխատաւոր հանճարներ , որք նորանոր գիւտեր և արուեստներ ծնան . մարդոյն հարստութեան գլխաւոր աղբիւրներ միայն հողային մշակութիւն և հովուական խաշնադարմանութիւն էր :

Իսկ վերջին գարերում մանաւանդ տասնեւիններրորդ յառաջդիմութեան գարը , յորում տքնող հանճարներ իրենց գիւտերով յորդեցին ընդարձակեցին հարստութեան աղբիւրին ակները , արդմշտարուղին աշխարհի ակներէն վտակներ գետեր բղխեցին , ողողեցին առ հասարակ արեւմտեան Եւրոպից աշխարհ : Այլ մեր արեւելեան աշխարհ , որ քան զամեն աշխարհ արգաւանդ էր , դրախտի գետեր կոռոգէին զայն , ցամաքեցաւ , անջրդի անապատ գարձաւ : Եւ ի՞նչ էր սորա պատճառ , երեք բան էր , տգիտութիւն , անաշխատ կեանք և երկրին վարչութիւն , որ չառաջնորդեց , չքաջալերեց և չհարթեց ժողովուրդին առաջ դժուարին առապարներ , որ նա կարենար յառաջդիմել :

Խօսինք այժմ անգործ և անաշխատ կեանքին վերայ , որոյ հետեանքն աղքատութիւն է . ան-

տարակոյս աղքատութիւն ևս իւր սկզբնական պատճառներ ունի, եթէ հարստութեան պատճառը կը համարինք թէ մարդոյն աշխատութիւն և ժրագործ ձեռքն է. ուստի պէտք է ուղիղ հասկընամք թէ ապա ուրեմն անգործ ձեռք և անաշխատ կեանք՝ մարդոյն չքաւորութեան բուն նախապատճառներն են: Ասիոյ արեւելեան աշխարհ ուր մեք կը բնակիմք, երկրի բնական հարստութեան ամենաճպին ծածկեալ գանձարան մի է: Մեր լայնածաւալ արգաւանդ դաշտեր, որ ամէն սերմերու և տնկագործութեան ընդունակ են. և եթէ մշակուին՝ իրենց բարերերութեան և առատութեան արդիւնք աշխարհին բաւ է: Մեր լեռներ ու հովիտներ եթէ ապահովին, արդեօք Զվիցերիոյ չափ կովեր ու եզներ, անթիւ անհամար ոչխարաց հօտեր չե՞ն դարմանուիր: Հապամեր ինքնաբոյս անմշակ անտառներ. մեր բազմագանձ հանքեր, որ այնպէս անկրկիտ կոյս մնացեր են հողին տակ, անգործ և ապարդիւն:

Ինչպէս գրեցի ի վեր, յիշէ, Որդեակ իմ, աստի յայտնի է, որ երբ աշխատութիւնը չի միանար բնական հարստութեան հետը, հարստութիւնն իրեւ ծածկեալ գանձ կը մնայ հովին ծոց. և մարդիկ անհաց, անգանձ, անգիտաբար կը ըրջին ոտքի տակ թալլուած գանձերու վերայ միշտ աղքատ եւ կարօտած:

Ուրեմն մեր աղքատութեան աղբիւրի մի ակն՝ մեր անաշխատ ձեռք և թմրած ոգւոյն ծուլութիւնն է: Մի մարդ, մի ժողովուրդ, մի աշխարհ, որ զինքն աշխատութեան չի նուիրեր, նա միշտ

հացի կարօտ կը մնայ . վասն զի աշխարհիս վերայ հացն ու գանձ՝ միայն աշխատող ազգին ու ժողովուրդին բաժինն են , և սորա ճշմարիտ ապացուց՝ Եւրոպիս ժողովուրդն է :

Բայց ի՞նչ պէտք է , և ի՞նչ է զօրաւոր դարման , որ անաշխատութեան մէջ ափշած ու թըմրած ժողովուրդին միտքն ու հոգին մեռելութենէն հանէ ու մղէ գէպի ի գործունէութեան կեանք : Այն պէտք է , ինչ որ պէտք եղաւ արևմտեան ազգերուն . այսինքն լոյս , գիտութիւն : Լոյսն ու գիտութիւն՝ մեր գործող զգայարանքներ և աշխատութեան կեանքը կուղեն . և մեր յառաջդիմութեան քայլերուն ճամբայ կը բանան և կապահովեն մեր արդիւնք և հարստութիւն : Եւ երբ արեւելեան ժողովուրդներ զուրկ են այս առաջնորդող լուսէն և մղիչ զօրութենէն , կը մնան ուր որ են , միշտ կարօտ , բեղմնաւոր երկրի մէջ . վասն զի հեղգամիտ եղան . աշխատութիւն չսիրեցին , ուստումն ատեցին , հանճարն անպատուեցին , գրասէրն անօթի մեռաւ , արուեստաւորն առանց քաջալերութեան մնաց . եթէ կային յառաջադիմող ոտք՝ նոցա քայլերուն առաջ մեծամեծ խոշնդոտներ եղաւ . մեր ընկերական կեանք դարձաւ մի անշարժ դիակ . տեսանք յառաջադէմ աշխարհ և իւր անթիւ գործունէութեան օրինակներ մեր աչքին առաջ կեցած են , մեր միտք ու հոգին տակաւին չնորոգեցաւ . մնացինք այնպէս հնութեան ու հեղգութեան մէջ . Մեք մտաւոր մարդ ծնանք , այլ մեր ոտքի տակ աշխատող չըքոտի մրջիւնին ժիր գործունէութիւն չտեսանք :

Մեծն Սօղոմոն իւր խրատով աշխարհիս վատ ծոյ-
ւըրն կը յղէ դէպ ի մրջիւնին բոյն :

Եւ դու, Որդեակ իմ, երբ մրջիւնի բունէն
կանցնիս՝ կաց պահ մի ու զննէ, տես ու զարմա-
ցիր թէ քանի՞ աշխայժ է այդ նկուն կենդանին .
իւր բունէն մինչև քառասուն քայլ աւելի ուզգա-
գիծ ճամբայ կը բանայ, կարաւան կարաւան ան-
բագար կերթայ կուգայ . միշտ մի հատիկ պարէ-
նվ կը բեռնաւորի, կը բերէ կամբարէ իւր բոյնը .
Աթէ պատահմամբ կոխես ու ձմլես զինք ի գետին,
Եթէ սայլին անիւն իւր ճամբու վրայէն անցնի,
հազարներով ջախջախուին, նա տակաւին աշխա-
տութենէն չի կասիր և երբէք չի թողուր իւր րա-
ցած արիւնոտ ուղեգիծն . այլ գիակներու վերայ
կը կոխէ ու կանցնի իբրև աշխատութեան աննկուն
շահատակ :

Մրջիւն՝ մարդ չէ, բայց կը նախատեսէ, յտ-
մարան կը ժողովէ կամբարէ իւր պաշարը, և ի ձը-
մերան կը վայելէ . ազատ մնալով ի սովէն : Մարդ
մրջիւն չէ, նախատեսող միտք ունի . և երբ չի
նախատեսեր, անգործ կեանք կը վարէ՝ նորա ձը-
մեռն անշուշտ սովամահն է :

Թողունք մրջիւնին բոյն, երիմ անք գէպ ի մե-
ղուն . գիտէ ու տես թէ որչա՞ն գործասէր է . երամ
երամ կապելով կերթան ծաղկաւէտ հովիտներ կը
շրջին, մեղրանիւթ կը ժողովեն և կուդան փե-
թակին մէջ կը գործեն, որոց արդիւնք թագա-
ւորաց սեղան կը զարդարէ . և մեղրամոնն Աս-
տուծոյ սեղանին վերայ կը վառուի :

Հապա չտեսնա՞նք մեր պատերու սարդի գոր-

ծունէութիւն, որուն համար կասեն թէ կտաւագործութեան արուեստին հեղինակ լինելով՝ օրինակ տուեր է մարդոյն. տես ի՞նչպէս անդուլ կը ճգնի իւր աշխատութեան մէջ, անդադար կը մանէ կը հիւսէ իւր որսական ցանցը պատրաստելու համար: Եւ ի՞նչ է իւր նպատակը, գիտե՞ս, միայն ճանճիկ մի որսալ և իւր կեանք պահել:

Թող մտածեն մտաւոր մարդիկ և մեր աշխարհի ծոյլեր. եթէ սարդին համար ճանճիկ մի պէտք է, ո՞վ չի գիտեր թէ իրենց համար եւս հաց պէտք է: Զի մարդոյն կեանքը պահպանող հացն է, մարդըն առանց հացի կը չքանայ: Մարդոյն ընկերական կեանք աշխատութեան զբաղումով կապրի և կը յարատեւէ:

«Եթէ կայ աշխարհիս երկրագնդին վերայ ծանրագոյն և անտանելի բեռն մի, այդ ծոյլերուն կեանքն է»: հարցուցին իմաստասէրի մի և նա այսպէս պատասխանեց:

Արդ ինչպէս տեսանք, սիրելիդ իմ Սամուէլ, որ հարստութեան ծնող աշխատութիւնն է. ուղիղ կը հետեւի, որ աղքատութեան ծնող ծուլութիւն և անգործ կեանքն է. իսկ երկոցունց մեծ առաջնորդ, միոյն՝ գիտութիւն և լոյսն է, իսկ միւսին՝ տգիտութիւն և կուրութիւն: Վասն զի մարդոյն թշուառութեան բուն աղիտաբեր արմատը՝ մտաւոր կուրութենէն կակաի և կաճի:

Կը յիշես գու, Եւրոպիոյ գիտոց կաճառէն յառաջ, մեր իմաստասէր Եղիշէն մարդոյ կոյր կեանքի նկարագիրը ճշգութեամբ կը հանէ, երբ հազար երեք հարիւր տարի յառաջ կը տեսնայ նա Հայոց աշխարհի թշուառութիւն և անկատար

կեանք , այսպէս կուտայ իւր վճիռը , թէ « Կոյր զրկի ի ճառագայթից արեգական , և տգիտութիւն զրկի ի կատարեալ կենաց » :

Այո՛ , կուրութիւն կեանք չունի . նա պէտք է միշտ խարիսափի աշխարհիս հրապարակին վերայ և մերթ եւս իւր գլուխը պատէ ի պատ զարնելով ջախջախուի :

Այլ եւս համառօտենք այս դասը , աշխատասէր և լուսասէր Որդեակ իմ , եթէ կը բաղձանք որ աղքատութիւն և կուրութիւն մեր աշխարհէն բարձուին , թշուառութեան աղբիւրի ակներ խցուին , և հարստութեան ու երջանկութեան ակներ բացուին , աշխատութիւն սիրենք ու պատուենք , հեղդամութիւն և ծոյլ կեանք ատենք ու հալածենք մեր անձնէն և մեր ընտանեկան սրահէն :

Իսկ դու , իմ ջանասէր Որդեակ , որ մեր հայրենեաց մի պանդուխտ զաւակն ես , երբ կը յաջողի քեզ դառնալ քո հայրենի երկիրը , գործասիրութիւն և աշխատութիւն քարոզէ . ժրագործ եղիր , կեանքդ բեղմնաւորէ և բարի օրինակ հանդիսացիր քո հասակակից պատանիներուն առաջ : Թող ի բաց ոսկին ու գանձ , տար իմ այս աշխատսիրութեան դասեր . տար աւանդէ մեր հայրենեաց անուս , անդպրոց մանուկներուն . ասա նոցա , թէ ձեր հայրեր պանդխտութիւն սիրեցին , օտարութեան մէջ մաշուեցան ու մեռան . դուք ձեր հայրենի քաղցր ծոցէն ու գրկէն , հողէն ու ջրէն բնաւ մի հեռանաք : Ասա թող աշխատին , գործասէր լինին և իրենց դառն քրտինք հայրենի

հողին վերայ թափեն : Այն հողն ու ջուր , զոր օրհն-ներ է Աստուած , շատ հաց ու հարսառութիւն կը տայ իրենց : Յիշէ դու և յուշ բեր նոցա Սօղոմոնի օգտակար խրատ , թէ « Որ գործէ զերկիր , լցցի հացիւ . և որ երթայ զհետ դատարկութեան , լցցի աղքատութեամբ » :



ԴԱՍ Է.

ՈՒՂԻՂ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ ԿԵՆԱԾ

ՀԱՅ ԵՒ ԲՈՆ

Մարդիկ կան , որ միայն հացով կապրին . մարդիկ կան , որ կը հրեշտականան սննաց ապրիլ կուզեն . երկու դասն եւս միապէս կը խոտորին ուղղուքենէն : Արգար ու անախս մարդն այն է , որ հացով եւ Առ-տաւծոյ բանիւ միտնզամայն կապրի աշխարհիս վերայ :

ՈՒՂԻՂ տնտեսութիւն՝ մեր նիւթական և բարոյական կեանքին մէջ այն իմաստուն և խոհական տնտեսող ձեռքն է , որ գիտէ հացիւ ու բանիւ միանգ ամայն իւր կեանքի պէտքեր հոգալ . և Քը-

րիստոսի խօսքին համեմատ « կայսերին՝ կայսեր տալ . և Աստուծոյն՝ Աստուծոյ : »

Այս տնտեսող ձեռք՝ պէտք է արդարութեան ու չափաւորութեան մէջ պահել . զի եթէ խիստ ընդարձակես զայն՝ չուայլ ու զեխ կը լինիս . և եթէ սաստիկ կծկես ագահ ու ժլատ կը լինիս . եթէ միայն քո անձին տաս և ընկերին մոռնաս , զրկող կը լինիս . եթէ կայսերին տաս և Աստուծոյն մոռնաս՝ ապերախտ կը լինիս . եթէ միայն նիւթական կեանքիդ համար հացի պէտքեր հոգաս և մոռնաս Աստուծոյ բան և բարոյական պէտքեր , դու յայնժամ թերահաւատ և նիւթապաշտ կը լինիս . կարծելով թէ մարդոյն կեանք սոսկ հացով կարող է ապրիլ : Եւ կապրի , այո՛ , եթէ մարդ յանձըն առնու հաւասարիլ անասնոց և միայն խոտով ապրիլ :

Գիտենք , թէ հաց մեր մարմիոյ անունդ և աճումն է , բայց հոգին եւս իւր սնունդ և աճումն ունի , և այդ՝ Աստուծոյ բանն է : Ուստի արդար տնտեսող ձեռք և միտք պէտք է , որ նախ երկու ծայրայել կեանքէն զգուշանայ , ոչ առաւելու և ոչ նուազի . միանդամայն ոչ հացը թողու և ոչ Աստուծոյ բանը : Այլ իւր կենաց այդ երկու մեծ ու կենուական պէտքեր առանց զրկանաց արդար բաժինով հոգայ . գիտելով նա և թէ մեր կեանքին բուն կենդանարար մասն հոգին է . զի ասաց Քըրիստոս , « Հոգին է կենդանարար . մարմին ինչ ոչ ոգնէ : »

Սամուէլ որդեակ իմ , եթէ դու հաց և բան միանդամայն կը սիրես , մոռադիւր լսէ այս դասը ,

որպէս զի կարենաս ուղիղ տնտեսութեամբ կառավարել քո կեանքը : Վասն զի առանց ուղիղ տընտեսութեան մարդոյն կեանքը իւր չափաւորութենէն կը խանգարի . գանձը՝ գանձարանէն կ'սպառի , և ցորեանը՝ շաբմարանէն : Սորա հետ և ի միասին կ'սպառի բանն հոգիէն , կրօն և հաւատ սրտէն : Բայց խօսիմ նախ հացի և նիւթական կեանքի տընտեսութեան վերայ . վասն զի մարդիկ հացն աւելի կը հասկնան , բանին և հոգւոյ կեանքը իրբեւ վերացական գաղափար համարելով կը դժկամակին բմբռնել զայն : Բայց անհնարին է հացն ու բան որոշել իրարմէ : Սոքա այնչափ սերտ կապակցութիւն ունին իրարու հետ՝ ինչպէս հոգին մարմնոյն հետ :

Խոհական Որդեակ իմ, ինչպէս ուսար դու նախորդ դասիդ մէջ, թէ բուն հարստութեան աղբիւր մարդոյն գործունեայ աշխատութիւնն է . այսպէս նաեւ հարստութեան գանձարանին հսկող պահապանն՝ արթուն տնտեսութիւնն է : Մարդիկ աշխարհիս վերայ մէն մի իւր կարգին և վիճակին մէջ առանձին առանձին տնտեսապետ են , և մէն մէկ հաշիւ ու համար , պարտիք և իրաւունք ունին : Թագաւոր՝ իւր աշխարհին տնտեսապետն է . իշխան՝ ժողովուրդին . հարուստն՝ իւր կալուածոց , աղքատն՝ իւր տնակին . քաղաքացին՝ իւր արհեստին և շահավաճառութեան . գիւղացին՝ իւր հողագործութեան . և իւրաքանչիւր գերդաստան ու ընտանիք՝ առ տնին տնտեսութեան :

Երկրի մի ընդհանուր տնտեսութեան վիճակն ե՞րբ կը խանգարի , գիտես , երբ այդ կարգի մար-

գոց դասեր մեծ և փոքր առ հասարակ կը խոտոր-
րին ուղիղ տնտեսութեան և պարտուց ու իրա-
ւանց հաւասար չափէն :

Այլ պէտք է նկատեմք, որ այս խոտորումն միշտ
բարձրադոյն աստիճանէն կ'սկսի, և կերթայ կը
հասնի մինչեւ ի ստորին աստիճանը . այսինքն թա-
գաւորի պալատէն մինչեւ յետին գիւղացւոյն տու-
նը : Այս տեսութիւն շատ ճշմարիտ է, և շատ
յայտնի է մեզ, զի դորա բազում օրինակներ կը
տեսնամք աշխարհի մէջ և մեր աշքին առաջ :

Այսափ միայն յիշելով շատ կը համարիմ ու
կանցնիմ . միտքս այն չ' որ խօսիմ մեր երկրի քա-
ղաքային տնտեսութեան վերայ . և թէ խօսիմ եւս՝
ով պիտի լսէ : Այլ միայն խօսիլ կուղեմ իւրաքան-
չիւր մարդոց կեանքին և առտնին ընտանեկան
տնտեսութեան վերայ, որ իմ պաշտօնին և շա-
փաւորութեանս պարտիքն է, լինելով անարժան
տնտես Աստուծոյ եկեղեցւոյն :

Յիշէ, Որդեակ իմ, ԴՐԱԽՏԻ ԸՆՏԱՆԻՔ կոչ-
ուած աշխատութեանս մէջ այս պարտիքը փոքր ի
շատէ վճարած եմ . բայց դարձեալ անձաճրոյթ կը
կրկնեմ այս դասիդ մէջ զայն, որպէս զի Հայոց
անտնտես ժողովուրդ, առաւել քաղաքացիք և
մայրաքաղաքացիք, գէթ մեր գրելով և նոցա կար-
դալով խելաբերին . թէեւ ժամանակն նեղելով կը
խրատէ զիրենք . վասն զի նորա ձայն և խիստ խը-
րատ շատ կրթիչ ու զօրաւոր է քան զմեր գիրն ու
քարոզ :

Բայց մարդիկ զարմանալի են . անցեալք չուտ
կը մոռնան, և ժամանակն միշտ փոփոխական լինե-

լով՝ բազում անգամ և շատ մարդոց համար տղն-
տեսութեան և նախատեսութեան վարժապետ չը
լինիր . այլ մանաւանդ երբ յանկարծ երկրին կամ
առանձին այս և այն մարդոյն համար բախտ բե-
րելով կընդարձակէ յաջողութիւն , գիտես թէ
յայնժամ առաւել շռայլութեան և զեխութեան
դասեր կուսուցանէ . Մեք մեր ժամանակի և կեան-
քի մէջ դորա փորձ և ապացոյց տեսանք , որ այդ
անստոյգ խարող ժամանակ քսան տարի շարունակ
այգ յոռի ու կարճամիտ դասեր սորվեցոյց Ասիա-
կան և առաւել Պօլսոյ ժողովուրդին :

Խրատ կուտամ քեզ , Որդեակ իմ , ժամանակի
բարեկամութեան վերայ երբէք մի վստահիր . նա
միշտ խարուսիկ է , երկու երես ունի , այսօր կը
խնդայ և վաղը կը խոժոռի : Միշտ յուշիդ պահէ
Սօլոմոնին խրատ . « Ժամանակ լալոյ և ժամանակ
ծիծաղելոյ : » Մինչ գանձարանդ գանձով , շտեմա-
րանդ ցորենով լի են , մինչ շահավաճառութիւնդ
յաջող է և դու առատ սեղանին վերայ նստած
կ'ուտես , կը խմես եւ կուրախանաս անկասկած .
ահաւասիկ այս է քո ծիծաղելոյ եւ բախտի ժա-
մանակ :

Իսկ երբ բախտին անվստահ բարեկամութիւն
յանկարծ իւր երեսը կը դարձնէ քեզմէ , շտեմա-
րանդ եւ գանձատունդ կը դատարկանան , բազ-
մաճոխ սեղանդ կը բարձուի , անդէն եւ մտերիմ
բարեկամներդ կը հեռանան , որ քո խրախճանա-
կիցներն էին . դու յայնժամ կ'ափշիս ու կը մնաս ,
թէ ի՞նչաէս պատահեցաւ քեզ այս : Ահաւասիկ այս
եւս քո լալոյ ու դժբախդութեան ժամանակն է :

Եւ ես պատմեմ քեզ, թէ ի՞նչպէս կը պատահի եւ որչափ են աշխարհիս եւ մարդոց կեանքի պատահարներ, մանաւանդ մեր ժամանակին եւ մեր ըշնակած աշխարհին:

Հարուստ ու մայրաքաղաքիս մէջ հռչակուած ճոխ գերդաստանի մի հայր կը ճանաչեմ ես. մի օր տեսի զինքն, որ հոգւոց հանելով կը խօսակցէր իւր բարեկամին հետ, եւ ես լրին ունկն կը դնէի: Նկատեցի նորա երեսը զի զուարթ եւ ուրախ չէր, ինչպէս յերեկն եւ յեռանդն, այլ թախծագին դիմօք նստեր էր, կը խորհէր ծանր հոգածութեամբ:

Իւր խօսակից բարեկամ հարցուց գորա պատճառը. նա զարմանալով պատախանեց նմա, միթէ դու չը գիտե՞ս, միթէ իմ պատահարս քեզ չը պատահեցա՞ն: Ո՛չ. ասաց բարեկամն, չը գիտեմ: Ուրեմն դու միայն կաս յԵրուսաղէմ եւայլն. . . ըսկաեց ապա այլաբան ոճով մի պատմել:

Ես, ասաց մի պողպատէ գանձու պահարան ունէի. այնչափ կուռ զբահաւորեալ էր, որ ամէն կերպ ճարտար գողութեանց դէմ կարող էր մըրցիլ. որուն մէջ իմ բոլոր հարստութեանս գանձը ապահոված էր ու ես բնաւին անկասկած էի: Մի օր բացի այդ իմ երկաթակուռ գանձարանս, ասսացի թէ փոքր ինչ զրօսնում եւ խաղամ գանձերուս հետ: Ո՛հ, ո՛հ, ի՞նչ, առանց բանալիի, առանց ո եւ իցէ ձեռքի ճարտարութեան՝ գանձի պահարանս փակուած տեղ ինքնին պարպուած էր: Թուեցի կրկին եւ կրկին, տեսայ քանակութիւնն՝ նոյնն էր: Բայց ի՞նչ օգուտ զօրութիւն սպառած

էր, ոչինչ արժէք չունէին ոսկիներս, գիտես թէ ամրող ժանտաջուրի մէջ թաթախուելով՝ հարիւրէն տասն հազիւ իրը թէ ուսկւոյ մասն մնացեր էր։ Այս մնացորդին վերայ գուրգուրալով կը կասկածիմ գուցէ այն եւս առնի տանէ նոյն ոսկեհան ժանտաջուրն։

Ես ի սկզբանն իբրեւ ապուշ կը լսէի այս պատիպատ պատմութիւնն։ հուսկ ուրեմն հասկցայ այդ գանձատէր մեծատունին միտքը։ Բայց ես մոքիս մէջ գատեցի զինքն յիշելով Եզովրոսի իմաստուն առակը, թէ «Դու մոագործ էիր, քեզ ի՞նչ պէտք է պայտառութիւն»։ Որովհետեւ այդ անձն՝ հայրենի արուեստով վաճառական էր, բայց շահուցանկութիւն հրապուրեր էր զինքն սեղանաւորաց նման տոկոս առնելով դիւրաշահութեամբ եւս հարըստանալ։

Այս փորձառու պատմութենէն խրատ առ, Որդեակ իմ, որ առաւել շահու ցանկութեամբ արուեստովիս չը լինիս։ Գիտցիր նաեւ, որ ամէն ժամանակն՝ իւր ժանտաջուրն ունի. եւ այնչափ ճարտարաձեռն գող է ժամանակ, որ գանձարանդ առանց բանալւոյ կը կողոպատէ։ Անհոգ անկասկած մի լինիր, այլ միշտ վախցիր դու ժամանակի դըժպատեհ բերմունքէն, ինչ որ այսօր է, վաղը նոյն չէ։ «Շատ է աւուր չարն իւր», ասաց Յիսուս։

Զգայթակղիս, Որդեակ իմ, թէ ես Աւետարանի պատուերին դէմ՝ հակառակ կուսուցանեմ քեզ, այն է, թէ «Մի հոգայք վասն վաղուին, վաղիւն վասն իւր հոգասցէ»։ Եւյլն։ Բացատրեմ քեզ Աւետարանին միտքը, որ ուզիղ մոքով հաս-

կընաս նորա հոգին և իմաստը . և դու այնպէս չը դատես ինչպէս իմաստակներ կը դատեն , զոր ես լսեցի ու յոգիս վշտացայ . որպէս թէ Աւետարան իւր այդ պատուէրով կարգելու մարդոյն՝ պագայի հոգն ու մտածմունք :

Ո՞չ , այդպէս չէ , բարեմիտ Որդեակ իմ . Յիսուս իւր հաւատացելոց երբ այս աշխարհէն յետոյ՝ երկնից արքայութիւն խոստացաւ , նա կամեցաւ որ իւր հաւատացող ծառայներ հեթանոսաբար բազմահոգ նիւթապաշտ չը լինին , միայն իրենց յոյսն աշխարհի վայելից վրայ գնելով՝ այն անձնապաշտ մեծատան պէս որ կասէր . « Անձն իմ , ունիս բազում բարութիւն ամբարեալ ամաց բազմաց . կե՛ր ա՛րբ և ուրախ լեր » :

Այս յանձնապաստան ոգիէն յայտնի է թէ խիստ անիրաւ տնտես մի էր նա , որ միայն իւր անձին համար գանձեր էր , և իւր մեծութեան մէջ Աստուծով չէր պարծեր . Նա չունէր այն երկիւղած հաւատը , թէ ամեն բարիքներ Աստուծոյ ձեռքէն կընդունի մարդն : Բարերար Աստուծ , որում շատ պարզեւէ , կը կամի որ մարդն արդար տընտեսութեամբ մատակարարէ զայն . գէթ իւր աւելորդ ընչից կարօտ ընկերին բաժին հանելով :

Քաջ ի միտ առե՞ր դու թէ՝ ոչ Աւետարան եւ ոչ Սուրբ գրոց ուրիշ բան կը պատուիրեն որ մարդ չնախատեսէ . Վասն զի մտածող մարդոյն ի բընութենէ բնական է նախատեսութեան հոգը . թող բանաւոր մարդն , ապաքէն տեսար դժւ աշխատութեան դասիդ մէջ մրջիւնին և մեղուին օրինակը : Եթէ այդ չքոտի կենդանիներ այդչափ նա-

խահոգակ են իրենց գոյզն պարենի համար , անշուշտ մարդ քան զմբջիւն մեծ է , նա առաւել պարտաւոր է որ նախատեսէ և հոգայ իւր կեանքի պէտքեր :

Բայց գարձեալ նկատել արժան է որ երկու ծայրայեղ անչափաւորութենէն հեռի մնայ մարդն , ոչ այնչափ նախատեսութեան խորերուն մէջ սուզանի , որով ագակութեան և թերահաւատ հոգերով խեղդուի . և ոչ այնչափ անհոգ աննախատես լինի , որ նոյնպէս շռայլութեան ու զեխութեան հեղեղներով գլորի : Ուստի մեծ իմաստութեան չափ ու կշիռ պէտք է ուղիղ տնտեսութեան մէջ այդ միջին ճանապարհ գտնել , ոչ ի ձախ խոտորիլ և ոչ ի յաջ :

Այս՝ աշխարհ՝ , ժողովուրդ՝ , եկեղեցի՝ , ընտանիք . և նոյն իսկ մարդ իւր առանձին կեանքը տնտեսելու համար՝ իմաստուն խոհականութիւն պէտք է , գիր ու հաշիւ պէտք է , ուղիղ ճշգութիւն պէտք է . և այս ամենուն հետ արդար խղճմտանք և Աստուծոյ բան պէտք է , որ գիտնայ մարդ ուղիղ բաժանել թէ կայսերին և թէ Աստուծոյ բաժին :

Այլ որովհետեւ այս աշխարհիս վերայ մարդոց կարգ , վիճակ ու կեանք շատ զանազան են իրարմէ , սորա համար անձնիւր մարդ առանձին առանձին տնտեսութեան պարտիքներ ունի՝ առաւել կամ նուազ : Աշխարհիս իշխաններ և մեծատունները փառասէր չենք համարիր , եթէ նոքա իրենց համբաւոյն , անուան , և ճոխութեան համեմատ վայելուչ պերճութեամբ կեանք վարեն : Նոքա

մեծ զրկանք կը գործեն ընկերութեան , եթէ ա-
մենագծուծ կեանք վարելով՝ խիստ ժլատու-
թեամբ կծկեն իրենց ձեռքը . և գետի նման յոր-
գացած գանձին ճանապարհ գոցեն , որ չվագէ ժո-
ղովուրդին հրապարակը : Նոքա եթէ չշինեն չքեղ
տուն և մեծամեծ ապարանքները , այդ ինքնին յայտ-
նի է որ տան ճարտարապետ , շատ արհեստաւոր
և գործաւոր մարդիկ վկասուելով իրենց վասաա-
կէն՝ կը զրկուին : Նմանապէս եթէ նոքա թանկա-
գին մատանիները չը դնեն իրենց մատը , եթէ ա-
մէն օր տարազ տարազ հանդերձներով չը պճնա-
զարդին , եթէ բազմախորտիկ սեղանով չլիանան ,
եթէ հրապարակի մէջ շրջելու համար չպերճանան ,
և թողլով այդ ճոխապանծ կեանքը՝ հասարակաց
անշուք ու սակաւապէտ կեանքով ապրին . ում կը
հասնի այս վնասը . գիտե՞ս , բոլոր արհեստաւորաց
և շահավաճառութեան այլ և այլ ճիւղերուն . որոց
բախտ և իրաւունքն էր այդ ամէն մեծածախ
պէտքերը պատրաստել ու տալ . և այս փոխանա-
կութեան միջոցով՝ հարուստներուն կուտած աւե-
լորդ գանձը հանել ժողովուրդին հրապարակ . որ-
պէս զի մէն մի իւր աշխատութեան բաժինն ըն-
դունի :

Եւ գիտե՞ս դու , մեր ընկերական կեանքին հա-
ւասարակշռութիւն պահող նժարներ՝ փոխանակու-
թեան օրէնքն է : Վասն զի ո՞ւր տեղէն կամ ո՞ր
աղբիւրէն կը ժողովին ու կը ծովանան աշխարհիս
մեծատանց և արքունական գանձեր . այդ ինքնին
մեզ շատ յայտնի է . զի դոցա մշտահոս վտակներ՝
ժողովուրդի աշխատութեան աղբիւրի ակներէն կը
վազեն :

Իրաւունք. է և մեծ իրաւունք , որ այդ գանձու վտակներ անդրէն իրենց ակները դառնան և այսպէս միշտ շրջան առնուն . որովթէ ժողովուդին և թէ մեծատանց դարաստաններ ու տունկեր միշտ ջրարբի լինելով՝ զուարթ ու պտղարեր մնան :

Ուստի մեծապէս կը մեղանչեն ուղիղ անտեսութեան օրէնքին դէմ այն մեծատունք , և առանց բռնացող յափշտակութեան՝ հարստահարիչ կը համարուին նոքա , և միանգամայն յառաջդիմութեան խափանարար կը լինին , երբ ժողովուրդի վաստակոց և շահերու ազբիւրներ խցելէն յետոյ՝ արուեստներու յառաջդիմութիւն եւս կը խափանեն : Վասն զի աշխարհիս գեղարուեստից այնչափ անհուն անհամար պէտքերը , զոր միշտ կստեղծէ արուեստագէտ հանձարներու ձեռք . դոքա իրենց ամենամեծ մասերով՝ մեծատանց վայելման համար են :

Իրաւունք տուինք աշխարհիս մեծատանց որ ճոխ ու փառաւոր կեանք վարեն , միայն թէ չ'անցնելով չափաւորութեան ու վայելչութեան սահմանէն : Բայց թէ նոքա այդ իրաւունքը՝ միայն ճանաչեն իրաւունք , և զայն ըստ հաճոյից կատարելով՝ մոռնան ու չը յիշեն երբէք միւս բազմադիմի պարտքեր . այսինքն հացի տնտեսութիւն միայն հոգալով՝ թողուն Աստուծոյ բանը , թողուն բարեգործութեան պարտքերը , չը յիշեն երբէք ժողովուրդի աղքատներ , որբեր , հիւանդներ , անօգնական թշուառներ և իրենց գուներու առաջ ինկած վիրալից Ղազարուներ : Եթէ մոռնան նոքա իրենց մեծամեծ պարտականութեան գործեր , առեկեղեցին , առ ազգն , և ազգային դպրոցներ .

Եթէ ազգին յառաջդիմութեան արակետ ճամբայ
մի բանալու համար՝ իրենց գանձարանին դուռը
չի բանան. Եթէ հայրենեաց բարգաւաճման համար՝
հայրենասիրութեան մեծ պարտիքներ չը կատա-
րեն. Եթէ բախտ յաջողեր է նոցա մեծ պաշտօնեայ
և նախարար եղեր են երկրին կառավարութեան,
ինչպէս առաջինին Յովսէփ, որ յիշեց Յակովբայ
տուն ու լացաւ. այլ սոքա ցյադ ուտեն հաց և չը
յիշեն երբէք Հայկայ քաղցած տունը: Եթէ նոքա
վերջապէս իրենց մեծութեան գանձ ու գութ փա-
կեն առ մարդկային ընկերութեան թշուառութիւն.
միայն ու միայն վայելեն Աստուծոյ տուած բարիք-
ներ. նստին մեծահաց սեղանին վերայ, հագնին
բեհեզն ու ծիրանին, գէթ սեղանին փշրանքներէն
և պատառ մի կտաւէն չի տան աշխարհիս փողոց-
ներու մէջ ինկած Ղազարոսներուն. որպէս զի ո-
գեպահիկ հացն ուտեն և այդ պատառիկ կտաւով
իրենց մերկութիւն ծածկեն կամ իրենց վէրքեր
պատատեն. ամէն ամէն ասեմքեզ, Որդեակ իմ,
այդպիսի մեծատունք անիրաւ են իրենց տնտե-
սութեան մէջ. անիրաւ են երկնից և երկրի սուած,
այսօր և յաւիտեան. որոց համար Քրիստոս իւր
Աւետարանով սպառնացաւ. « Վայ ձեզ մեծ ատան-
ցըդ, զի ընկալայք զմխիթարութիւն ձեր: »

Այսափ դատոեցինք սչխարհիս մեծատուններ.
բայց մեծապէս կանիրաւիմք, Որդեակ, Եթէ ար-
դար տնտեսութեան բեռները միայն մեծատանց
վրայ բարդեմք: Սկսիմք այժմ ժողովուրդի միւս
դասերուն կեանքը գատել. որոց կարգ, վիճակ և
պատիճանը շատ բազմատեսակ է, և ամեն կարգի

մարդիկ և ընտանիք՝ իւրաքանչիւր իրենց ունեւորութեան չափով ուղիղ տնտեսութեան օրէնքը պահելու պարուական են :

Ինչպէս իրաւունք տուինք մեծատանց, որ իրենց աստիճանին պատշաճող պերճութեամբ ապրին : Նոյն իրաւունք կուտանք ժողովրդական դասերուն, որ իրենց վիճակին ու վաստակին համեմատ չափաւոր պարկեցութեամբ ապրին : Բայց երբէք իրաւունք չենք տար ժողովրդական կարգի այն դասերուն, որոց շահ ու վաստակ չափաւոր է . որ նոքա եւս ցանկութեան տենչով ձգտին մեծատանց պէս ճոխագոյն կեանքով վարիլ . առ ոչինչ համարելով՝ ոչ նախատեսութեան և ոչ չափաւորութեան տնտեսող կիուը : Զի թէպէտ քաղաքային օրէնք ազատութիւն կուտայ ժողովուրդին որ իւրաքանչիւր մարդիկ՝ իրենց գոյից և ընչից բացարձակ տէր լինելով՝ ազատաբար վարուին, ազատաբար տնտեսեն իրենց կեանքը : Այլ երանի թէ դորա համար եւս չափ ու սահման որոշէր երկրին կառավարութիւնն . որով թէրեւս անչափասէր ժողովուրդը օրէնքով ու սրով ճանաչէր իւր չափաւորութիւնը : Բայց միթէ հա՞րկ էր դորա համար օրէնք . վասն զի թէ աշխարհի և թէ առունին տնտեսութեանն՝ այդ օրէնքը չափ բնական է մարդուն կենաց մէջ . և իւրաքանչիւր մարդոց բուն, իրենց կեանքէն, գոյքէն, և գանձէն կը բղիի : Խոհական ու բանաւոր տնտեսութիւնն կ'ուսուցանէ որ մարդ իւր չահերտուն չափով կենցաղավարի : Իսկ եթէ ճոխասէր լինելով իւր չափէն ի գուրս նկրտի . աշխարհ զայն կը դատէ ու կը մեղադրէ :

Եթէ մարդ , որ ինքն պարզ քաղաքացի մի է ու չափաւոր շահու տէր , պարզ տուն մի իրեն բաւական չի համարիր , պերճասիրութեան ցանկութիւն զինքն գրդուելով կը ձեռնարկէ իշխանի վայելուչ ապարանք մի շինել , ծանրագին կահ կարասիներով զարդարել . նոյնպէս նուաստութիւն հը համարի նա հետիոտս քալել , իշխանի կառք կը նստի . հրապարակէն կանցնի և կը ցուցամոլի աշխարհին առաջ . չարաչար կը զեղծանի նա անչափաւոր տնտեսութեան մէջ :

Սոյնպէս եթէ սոսկական արհեստաւոր մի , որուն ձեռքն ու մատունք արհեստագործութեան մէջ բրացեր են . մեծամտի իշխանի մատանի գընել . և իւր կին իբրեւ իշխանուհի՝ սիրամարգի պէս պմնազարդելով ելնէ ու նազելով շրջի ժողովուրդի հրապարակի մէջ , ցոյց տալավ թէ և ես կարող եմ մրցիլ հարուստ տիկիններուն հետ . եւս չարաչար կը զեղծանի տնտեսութեան մէջ :

Այլ ո՛վ չի գիտեր ու չը ճանշնար , թէ այդպիսիներն այն ընտանիքներէն են , որոց հացը՝ առաւօտէն մինչեւ իրիկուն կը տեւէ . այսինքն թէ օրական աշխատութեամբ ու շահով կապրին գոքա : Ուստի յայտ է թէ՝ այդ պմնասիրութեան անհարկի պէտքեր թէ պարտքով և թէ խարէական միջոցներով եւս հայթայթեն , ոչինչ փոյթ չ'ունին և չ'են հոդածեր երբէք , թէ այդպիսի անտնտես կեանքի մը ապագայն՝ ընտանեկան կեանքին կործանումն է :

Ահաւասիկ այսպէս կը զեղծանի ուղիղ տնտեսութեան օրէնք , ուղղասէր Որդեակ իմ , երբ

ժողովուրդի կարգեր կանցնին իրենց չափէն ու սահմանէն, թողլով պարզութիւն և սակաւապէա կեանք, չխնայելով իրենց դառն ու չարաշար աշխատութիւնն, մոռանալով թէ մարդ քանի՞ տաժանելի քրափնքով իւր հացը կը հայթայթէ աշխարհիս վերայ:

Աղդ, ժողովուրդ, քաղաքացի, գիւղացի, տէր, ծառայ, հարուստ, աղքատ, առ հասարակ ամէն կարգի մարդիկ երբ կեանքի տնտեսութեան ուղղութենէն կը խոսորին, նոցա ճանապարհ դէպ ի կորուստ կերթայ. նոքա միշտ իւրեանց հարստութենէն կը թափին և աղքատութիւն չուտ կը հասնի նոցա վերայ ինչպէս մի արագոտն սուրհանդակ. Այսպէս հասաւ Բիւզանդիոնի մայրաքաղաքին վերայ. նոյն օրինակ պիտի հասնի բոլոր գաւառացի ժողովրդոց վերայ, եթէ անցեալ փորձերէն և Բիւզանդացւոց տնաւեր օրինակէն ուշաբերելով չխրատուին :

Ե՛, սիրելիդ իմ Սամուէլ, քաջ ի միտ առիր տնտեսութեան այս դասն, դու որ դեռ ուսանող ես և տակաւին տնտեսական կեանքին մէջ չի մըտար: Բայց քո որդիական մեծ պարտիքն է, գիտնալու երախտադէտ լինել. թէ ուսմանդ ու դաստիարակութեանդ համար որչանի անինայ ծախսեր արած եմ. այս մասին մէջ՝ տնտեսութեան հաշիւն իմ չափէն անցուցի, այն տպագային յուսով, յորում կեանքիդ պտղաբեր արդիւնքը բազմապատիկ պիտի քաղեմ:

Ուսիր, Որդեակ իմ, ուսիր այժմէն, որ այն ապագային մէջ, յորում գուցէ ես ի գերեզման

իջած լինիմ դու ողջ մնալով, բարւոք տնտեսես
քո կեանք և հայրենի ընտանիք : Ես հարուստ վա-
ճառաշահ քաղաքացի չեմ, որ բազում գանձ թո-
ղում քեզ ժառանգութիւն : Մի պանդուխտ գիւ-
ղացի հայր եմ ես, և քո ժառանգութիւն՝ մեր
գեղի հողն ու դաշտն է : Ես հող միայն կը թողում
քեզ, հող, որ հազար անգամ ուսկեցանձէն անըս-
պառ անկողոպուտ գանձ է . զոր ես քո պատէն
ժառանգեցի, և այդ անգին աւանդ ողջ ամբողջ
պահեր եմ մինչեւ ցայսօր : Եթին անգամ ի պան-
դըխտութիւն, ելայ . և չուզեցի բնաւ որ թիզ մի
գետին վաճառեմ, մինչ անձկութիւն զիս կստի-
պէր և պարտատեարք զիս ի բանտ կը վարէին :
Այլ միշտ աշխատեցայ ամէն բան զոհել ու հողա-
յին կալուածներս պահել :

Ուխտիւ . զքեզ պարտական կը կացուցանեմ,
Որդեակ, որ հօրդ օրինակին հետեւիս, բոլոր
կեանքովդ ջանացիր գիւղական տնտեսութեան
մէջ յառաջադիմել : Ես քո միտք այս դասերովս
մշակեցի, որպէս զի դու եւս քո հողերդ ու գաշ-
տերդ բարւոք մշակես : Տես դու յայնժամ այն մեր
արգաւանդ հողերն որչամի առատ խոտ ու ցորեան
պիտի տան քեզ :

Եթէ ողջ մնամ ու հետ քեզ դէպի ի հայրենիքը
դառնամ, վա՛, ո՞րքան պիտի հրճուի հոգիս, երբ
տեսնամ քո յառաջդիմութիւն գիւղական տնտե-
սութեան մէջ . որով դու բարի օրինակ պիտի լի-
նիս այն խեղճ գիւղացւոց . որ հողագործութեան
արհեստին մէջ դեռ մանուկ մնացեր են : Միթէ
իրաւունք ունինք մեղագրել զիրենք, երբ ուսումնի

չունին : Իմ և քո սեպուհ պարտիքն է գեղացի մանուկները զարդացնել և կարեւոր կրթութիւն տալ : Փորձով կը տեսնաս դու թէ բնշալէս մանկակիցներդ շուտով կը յառաջադիմեն : Զգիտման դու թէ գիւղական դաշտի ազատ մանուկներ քառնի՞ աշխոյժ և կորովամիտ են :

Վերջին բան, վերջին մի քանի խրատ եւս աւանդեմ քեզ, Որդեակ, և այսպէս աւարտեմ այս կրթական դասգ, որ աշխարհիս վերայ կեանքդ ուղղավարող ուղիղ տնտեսութեան ղեկն է : Այս ղեկն՝ քո հերկագործութեան մաճին պէս ուղիղ բռնէ, և մի թողուր երբէք որ խռառի . զի այդ է միայն որ կեանքիդ բոլոր ակօսներն ուղղութեամբ կը վարէ . և մինչեւ ի գերեզման քո հաց և հարստութիւն չի պակսիր : Զգոյշ, զգոյշ, Աստուծոյ բան չարհամարհես և միայն հացով ապրիս դու . յայնժամ կը մոռնաս մարդկութեան շնորհն ու պատիւ, անսանոց կը հաւասարիս . կապիրատիս նա և նախախնամող երկնից Հօր դէմ . Երբ նորա հացն ուտես և զայն չօրհնես : Սոսկ բերանոյ օրհնութիւն բաւական չէ . այլ և պարտական ես արդեամբք փառաւորել զայն : Երբ այդիդ կը կթես՝ ճռաքաղ մի առներ . երբ արտերդ կը հընձես՝ թափած ու մնացորդ հասկեր թող, որ այրիներ, որբեր և աղքատներ ժողովեն զայն : Այսպէս կը պատուիրէ Աստուծոյ օրինաց Սուրբ գիրք : Ամէն արմտիքէն բաժին ու տասանորդ տուր Աստուծոյ . «Պատուեա զԾէր ի քոյց արդար փաստակոց, և հան նմա պառւղ ի քոց արդարութեան արմտեաց : Զի լցցին շտեմարանք քո ցորենով և

Հնձանք գինեաւ քով առաւել եւս բղխեսցին : Ագահ կայենի նման անուղիղ մի բաժաներ . այլ արդար Արելի պէս պտուղդ հաճոյապէս նուիրէ Աստուծոյ :

Այս է աւասիկ հացին ու բանին ուղիղ տնտեսութիւն, և ես կ'օրհնեմ զքեզ, Որդեակ իմ, որ բոլոր կեանքիդ մէջ հացն առանց Աստուծոյ բանին չ'ուտես . այլ հացն ու բան ի միասին խառնելով կեր, որպէս զի կեանքդ կատարեալ լինի . և դու թէ առ Աստուած և թէ առ մարդիկ պարտիքներդ կատարելով՝ իրրեւ արդար ու հաւատարիմ տնտես ապրիս աշխարհիս վերայ : Յիշէ Աւետարանին առակը, քեզյանձնուած քանքարը շահեցուր . զի Տիրոջ առջեւ պատասխան ունիս տալ, եթէ անհոգութեան վարշամակին մէջ ծրարելով անշահ պահես զայն : Իսկ եթէ տոկոսով հանդերձ հատուցանես, Քրիստոս զքեզ կը գովէ . և Ազնիւ ծառայ բարի և հաւատարիմ որոգիւթեաւ ի սակաւուդ հաւատարիմ եղեր, ի վերայ բազմաց կացուցից զքեզ . մուտյուրախութիւն Տեառն քո : »

ԴԱՍ Ը

ԻՆՔՆԱՇԽԵՎՈՅ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆ

Ինքնաշխատութիւն՝ մարդոյն բնական պարտիք եւ արդար բրահմեն է, իւր կեանի պահով առնեմեն առաւել պաղաքեր յօյսն է, Անիրաւ է մարզ, քէ ու բիշի բրանց ու ձեռաց հացին սպասէ. «Զվասատկս ձեռաց բոց կերիցես. երանիք՝ է մեզ եւ բարի եղիցիս» կը խրատէ Թաւիք :

Սիրելի իմ, Սամուէլ, մարդոյն ընդհանուր աշխատութեան դասն ուսար, և նոյն աշխատութեան արդիւնքն ուղիղ տնտեսելու դասն ուսար. այժմ եկաւ կարգն որ ժողովուրդին ինքնաշխատութեան դասն սկսիմ քեզ. ուշի ուշով միտ դիր դու. վասն զի այս ամենակարեւոր դասն է, աշխարհիս այլև այլ ժողովրդոց յառաջդիմութեան, և բարգաւաճման՝ միակ պայմանն ու ճանապարհն : Քաջ ի միա առ, որդեակ իմ, և ես թուեմ քեզ թէ՝ ինչ են ժողովրդոց ինքնաշխատութեան պարտիքներ, զորս նա պէտք է իւր բոլոր կենաց մէջ պշենատելով, տքնելով կատարել ջանայ. Աշխարհիս վրայ ու իցէ մի ազգ և ժողովուրդ,

իւր կեանք պահող, տնտեսող ու բարւոքող քըրտանաջան մշակն է, իւր արտ վարող մաճակալն է, իւր սերմ ցանող ու հնձող ինքնավարձ աշխատաւորն է, իւր դրախտն ու դարաստանն տնկագործող պարտիզպանն է. իւր տուն շինող ճարտատարապետն է: իւր ընտանեկան կեանքին պէտքերն հոգացող հայր ու տնտեսն է, իւր հաց ու սեղան պատրաստող մատակարար ձեռքն է, իւր արուեստ հնարող հանճարին ազրիւրն է, իւր գործարանին մեքենաները դարձնող մղիչ չոգին է, իւր անձին մերկութիւնը պատսպարելու կտաւագործն է, իւր ամէն շահավաճառութեան վաճառական և խանութպանն է, իւր դպրոցներ շինող ու կարգադրող՝ իւր ընկերական հանդանակութիւնն է, իւր մանուկներ կրթող դաստիարակն է, իւր ներկային մէջ գործող ձեռքն՝ և ապագային մէջ նախատեսող աչքն է. Վերջապէս ժողովուրդին ինքնաշխատութիւն ամենայն ինչ է, այս աշխարհիս վրայ իւր առանձին յառաջդիմութեան համար:

Պէտք է խելամտի ու ճանչնայ ժողովուրդ թէ՝ իւր կեանքն արդիւնաւորողն՝ միմեայն իւր ինքնաշխատութեան ձեռքն է. և գիտեն, որչափ զօրաւոր և որչափ շահարեր է: Մի ազգ և ժողովուրդ՝ եթէ իւր կեանք և բաղդ ուրիշէ կ'ակնկալէ, շատ բնական և յայտնի է թէ՝ իբրեւ երազայոյս պահ մի գիշերուան ծանր քունին մէջ կը խայտայ և առաւօտ ոչ ինչ կը գտնէ:

Մշակ ժողովուրդին անժխաելի ու բնական պարտիզն է, որ իւր հացն ինքնին հոգայ, իւր

արտն ինքն քաղէ . առա թէ ոչ՝ արտն առանց քաղելու կը մնայ , կը կծղի ու կը թօթափին ցորենահատեր , եթէ նա դրացւոյն կամ բարեկամին սպասէ : Այս ճշմարտութիւն իմ կետնքիս մէջ փորձով ճանչցած եմ . դու որ դեռ անփորձ ես , ուշ դիր . ես մի հնոց առակով պատմեմ քեզ :

Արտուտ թռչունն՝ որ թերեւս արտ ուտելիչն առեր է այս յարմար անունն , իւր բոյն հասկաւոր արտի մի մէջ դնելով՝ ձագեր հաներ է : Նախատես ձագամայրն միշտ կ'ապսպրէ իւր ձագերուն , որ միտ դնեն արտին տիրոջ , թէ ի՞նչ կը խօսի . երբ նա իւր տղուն հետ կուգայ տեսնել թէ՝ արտին հնձելու ժամանակն հասե՞ր է : Առաջին անդամ կը լսեն ձագեր և կը պատմեն իրենց մօրն , թէ՝ հայրն իւր տղուն կ'ասէր , Որդեակ , արտը հասնելու մօտ է . գնա խօսիր մեր դրացիներուն թող մեղի յօդն գան , արտն ի միասին քաղեմք : Արտուտն կը պատախանէ , դեռ անհոգ կեցէք . քանի որ արտին տէր՝ դրացիներուն օգնութեան կ'սպասէ , այս արտը չը քաղուիր : Երկրորդ անդամ մտիկ տալով ձագերն՝ այս կը պատմեն թէ՝ գեղացին իւր տղուն կ'ասէր , դրացիներ չ'եկան , գոնէ բարեկամներ հրաւիրէ : Խելացի արտուտն դարձեալ նոյնն կը կրկնէ , հանգիստ եղիք , ձագերս , երբ գործը բարեկամներուն մնացեր է , յաւիտեան չը քաղուիր արտը : Երրորդ անդամ կը պատմեն ձագերն , թէ՝ արտին տէրն՝ վաշ , վաշ անելով իւր տղուն կ'ասէր . որդեակ իմ առ դու քո մանգաղ և ես . մենք մեր արտը քաղենք . այլ եւս դրացեաց , բարեկամաց սպասելն ընդու-

Նայն է : Յեշաղիք ձագերն երբ այս վերջին խօսք
կը պատմեն իրենց մօր , մայրն կը պատասխանէ :
Այժմ ստոյդ կը հաւատամ , թէ՝ արտը պիտի քաղ-
ուի . պէտք է զձեզ տեղափոխեմ :

Այս կրթիչ առակի օրինակէն արդեօք պիտի
հասկանայ ու խելաբերի՞ իւրաքանչիւր առանձին
մարդ և ժողովուրդ , թէ՝ աշխարհիս դրացիներ
և բարեկամներ եւս իրենց արտեր ունին քաղելու :

Եթէ այս այսպէս է , ինչպէս որ է ճշմարիտ .
ուրեմն թող ժողովուրդ իւր յոյս միայն իւր ինք-
նաշխատութեան վրայ գնէ : Եթէ իւր կեանք պա-
հելու համար հաց հարկաւոր է , թող առնէ ման-
գաղ և երթայ իւր արտը քաղէ : Եթէ ջուր պէտք
է իւր չորցած արտը ոռոգելու համար , թող խըց-
ուած աղքիւրներու ակերն բանայ , վտակներու
լցուած առուները հորդէ : Եթէ հանդերձի և այլ
զանազան պէտքերու համար կտաւ կարեւոր է ,
թող բամբակ ցանէ , կտաւ գործէ : Իսկ եթէ փափ-
կութեան պերճանք սիրելով՝ կերպասի կը ցանկայ ,
թող շերամագործութեան արուեստին հետեւելով՝
յառաջ տանի զայն :

Եթէ նախանձելով Եւրոպական ազգաց դեղե-
ցիկ օրինակին՝ գիւտեր և արուեստներ հանճարել
կ'ուզէ . թող նախ դպրոց երթայ , գիտութիւն
սովորի , ինքնաշխատութեան մէջ տքնի , ինչպէս
նոքա :

Իսկ եթէ , կ'ասէ , ես Բ նչպէս ինքնաշարժ ինք-
նաշխատ լինիմ և յառաջ երթամ..... :

Դորա գարման և ճարն ի՞նչ է , գիտե՞ա . դըպ-
րո՛ցն է , դպրո՛ց , և անյուսահատ ինքնաշխատու-

թիւն . ուրիշ ոչինչ : Ես կը տեսնամ գքեզ , այդ քո վիճակին նկարագիրը՝ շատ ճշգրիտ է : Բայց դու պէտք է անվկանեղ մնաս ոգւոյզ մէջ . առանց երբէք լքանելոյ շարունակես ինքնաշխատութիւնդ , գիտնալով որ յառաջադիմութեան ուղին՝ ինքնանուէր շահատակութեամբ կը բացուի : Ես գիտեմ որ խոչեր ու խութեր կան քո ճամբուն վերայ . մի՛ սպասեր որ ամբողջ փոխուին դոքա և դիւրանան քայլերդ : Մի՛ սպասեր դու , ինչպէս այն ապուշ ու բթամիտ ճամբորդն , որ գետափին մօտ կեցած կ'սպասէր մինչեւ անցնի գարուն , անցնի ամառն , աշուն գայ , ցամքի գետի ջուրը և ինքն անթաց ստքով անցնի :

Ժողովուրդ , դու ինքնին գիտես , մեր աշխարհ յորդ անձրեւներ և ձիւներ շատ ունի . մեր գետերու ջուրեր ով գիտէ երբ կը ցամքին . ուրեմն սրունքդ բաց , անվախ մտիր ի գետն , մինչեւ պարանոցդ ջրաթաղ եղիր և անցիր ի միւս կողմն :

Իսկ եթէ կ'ուզես գետերու յորդ ջուրերէն , աշխարհիս ծովերէն անկասկած անցնիլ , քաջ ուսիր լողալու արուեստն . և ո՞ւր տեղ , այդ եւս դպրոցի լճին մէջ . թղթով , գրով , և ինքնաշխատ կրթութեամբ :

Թերեւս դու այնպէս կը կարծես որ , արեւմըտեան ժողովուրդին յառաջգիմութեան քայլերուն դէմ ծովեր ու գետեր չ'ելան : Ո՛չ , դու կարդա այդ ժողովուրդի պատմութիւն և պիտի ապշիս ու զարմանաս , որ նա ջրոյ և ծովու հոսանքներէն անցաւ , մինչեւ ի գլուխ տարաւ յառաջգիմութեան և գիտութեան յաղթանակ : Դու մի՛ վճարիր երբ

կը տեսնաս որ ուղիներդ դժուարին առապարներ են . այդ ամէն ինքնաշխատութեան ոտքիդ առաջ կը հարթուին և կը դիւրանան . միայն թէ դու մի՛ վաստարտիր :

Ձեռքերդ ծոցէդ հան , մի անգամ ինքնաշխատութեան սկսէ . ի զուր է , յուստեքէ օգնութիւն մի՛ սպասեր , միթէ փորձով չը տեսա՞ր թէ՝ աշխարհիս վրայ քեզ ոչ ոք օգնական կայ , ուսաի ի բերան առ Դաւիթին այն բան և աշերդ գէպ երկնից բարձրութեան դարձնելով աղօթէ « Համբարձի զաշս իմ ի լերինս . ուստի եկեսցէ ինձ օգնութիւն » Ասա դու . « Օգնութիւն ինձ ի Տեառնէ եկեսցէ , որ արար զերկինս և զերկիր : » Մի մոռնար , կարդանաև Դաւիթին միւս խրատ . « Մի յուսայք յիշխանս որդիս մարդկան . զի ոչ գոյ փրկութիւն ի նոսա : » Եւ թէ . « Երանի ազդի որոյ Տէր Աստուած Յակոբայ օգնական է նմա և յոյս նորա ի Տէր Աստուած է : »

Ուրեմն յոյսերդ յԱստուած և ի քեզ ժողովէ , վհատեալ ժողովուրդ , և գոնէ գիտցիր այսուհետեւ թէ՝ դու ինքնդ ես միայն քեզ օգնական :

Այո՛ , քո ձեռքն է քեզ օգնական , երբ գործես , արուեստահնար լինիս : Քո աչքն է քեզ օգնական , երբ նայելով շուրջդ՝ հեռատես լինիս , ներկայէդ քո ապագայն չափես ու տեսնաս : Քո միտքն է քեզ օգնական , եթէ զայն լրւսաւորես և թողմուս ագիտութեան մտաւոր ու կամաւոր կուրութիւնդ : Քո դպրոցներն են քեզ օգնական , եթէ մանուկներդ կրթես գիտութեամբ : Քո հարենի հողն է քեզ օգնական , երբ դու զայն ար-

հեստիւ մշակելով բեղմնաւորես : Քո բազմարօտ լեռներ և հովաստւն հովիտներն են քեզ օգնական , եթէ խաչնադարման լինիս և յիշես դու նահապետներուդ հովուական կեանք : Քո այգետունկ որթերոդ և պարտիզիդ ծառերն են քեզ օգնական , եթէ քաջ մշակելով գինւով ու պտղով լնուս վաճառանոց : Քո տնտեսական ճարտարամուռութիւնն է քեզ օգնական , որ դաշտին մէջ հող սիրես , և քաղաքին մէջ արուեստ և վաճառականութիւն : Քո հայրենեաց միութեան սէրն է քեզ օգնական , եթէ իբրեւ մայր գիրկդ բանաս , պանդուխտ ու գաղթական որդիներգ անդրէն ժողովես և չը թողուս որ այլ եւս գրկէդ հեռանան : Քո հայրենի կրօն , Հաւատ ու Եկեղեցին են քեզ օգնական , թէ չմեղկանաս ի կրօն , չլինիս հաւատաքըրքիր . այլ պինդ պահես հայրենի կրօնիդ սուրբ աւանդ , զոր արիւնով ու մահով քո նախնիք քեզ անկորուստ աւանդեցին : Վերջապէս քո ընկերսիրութեան և միայօդ հոգին է քեզ օգնական . եթէ զայն ուխտիւ պահես , և ի բաց մերժես երկպառակութեան ոգին , որ աւերիչ քանդիչ է ազգին ու հայրենեաց :

Է՛ , անձկալիդ իմ Սամուէլ , պահ մի զքեզ թողի , խօսքիս դէմը առ ժողովուրդն ուղղեցի և դու միտ գրիր . աշխատութեանս աւանդ կը կարդամ , որչանի այսպիսի ոգետու յորդորներ , խօսքեր գրեր ու գրեր եմ հայ ժողովուրդին համար : Նա միշտ մտագիւր լսեց ու կարդաց , բայց դեռ կը ասատամի , վարանամիտ կը լինի . չշամոզուեցաւ թէ՝ իւր հաց , իւր կեանք ու բարեկեցու-

թիւն, իւր փառք և յառաջդիմութիւն՝ միմիայն իւր ինքնաշխատ ձեռքով, ոտքով ու մտքով կը լինի. իւր ճակատին քրտանց վաստակով կը լինի, իւր առանձին խելքով ու խորհրդով կը լինի: Ընդունայն է օտարի ձեռքէն ու սեղանէն հաց սպասել, ինքնաշխատութեան յաջող ժամանակն միշտ ներկայն է, ինքնաշխատ մշակ ներկային մէջ լիաբուռն կը ցանէ, որ նա ապագային մէջ առատապէս հնձէ:

Թոյլ տուր այժմէն ողբամ, Որդեակ իմ, թէ Հայ ժողովուրդ սրտի մտօք այս դասեր չլսէ, ժամանակն աշխարհիս մեծ վարժապետն է, դժպհի դաւազանով պիտի լսել տայ իրեն, և նա յայնժամ իրրեւ դպրոցի բթամիտ մանուկ պիտի նստի ու լսյ, հեկեկալով ու կոծով սերտէ այս դասերը:

Իսկ գու, սրամիտ Որդեակ իմ, ականջգ բաց, առանց գաւազանի լսէ իմ դասերս. յիշէ որ զքեզերբէք ոտնապիրկ գանով չխրատեցի: Յիշէ թէ ես իմ հայրական պարտքս լիովին կատարեցի. թէ հացով, թէ ուսունքով միապէս ու հաւասար անկարօտ կեանքդ զպրգացուցի: Այսուհետեւ զքեզ ազատ կը թողում, որպէս զի դու ինքնին քո ինքնաշխատ ոտքով յառաջդիմես դէպի ի լաւագոյն ապագայն, որչափ մոռքիդ կորով և յարատեւող ջանքդ քեզ ասպարէզ կուտան:

Դու մինչ մանուկ էիր, իմ ծնողական պարտիքս էր որ ձեռքէդ բռնելով օգնէի տկար քայլափոխութեանդ: Այժմ ջիլերդ ու սրունքներդ զօրացան, ուժաւոր կտրիճ մի դարձար. այլ եւս ազատաքայլ կը թողում զքեզ: Ես բնաւ չկամիմ

նմանիլ այն կարճամիտ հայրերուն, որք մինչեւ ցմահ խնամակալ լինել կուզեն իրենց արրուն հասակ որդիքներուն. և այս յոռեգոյն դաստիարակութեամբ տիրապետ կը լինին, կը ջլատեն ու կը ձնշեն նոցա զործնէութեան ոգին. և յետոյ կր դառնան գանգատ կը բառնան թէ՝ մեր զաւակներ անգործ անպիտան են :

Խորհելոյ և դործելոյ ինքնաշխատութեան ազատ իրաւունք կուտամ քեզ, բայց երբէք չեմ կամիր որ գու այդ ազատութեան մէջ զեղծանիս, յանձնապատան լինիս, անխորհուրդ վարուիս և բարձրութենէդ գահավիժիս ի վայր. այլ այժմէն խրատ կաւանդեմ քեզ. որ ինքնաշխատ գործերուդ մէջ յարգես ու պատուես ծերերուն խոհական խրատ և խորհուրդ, վասն զի նոքա կեանքի փորձառութեան դասերը քաջ սովորած են. մինչդեռ դու անփորձ և խակ ես, միայն խօսքով ու գրով գիտես :

Գնա, զօրացիր. Որդեակ իմ, գիւղական կենաց ինքնաշխատ արդար մշակութեանդ մէջ ձեռքովդ ցանէ, ձեռքովդ հնձէ, հացդ ու սեղանդ ձեռքովդ պատրաստէ. նստիր, քրտանցդ իրաւունքովդ կեր քո ձեռաց վաստակ. այս թողլինի միշտ քո բարեվայել կեանք. քանի որ կենդանի եմ, տեսնամ քո աշխատութեան յառաջդիմութիւնն, և հրճուի հոգիս. Ես մրցանակ կուտամ քեզ միայն հայրական օրհնութիւնս և աշխարհէն ոչինչ բան մի սպասեր. ծանիր, որ քո նշմարիտ մրցանակն՝ ինքնաշխատութեանդ արդեանց, քո ձեռահիւս պատկն է. և այն բաւ է քեզ:

ԴԱՍ Թ.

ՀԱՆՁԱՐ ԵՒ ԸՆԿԵՐԱԿԱՆ ԶՈՐՈՒԹԻՒՆ

Խթեաշխատութեան դասով ուսար , հան-
նար և բնկերական զօ-
բութիւն , այս երեք հզօր
միացեալ դաշտակիցներ .
աշխարհիս կեանքը յեղա-
շրբքելով յառաջդիմու-
թեան հրաշգներ զործեցին,
և նոյն իսկ մարդն ինք-
նին կապչի կը զարմանայ
բէ ի՞նըն է զործող արդիօ :

ՆԱԽՈՐԴ ինքնաշխատութեան դասով ուսար ,
Որդեակ իմ , թէ աշխարհիս վերայ ժրագործ մար-
դոյն ձեռք իւր ինքնաշխատ զօրութեամբ կարող
է յառաջադիմել առանձին մարդ կային ընկերու-
թեան մէջ . իսկ այս դասին մէջ պիտի ուսանիս
թէ ի՞նչ է զօրութիւն ընկերական միութեան , ո-
րոյ առաջ աշխարհիս գժուարութիւններ կը գիւ-
րանան . և ինչ որ մի մարդոյն ձեռք կարող չէ
գործել , ընկերական հոգին միութեամբ կը մեծա-
գործէ : Վասն զի մարդոյն ինքնաշխան զօրութիւն՝
եթէ ընկերական միութեան ուժին հետ չմիանայ ,
եթէ առանց հազորդող տարածութեան՝ իւր զօ-
րութեան արգասիք միայն իւր մէջն ամփոփելով

պահէ , յայնժամ այդ առանձնական զօրութեան սերմ ոչ կաճի , ոչ բեղմնաւորելով կը բազմապատկի . այլ կը մնայ նոյնչափ , որչափ մի անհատ մարդ իւր ինքնաշխատութեամբ ձեռք բերեր է :

Սորա համար մի պարզ ու համոզիչ օրինակ տամ քեզ . Եթէ շոգւոյն մեծ զօրութիւն գտնող հեղինակն՝ այդ աշխարհաշէն գիւտ իւր մտքին և տան մէջ թագուցանէր ու չհանէր զայն ընկերութեան հրապարակն , ի՞նչ արդիւնք կընծայէր աշխարհին , ոչինչ : Ինքնաշխատ հեղինակն իւր հանճարած գիւտին հետ կը մեռնէր , և շոգին իւր մաշած ուղեղին հետ կը ցնդէր գերեզմանին մէջ . և այսպէս հանճարն և գիւտ ի միասին կը կորսուէր :

Այս մի օրինակ քեզ բաւական է . դու ինքնին իմաստասիրէ և կիմանաս . թէ մարդոյն ինքնաշան զօրութեան հետ՝ պէտք է միանայ ընկերական միութեան զօրութիւն . ապա թէ ոչ՝ հանճարին սերմն ապարդիւն կը մնայ , կամ շատ շատ՝ իւր սերմնագիւտ մշակին միայն առօրեայ հաց կը հայթայթէ :

Մի մարդ , մի զօրութիւն , մի հանճար թող որչափ կուղէ ինքնաշխատ լինի , մեր ընկերական աշխարհ չի շիներ : Դու տեսնք ես , որ մի մարդ՝ մի քաղաք կամ մի գիւղ չինէ . կամ մի թագաւոր ինքն առանձին մի տէրութիւն կազմէ առանց ժողովուրդին :

Եւ , Թրդեակ իմ , երթանք հետ քեզ ի պարտէզ , ես ցոյց տամ քեզ բնական օրինակները . Տես դու այդ ձեռատունկ ծառեր , երկիրը փորէ ,

արմատներ դիտէ . դէպ ի վեր նայիր , դէպ յարե
բարձրացած ամեցուն ճիւզեր դիտէ . կայ մի ծառ ,
որ մի արմատով և մի ճիւղով աճի ու պտղաբերէ :
Երթանք ի դաշտ , որ քեզ աւելի շատ բնական է ,
և դու տեսեր ես ու գիտես . թէ մի մշակ մի
եղնով կամ մի լծով կարո՞ղ է գութան լըծել և
գետին վարել , մանաւանդ երբ կորդացած լինի .
կամ սերմնացան , որ մի հատիկ ցորենով մի ամ-
բողջ արտ ցանէ :

Շատ ճշմարիտ են կիներուն առածը , թէ մի
ծաղիկ դարուն չի բերեր . մի մեղուն մեղը չի շի-
ներ . և ոչ խսկ պուտ մի ջուր՝ ջրաղացի ծանր քա-
րը կը դարձնէ . մի կաթիլ անձրեւ՝ մի աղբիւր
և մի վտակ , գետեր չեն կազմեր .

Այդ ամենուն պատճառ մի հետազօտեր , ինք-
նին յայտնի է . երբ փոքրիկ զօրութիւն մի՝ մար-
դոյն մէջ կը մնայ առանձին առանց ընկերական
մեծ զօրութեան , թէ հանճարով և թէ բաղկով
հուժկու մարդն ապիկար կը դառնայ . նա մի խել-
քով և ուժով ոչինչ կարէ գործել աշխարհիս վե-
րայ . խեղճ ինքնաշխատ մարդ կը վարանի ինք-
նին , կը շիջանի նաեւ հանճարին լոյս առանց իւր
շուրջը լուսաւորելու :

Այո' , հանճարին զօրութիւն՝ գաղափարի աղ-
բիւրն է . որ կը բղխի մարդոյն մտաւորական ակ-
նէն . եթէ ջրոց վտակներու պէս վազելով չը ծա-
ւալի ընկերութեան հրապարակը , կամ նախանձոտ
հանճարը ջանայ իւր ջրով միայն իւր պարտէզ ջը-
րել , և չիմանայ թէ հանճարին փոքրիկ աղբիւր
քանի վազէ ու տարածի՝ գետի պէս կ'առատանայ .

թէ թումբ կանգնես իւր գիմաց և արդիլես՝ անդէն իւր տեղը կը ցամաքի և կը չըքանայ :

Աշխարհիս բոլոր գիւտերու ինքնաշխատ գրիչ հեղինակներն իրենց նորանոր գիւտեր միշտ փոխ տուին ընկերութեան . և տես դու թէ ի՞նչ գործեց ընկերական զօրութիւն : Հանճարներէն մի փոքրիկ աղբերակ կամ լուսոյ նշոյլ մի առնելով այնշափ ծաւալեց և ընդարձակեց , մինչեւ բովանդակ . աշխարհ ողողեց ջրով ու լուսով , և այսպէս առաւել եւս պայծառ պսակեց հանճարին արդիւնքը և փառաւորեց զայն :

Եթէ հանճարին սերման գիւտը նմանցնեմք մանանեխի հատիկին , որչափ կը յարմարի Աւետարանի այն առակին , զոր Թրիստոս իբրեւ օրինակ բերաւ , այսպէս ասելով . Մանանեխի հատիկին ամէն սերմերէն փոքրագոյն է , և երբ ցանես զայն՝ կը բուսնի և աճելով մեծ ծառ կը դառնայ , մինչեւ կուգան թռչուններ և նորա ոստերուն վերայ կը հանգչին :

Այսպէս նաեւ եթէ հանճարին հատիկն առանձին մնայ իւր ինքնաշխատ մշակին պարտէզը՝ ոչինչ առաւելութիւն չունի : Բայց երբ ընկերութեան դարաստանին մէջ ցանուի , անդէն վազվաղակի կը բուսնի և աճելով ահագին մեծ ծառ մի կը դառնայ . իւր միւղեր բոլոր աշխարհի վերայ կը սփոէ , և իւր անհուն առաւ պտուղները կը վայելէ մարդկային ազգ :

Խօսիմ ու պատմեմ քեզ , Որդեակ , թէ հանճարին փոքրիկ զօրութիւն՝ ընկերական ամենամեծ զօրութեան հետ միանալով ի՞նչ գործեց և ի՞նչ

արդիւնք արտադրեց արեւմտեան աշխարհին մէջ ,
որք արեւելեան անգէտ ժողովրդոց համար կը թւ-
ռին թէ այդ գործերը գերմարդկային հրաշքներ
են . Ընկերական միացեալ զօրութիւնը՝ շոգւոյն և
մեքենային ոյժը՝ իւր զօրութեան հետ միացնելով
ծովն ու ցամաք հնազանդեցուց իւր ոտքին առաջ :

Դու կարե՞ս թուել թէ այսօր ո՞րչափ անթիւ ,
անհամար շողենաւներ կան ու կը շրջին աշխարհիս
ծովերուն վրայ : Մովամայր Ովկիանոսին տարա-
ծութիւն , զոր երթենն մարդիկ անծիր և անսահման
կը կարծէին , շոգին ու մեքենայն զայն մի քանի
աւուր մէջ կը չափեն : Խեղճ ֆօլոմպոս այն ինչ
տարիներով կը դեգերէր նոր աշխարհ գտնելու հա-
մար . այսօր Լօնտոնէն մինչեւ յԱմերիկա տասն ա-
ւուր մէջ կը չափեն : Մովու մեծ կէտ վիթխարի
Լեւիաթան զարմացաւ , երբ տեսաւ որ քան զինքն
մեծագոյն հազարաւոր փայտակերտ , մարդաշէն
Լեւիաթաններ ծովու թագաւորութեան տիրելով՝
ազատաբար կը լողան . իւր գլուխ և առւտ քաշեց
ու սոսկալով մտաւ ծովու խորութեան մէջ ծած-
կեցաւ :

Յովք կ'ասէ թէ այդ մեծ ծովային վիշապը՝ մե-
ծագործ Արարիչ հրեշտակներու համար ստեղծեց ,
որ զբօսնուն և խաղան նորա հետ : Թող այժմ այդ
զբօսասէր հրեշտակներ մարդոց հնարած Լեւիա-
թաններուն հետ խաղան , ու ճանշնան թէ աշ-
խարհիս որդիքներ քան զիրենք աւելի իմաստուն
և հնարագէտ են . որպէս վկայեց Յիսուս :

Դիտեն և չկարծես գու թէ շոգենաւուց գիւ-
տը միայն մարդկային չահավաճառութեան չահա-

բեր եղաւ , այլ և դորա հետ ապահովեց նաեւ մարդոյն ծովագնացութեան կեանքը . այն ինչ աստի գրեթէ մինչեւ վաթսուն տարի յառաջ նաւապետ , նաւաստին , ուզեւոր առ հասարակ ծովալեկոծ ահեղ փոթորիկներուն պատահելով՝ շատ անդամ կուր կը լինէին ծովուն ու ձկներուն , խորանդունդին մէջ ջրաթաղ լինելով , անհող և անգերեզման :

Մարդ երբ իւր հանճարով և ընկերական զօրութեամբ ծովու կոսանուտ կոհակներու վերայ յաղթանակեց , դարձաւ դէպ ի ցամաք . ասաց թէ կարող եմ արդեօք սարն ու ձոր հարթել հաւասարել այնպէս , ինչպէս ծովուն մակերեւոյթ :

Այո՛ , մարդն Աստուած չէր , բայց՝ Ասաց և եղեւ : Իւր հանճարով և ընկերական ուժով այդ ամէն գործեց , հողին վերայ երկաթէ ուղիները յարդարեց , հնարիչ ճարտարագէտի մի ճեռք չոգեկառք չինեց . ընկերութեան զօրաւոր ճեռք հազարաւոր կառախումբեր նորա ետեւն կապեց ու շարեց : Մարդիկ այն օրէն գիտես թէ թռչնոց թեւ առին . աշխարհէ յաշխարհ , քաղաքէ ի քաղաք թռչելով՝ անդադար կերթան կուգան :

Թէ կարծես ի համար բեր և հաշուէ , այդ երկու միացեալ զօրութիւնք , շոգին ու մեքենայն , Բնէ մեծ արդիւնք ընծայեցին աշխարհի : Եթէ այսօր Ասիացին , Եւրոպացին , Ամերիկացին , Զինացին , Ճարտացին և Հնդկացին զիրար կարող են տեսնել ու ճանչնալ . այդ շնորհ հանճարին և ընկերական զօրութեանն է , որ մին շոգենաւ և շոգեկառք հնարեց , և միւսն իբրեւ զօրավիր՝ ձե-

ուըն տալով ի գործ դրաւ : Եւ այսպէս աշխարհ
առ աշխարհ , ժողովուրդ առ ժողովուրդի բրեւ
մի քաղաքացի և դրացի կապեց :

Ո՞վ դիտէ , թերեւս ապագայ աշխարհին մէջ
մեր բնակավայրը հողադունդն ամրողջ այնպէս լի-
նի , ինչպէս մի քաղաք , զանազան ազգեր և լեզու-
ներ միանան , մի ազգ , մի ժողովուրդ կազմեն .
աշխարհս դէպ ի իւր նախնական վիճակ դառնայ և
երթայ հասնի միազգութեան նախադար . երբ
մարդիկ մի երկիր , մի լեզու ունէին , ինչպէս կը
պատմէ Մովսէս . « Եւ էր երկիր մի և լեզու մի » :

Թողունք հաղորդակցութեան դիւրութիւնը .
Թողունք շահավաճառութեան ամենամեծ ար-
դիւնք . յորում աշխարհիս ազգեր ու ժողովուրդ-
ներ կըզբաղին ու կը պարապին մեր անյագ կեան-
քին անհուն պէտքերը հոգալու համար . թողունք
այն ամէն նիւթական շահաբերութեան արգասիք .
զորս մարդոյն ցանկութիւն իւր ճարտարութեան
արուեստով հնարեց . խորհինք , յառաջ բերենք
ու հաշուենք բարոյական մեծ շահն :

Վասն զի թէ չոգենաւն և թէ չոգեկառքը , այս
երկու արագընթաց զօրութիւններ եթէ թեւ չի
տային մարդոց ընկերային հաղորդակցութեան ,
հեռաւոր աշխարհաց , վայրենի և կիսավայրենի
ժողովուրդներ կը մնային այնպէս իրենց հնու-
թեան մէջ , որոց վերայ տիրեր էր տղիտութիւն ,
թշուառութիւն և խաւար կեանք : Այն օրէն երբ
չոգին լոյս տարաւ նոցա , այն օրէն սկսեցին լու-
սաւորիլ և տակաւ տակաւ մօտենալ քաղաքա-
կիրթ աշխարհին :

Քաղաքակրթութիւն ուր որ ծնաւ , իւր անձուկ հորիզոնին և խանձարուրին մէջ կը մնար . նա չէր կարող իւր լոյսը մինչեւ հեռաւոր և անծանօթ տեղեր տարածել , լոյս տալ ու քաղաքակրթել բարբարոս ազգերը :

Հանճարին և ընկերական ուժին զօրութիւն միայն այդ հրաշքներ չի գործեց . այլ եւս շատ և անհամար արուեստական հրաշքներ յառաջ տարաւ , և այնչափ , զոր ես չկարեմ թուել . Արուեստից ծնունդներ այնքան բազմապատիկ են , որոց վերայ մարդոց միտք կը հիանայ , կառչի ու չի հաւատար թէ ինքնաշխատ մարդոյն հանճարն է ծներ զանոնք :

Եւրոպիոյ բիւրատեսակ արուեստից այն հսկայ մեծագուծ չէնքեր , որք գիտես թէ մէն մի մեծագուծ քաղաքներ և պալատներ են . այն անդուլ անդադար շոգեշարժ ահագին մեքենայից ահագին զօրութիւն , որոց միոյն ուժը՝ հազար ասեմ , երկու հազար ասեմ , մարդոց կամ ձիոց ուժին հաւասար է : Հապա այն բիւրաւոր միլիօնաւոր գործաւորաց աշխատութիւնը , որք շոգիին զօրութեան հետ միանալով՝ անբաւ և այնչափ արդիւնք կարտադրեն և բովանդակ աշխարհիս մարդոց կեանքին համար պէտքերը կը պատրաստեն . որոց չափն ու քանակութիւն անհնարին է կըռել ու չափել :

Յանկացայ ես , այլ բախտն ինձ չյաջողեց : Որդեակ իմ , երանի՛ թէ քեզ մի նուագ յաջողէր իրթագիր Եւրոպիոյ այն հրաչից աշխարհը , կենդանի աչօք տեսնայիր , զարմանայիր թէ բնչպէս

մարդոյն հանճար և ընկերական զօրութիւն ձեռն
ի ձեռն տալրվ՝ գիտութեամբ , ճարտարութեամբ ,
արուեստով մարդկային հին կեանքն , որ երբեմն
ունայն և դատարկ էր , զայն լցուցեր են և լիա-
ցուցեր մինչեւ ցրերան . և աւելորդն յորդեալ
գետերու և հեղեղի նման՝ աշխարհիս չորս կողմ
կը վազէ ու կը տարածի , այդ անհուն շահավաճա-
ռութեան հոսանք :

Քաջ խելամտեցած , Որդեակ իմ , որ ինքնաշ-
խատ հանճարն՝ ընկերական միութեան հսկայա-
քայլ ոտքով արագապէս յառաջադիմեց աշխար-
հիս վերայ : Ճարտարագիտին հանճարն՝ իւր մի
ոտքով միշտ կազ կը մնար , և կարող չէր նա գէթ-
դանդաղ կրիային չափ ծանրացայլ երթալ , եթէ
ընկերական ուժն օժանդակելով յառաջ չը վարէր
զայն :

Քաւ թէ , այսպէս դատելով՝ ես կուրանամ հան-
ճարին իրաւունքը , և դու այնպէս չը կարծես ,
հանճարասէր Որդեակ իմ , այլ և կը խոստովա-
նիմք որ մեծ մրցանակն ու փառք հանճարին կը
վայելէ : Վասն զի յառաջադիմութեան առաջին
տարերք , առաջին հիմնաքարեր հանճարներ կը
համարուին . իսկ չէնքն ընկերութիւն կաւարտէ .
և մերթ եւս մի հանճարին պակասն՝ մի ուրիշը կը
լրացնէ : Ինչ որ հանճարը կը ծնանի ու կը ստեղ-
ծէ , ընկերութիւն դայեակ կը լինի և զայն իբրեւ
մանուկ սնուցանելով կը զարգացնէ : Հանճարը մի
տաղանդ կուտայ . և ընկերութիւն զայն ի պործ
կը դնէ և անհատնում շահերով կը բազմապատկէ :
Թիւր օրհնութեան և յիշատակաց արժանի

Կուտթէմպէրկ՝ տքնելով տքնելով վերջապէս հանձարեց տպագրութեան գիւտն, որ առաջին անգամ շատ փոքր ու անկատար էր. եկան վերջին հանձարներ և կատարելագործեցին զայն. Ելան նաեւ ընկերութիւնք, որք հսկայաշէն տպագրական տուներ հաստատեցին, մեծամեծ չոգեշարժ մեքենաները դրին նոցա մէջ, և այնչափ յառաջ տարան ու զարգացուցին տպագրական արուեստը, որոյ նիւթական ու բարոյական շահաբերութիւնը՝ թէ ասեմ Ովկիանոսին չափ ծովացաւ աշխարհիս վերայ, հաւատա գու:

Այն երկաթէ հրաշալի Մամուլը թէ ոսկւով թէ լուսով միանգամայն փայլեցուց աշխարհ: Թէ չը լինէր լուսասփիւռ Մամուլը, ինչ կը լինէն այնչափ գրագէտ հեղինակաց հանձարին երկասիրութիւնք, ոչինչ, այնպէս անլոյս անհոգի կը մնար ու կը մեռնէր ինչպէս վիժած մանուկ մի իւր մօր արգանդին մէջ: Այս, եթէ Մամուլ իւր գրերով իւր թեւերով հանձարին ստեղծած գաղափարին լոյս չտարածէր իմացական աշխարհին հորիզոնին վերայ, այլ եւս լոյսն ու գաղափար ոչ կենդանի կը մնար, ոչ կ'արդիւնաւորէր մարդկալին լուսաւորութեան համար, հապա մի ափ մոխիր կը դառնար հանձարը, մարդոյն հետ կը մեռնէր և կը լցուէր գերեզմանի սափորին մէջ:

Այսպէս չեղան մեր նախնեաց հանձարէն ծընած անգիւտ ձեռագիրներ և կնութեան յիշատակարաններ: Ո՛հ, կամ բարբարոսաց ձեռքով հրոյ ճարակ եղան. կամ իբրեւ վարձք և բարեպաշտութիւն, անգէտ մարդոց ձեռքով իբրեւ մե-

ռած դիակներ հողին մէջ թաղսւեցան։ Մեծ գովութեան և ազգի երախտագիտութեան արժանի են Մխիթարեան ուխտին գրավաստակ Հարք . որք ինքնաշխատ ջանքով աստի և անտի մեր հին գըրական մնացորդ նշխարներ ժողովելով ի լոյս ընծայեցին . Փտտած ու փոշոտած ձեռագիրներ , որք իբրեւ ճրագ գրուանի տակ դրուած վանքերու մութ խորչերուն մէջ ծածկուած մնացեր էին , անլոյս և ապարդիւն , տպագրութեան լուսով ելան կենդանի ժողովուրդին մէջ մտան , և այսուհետեւ անմահ են :

Եթէ մի կուտթէմպէրկ եւս քսան դար , երեսուն դար յառաջ Մասիսին տակ ծնէր , մեր աշխարհին վէպեր , մեր քաջ դիւցազանց գործեր , թէ գրական և թէ մեր հին հարց կենդանի աւանդութիւնք , և ինչ որ մեր հայրենեաց անուն և փառքը կը պատմէր այս ներկային մէջ . անշուշտ այդ ամէն անցելոյն ստուերին տակ չէր մնար , և մեք այսօր մի քանի կրծատ , բեւեռագիր արձանագրութեանց չէինք գիմեր . որոց ամենագժուարին վերծանութեան համար աշխարհիս հնագիտաց ուղեղներ կը տանջուին :

Ուրեմն խոստովանիմք , Որգեակ , թէ մի հանձար՝ իւր կապարեայ գրերով և տպագրութեան մամուլով գրական մշակներու վաստակն անմահացուցին , և սորա փոխարէն գրական հանձարներն եւս զկուտթէմպէրկն անմահացուցին : Եւ այս իսկ զարմանալի է . զի հանձարներու հոգիներն՝ իրարու անմահութիւն կը ներշնչեն , և մինն՝ միւսին գործն ու յիշատակ կը փառաւորէ :

Մեք եւս պարտական եմք միշտ յիշել ու փառաւորել հանճարներուն յիշատակ, վասն զի նոքա եւս իրենց Տօնացոյցն ունին, և զիրենք կը տօնախմբէ քաղաքակիրթ աշխարհ։ Եւ միթէ արժանի չեն նոքա որք իրենց ինքնաշխատ կեանք գիւտերով արդիւնաւորեցին, և ոմանք եւս հացակարօտ անձնազոհ մեռան։ Այո՛, այդ հանճարոյ նահատակներ մարդ էին ու մեռան։ բայց իրենց պտղաբեր կեանքին անմահ և անսպառ արդիւնքն այսօր բովանդակ աշխարհ կը վայելէ։

Քրիստոս՝ Աւետարանի քարոզութեան ինքնաշխատ մշակներ օրհնեց և ասաց. « Զի դուք երթայցէք և պտղաբեր լինիջիք և պտուղն ձեր կայցէ»։ Այո՛, խաչէն մինչեւ ցայսօր հազար ութն հարիւր այսչափ տարի է, այդ խաչակիր մշակներու պտուղն երթալով կանի ու կը մնայ։

Միթէ կը մեղանչեմ կամ չափազանց կը համարիս դու, եթէ ես զհանճարներ՝ քաղաքակիրթութեան առաքեալ կոչեմ։ Վասն զի եթէ հանճարներն՝ քաղաքակիրթութեան սնուցիչ և դայեակ չը լինէին, քաղաքակիրթութիւն իւր խանճարուրին մէջ կը մնար իրեւ մանուկ առանց աճման։

Այլ ինչպէս գրեցի ի վեր, հանճարներն եւս մանուկ կը մնային, եթէ նոցա օժանդակ չը հասնէր ընկերական քաջալերիչ ոգին և զօրութիւն։ Ի՞նչ պիտի ընէր ինքնին այն կորովի և նկատող աչքն, որ փոքրիկ կաթսայի մի վերայ, եռացող ջուրին վերմղիչ բուռն շոգիէն շարժող ու վարող մի ահաւոր զօրութիւն գտաւ։ Միթէ կարող էր նորա չքաւոր ձեռն վիթխարի մեքենաներ ձուլել կամ

ահագին շոգեկաթսաներ կազմել . Ի՞նչ պիտի ընէր այն թագուն էլքդրիկ զօրութեան գտիչ . որով անբարբառ երկաթէ թելին խօսիլ տուաւ : Միթէ նորա ձեռն բաւական էր ; որ աստի մինչեւ ի չնդկաստան մինչեւ յԱմերիկայ երկաթէ թել ծըգէր : Մեր լեռնցի ճարպիկ քիւրտեր այնպէս կը հաւատան թէ այդ երկաթէ թելերուն մէջ սատանայ կայ , բայց սատանան իրենք են . գիտմս դու , վասն զի դոքա շատ անգամ ձողիներ կը կործանեն , հեռագրի թելերն՝ իրենց թրերով կը կտրեն , որպէս զի իրենց գողութեան լուր հազորդելով չի յայտնէ կառավարութեան :

Այսպէս ահա , ցանկալիդ իմ Սամուէլ , հանճարն և ընկերական զօրութիւն դաշնադիր եղան , մին՝ միայն սերմ տուաւ , և միւսն զայն ցանեց և ժրագործ ձեռքով ու մեծ տնտեսական գիտութեամբ մշակեց . ամենալի բարութեամբ լցաւ , լիացաւ , բարգաւաճեցաւ արեւմտեան աշխարհ . Այսօր իւր որդիքներ ամենառատ սեղանի վերայ նստած՝ կշտապինդ կը վայելեն հանճարին և ընկերական ձեռաց պատրաստած բարիքներ :

ԴԱՍ Ժ

ԵՐՋԱՆԻԿԻ ԵՒ ԱՊԵՐՋԱՆԻԿԻ ԿԵԱՆՔ ԱԾԽԱՐՀԻՍ

Երջանկուրեան ծաղիկներ եւ
ապերջանկուրեան փուշեր
մարդկուրեան դարտաստանին
խառնաբոյսերն են . որ կը
բերեն զրարին եւ զչար :

Խոկ թէ ի՞նչ է ապա բար-
եցն եւ չարին աղբիւր եւ
արմատ — . Մարդոց սիրան
է . զոր տեսաւ Ցիսուս եւ
առաց :

« Մարդ բարի՝ ի բարի
գանձնուց սրափ իւրայ, բրգ-
իւն զրարի, եւ մարդ չար,
ի չարէն բղխէ զչար » :

ՈՒԻՐԵԼԻԴ իմ Սամուէլ, աշխարհիս երջանկու-
թեան և ապերջանկութեան դասը պիտի խօսիմ
քեզ, խելամոռութեամբ ուշ դիր . դու որ ծաղ-
կատի հասակիդ մէջ մոտադիր ես աշխարհիս եր-
ջանկութեան ծաղիկները միայն քաղել և ապեր-
ջանկութեան փուշերէն ի բաց հեռանալ :

Խօսինք. Ի՞նչ են երջանկութեան ծաղիկներ և
ի՞նչ են ապերջանկութեան փուշեր, որք խառնա-
րոյս կամին մարդկութեան ագարակին մէջ, դոքա-
դաշտի խոտերու նման ինքնարոյս են, թէ մար-
դոյն ձեռք չը մէակէ զանոնք :

Եթէ ողջամիտ տեսութեամբ դատենք, պիտի
տեսնամք որ այդ ծաղիկներու և փուշերու մշա-
կը՝ մարդն է, իւրաքանչիւր անձն է, ընտանիքն
է, ժողովուրդն է, ազգն է, աշխարհն է, տէ-
րութիւնն է. որք առ հասարակ կաշխատին աշ-
խարհիս ագարակին մէջ. կամ ծաղիկներ կը մշա-
կեն և կամ փուշեր. այդ երկու բայսերուն սեր-
մերն՝ իրենց աղատ կամքն ու սիրտն է :

Արդ եթէ մարդոյն ձեռքն է՝ երջանկութեան
և ապերջանկութեան թէ ծաղիկներու և թէ փու-
շերու մշակն. ուրեմն քանի որ մարդիկ կան աշ-
խարհիս վերայ, մարդկութեան դարաստանին մէջ
երջանկութեան և թշուառութեան ծաղիկներ և
փուշեր յաւիտենական անհրաժեշտ օրէնքով պի-
տի մշակուին. Եթէ միայն խլել ու զենք փուշերը,
ոչինչ օգուա չունի. դարձեալ անդրէն կը բուս-
նին. վասն զի նոցա բուն արմատը մարդն է.
Հարկ է որ զմարդն խլենք աշխարհէս. Թէպէտ
կան մարդիկ, որ դժնիկն ու ծաղիկ ի միասին
խլել կուզեն, առանց խնայելու կանաչին և չո-
րին, վարդին և փուչին :

Եթէ կարենանք եւս միայն փուշեր խլել և
ծաղիկներ թողուլ. այսինքն թշուառութիւն բառ-
նալ և երջանկութիւն պահել. չը գիտեմք յայն-
ժամ թէ երջանկութեան ծաղիկներն այլ եւս կը

մնան. Կամ երջանիկ կարծուած մարդ իւր երջանկութիւն կզգայ առանց թշուառին վիճակը տեսնալու : Վերցուր աղքատ Ղազարոս մեծատան դրան պաջեւէն . և ահա այլ եւս նա իւր երջանկութիւն չզգար և առ ոյինչ կը համարի իւր այնշափ հաճոյք և փափկատուն կեանք : Վերցուր նաեւ մեծատունն և իւր շքեղ ապարանք Ղազարոսի աչքի դիմացէն , ծածկէ նորա բեկեզն ու ծիրանին , մեծահաց սեղան և ծառայները , և ահա նա չզգար այլ եւս իւր թշուառութիւն . նա ինքնին մեծատուն կը լինի , ուրախ և գոհ կեանք կը վարէ բարեկամ շներու հետ :

Այու կը լսենք ու կը հաւատանք . թէ մարդասէր քաղաքակրթութիւն անտերունչ անկերալ Ղազարզներ ժողվեց աշխարհիս հրապարակէն . հիւանդանոց , գարմանոց և պատսպարան պատրաստեց համար , կոյրեր , համրեր և խուլերն անդամ գործունէութեան մէջ դրաւ . մինչդեռ մեր աշխարհի խեղանդամ թշուառներ անդաման , անպատսպար թողուած են փողոցներու մէջ : Մարդկութեան այդ անարգուած պատկերներ գետնասոզ գետնաշարչար լինելով կողկողագին ձայնով կը պաղպափին , անցաւորաց կարեկցութիւն կը հայցեն : Եւ դու երբ Վոսփորի ծովակամուրջէն անցուդարձ կանես , կը տեսնամ այդ թշուառութեան ապաժոյժ օրինակները բուն մայրաքաղաքիս մէջ , որ Եւրոպիոյ քաղաքակիրթ աշխարհին խիստ մերձաւոր դրացին է :

Բայց միթէ թշուառութեան երեւոյթ պատկերներ նոքան են միայն , որ խեղանդամ են , կոյր

ու համբ են , մի լումայի և հացի կարօտ են , անտուն անյարկ են , մերկ ու մնչրացիկ կը շրջին փողոցներու մէջ : Ոչ , դաքան թշուառութեան փոքրիկ երեւոյթներ են . զորս մարդոյն աչք սովորած է տեսնալ և այնպէս կարծել թէ դոքա միայն թշուառ են :

Թշուառութիւն աշխարհիս վերայ համատարած է . և մեր ներքին ու արտաքին կեանքին մէջ ծաւալելով տիրեր է , տեղ մի առաւել և տեղ մի նուազ . նորա պատկերին երեւոյթներ շատ քաջմադիմի են . տես , Որդեակ իմ , և ես նոցա պատկերներ հանեմքո առաջ :

Թշուառ չեն նոքա , որ աչք ունին , լոյս չեն տեսնար . կամուոր կոյր են տգիտութեան մէջ : Թշուառ չեն նոքա , որ լեզու ունին , ականջ ունին . այլ ոչ խօսիլ կարող են և ոչ լսել կը կամին : Թշուառ չեն այն մարդիկ , որ ոտք ունին , քալելու ճանապարհ չունին . ձեռք ունին գործել չկարեն , սիրտ , հոգի ունին , թմրած ու լքած են : Առաւել թշուառ չեն այն ժողովուրդներ , որ ընտանիք ունին , պանդխտութեան մէջ շարաշար կը մաշին . որ վերջապէս կեանք ունին կը շընչեն և կը շրջին երկրիս վերայ , այլ կիսակենդան են . բանաւոր կեանքի և ճշմարիտ կենդանութեան պատկեր չունին :

Կոն տակաւին ընդհանուր թշուառութեան այլ եւս շատ մերկատեսիլ ողորմելի աղատկերներ . զորս կը թողում . և քո աչքին առաջ չեմ հաներ . որպէս զի մատաղ ոգիդ այժմէն չը զշտակրի և դու յուսահատ լինիս , տեսնալով թէ մեր կեան-

քի թշուառութեան փուշեր որչանի բազմապատիկ են . որոց մէջ չընապատուած դժբաղդ մարդ միշտ խայթոցահար լինելով՝ ամենայն վշտաբերութեամբ կը վարէ իւր կանքը :

Եւրոպիոյ քաղաքակրթութիւն գիտութեամբ , կրթութեամբ , հին աշխարհի բարբարոս կեանքը յեղաշրջեց , և կը ջանայ մարդկային թշուառութեան փուշերը բոլորովին քաղել , արմատափիլ ընել , և մարդկութեան կեանքն՝ երջանկութեան ծաղիկներով զարդարել :

Այլ Բնէ օգուտ երբ կը տեսնայ , որ անդէն կեանքին մէջ թշուառութեան նոր երեւոյթներ այլ և այլ կերպարանքով երեւան կուգան . և այդ նոր աշխարհի մարդիկ ծագիկներու հետ փուշերն եւս կը մշակեն : Պարծեցող քաղաքակրթութիւնն իսկ կը զարմանայ , թէ ուստի՞ արդեօք կը ծնանին թշուառութեան նորաբոյս փուշերը . կամ մեր ընկերական երջանկութեան արտին մէջ , բարի սերմերուն հետ ովկ կը խառնէ ու կը ցանէ դառնահամ ու հեղձուցիչ որոնմերը :

Հրեշտակներ հարցուցին , Յիսուս պատասխան տուաւ . թէ թշնամի մարդ ցաներ է զայն : Այն , չարարուեստ մարդն է որոնմացան մշակ , որ ինքնաբոյս կարատդրէ իւր սրտէն ու բնութենէն : Ուրեմն մարթ է բառնալ այս աշխարհէն այն մարդիկը , որ թշնամի են ընկերական երջանկութեան և կապականեն միշտ նորա բարի սերման ագարակը :

Այդ ցանկութիւնը հրեշտակներն եւս ցանկացան . հրաման խնդրեցին , որ երթան որոնմաբոյսերն ի բաց քաղեն : Բայց նախախնամող Հօր Ու-

դին ասաց . թայլ տուէք , թող առժամանակեայ մի երկուքն ի միասին աճին մինչեւ հնձոց ժամանակը :

Թէպէտ Աւետարանին առակը տիրոպէտ հաւատացելցոց և թերահաւատից համար ցոյց կուտայ . որ այդ երկու դասն անբաժան ի միասին աճին և ապրին , թէ եկեղեցւոյ անդաստանին մէջ և թէ աշխարհիս վերայ :

Սակայն շատ բնական է իմաստանիրել այս խորհրդաւոր առակէն , թէ երկնից նախախնամութեան մի թագուն անխմանալի խորհուրդն է այս , որ նա կը կամի զի այդ երկու հակառակ բոցսեր իրարու հետ աճին ու մնան : Միթէ երկիրն եւս այդ օրէնքին տակ չէ , դու չես տեսնար որ տեղ մի ծաղիկներ և տեղ մի փուշեր բուսած են : Երկրի բնական փուշեր հնազանդ են մարդոյն . և մարդ կարող է զանոնք արմատով քանդել և տեղը ծաղիկներ տնկել : Բայց մնր ընկերական աշխարհի փուշեր , այնչափ հին ու խորարմատ են , այնչափ խիստ ու ստահակ են որ մարդոյն բանաւորութեան և ճարտարութեան առաջ չեն հնազանդիր . ուստի դժուարին , անհնարին է թէ հին և թէ նոր փուշեր մարդկութեան անդաստանէն ի բաց խլել :

Խոնարհելով վերնախնամ Տեսչութեան առաջ , պէտք է խոստովանիմք թէ մարդոց այս խառնարայս ընկերական կեանքը՝ յաւիտենհական օրինաց մի փակուած կնիքն է . մարդոյն ձեռք անձեռքնաս է քակել կամ եղծել զայն . երջանկութիւն պահել , թշուառութիւն վարել աշխարհէն :

Կը խօսինք և կը գրենք, Որդեակ իմ, թէ մարդոյն երջանկութեան և թշուառութեան ճշշդրիտ նկարագիրն Բնչ են, կամ ովէ երջանիկ և ովէ թշուառ աշխարհիս վերայ :

Մարդիկ կեղակարծ գատաստանով այնպէս կը համարիին . ով որ հաց և գանձ ունի, ով որ համբաւով, հարստութեամբ իբրեւ աստղ կը փայլի ընկերական հորիզոնին վրայ, ով որ իշխան է, կը տիրէ ժողովուրդին վերայ, ով որ գահ ունի և զօրութեամբ պերճացած հրաման կուտայ աշխարհին . ահաւասիկ սոքա երջանիկ կը համարուին մարդոց գատաստանին առաջ : Իսկ ով որ հաց չունի, իւր աստղ աղօտ է, չի փայլիր . սորա համար եւս կասեն թէ թշուառ է,

Բայց թէ մտնենք մարդկային ընկերութեան իւրաքանչիւր կարդի մարդոց սիրտ և ոգին զբն-նենք . պիտի տեսնամք այն մարդիկ՝ զորս ժողովուրդ երջանիկ կը կարծէ . նոքա զիրենք այնպէս չեն կարծեր, և ես ցոյց տամ քեզ մի այլաբան օրինակով :

Մեր մտքով մի սանդուղ ստեղծենք . որոյ ծայր հասնի մինչեւ երկինք և իւր մէն մի ապահնաներուն վերայ աշխարհիս բոլոր մարդիկ կարդ կարց շարուած լինին . թագաւորներէն սկսեալ մինչեւ յետին ստրուկ ծառայներ : Դու պահ մի կաց այդ սանդուղին հանդէպ, դիատէ ու տես, թէ ինչպէս աշխարհիս իւրաքանչիւր մարդիկ իրենց կեանքի վիճակէն անհոգ լինելով, սանդուղի ստորին առտիճաններէն սկսեալ մինչեւ ցվեր, ուր դրուած են թագաւորաց գահեր . բոլորն եւս ի միասին

երջանկութիւն երջանկութիւն կազաղտկեն , և
դէպի յայն կը ձգտին .

Թագաւոր , զոր կը համարինք թէ երջանկու-
թեան կատարն է հասած , կասէ թէ այլ եւս եր-
ջանիկ կը լինէի , եթէ գահս ուրիշ գահէ մի ժեր
դնէի , կեսար լինէի , Նարօչոն լինէի , և այլն .
Դահաժառանգ կասէ . այն օր է իմ երջանիկ օր ,
երբ գահակալ հայրս ի գերեզման կերթայ . իւր
գահն ինձ կը թողու և ես թագ կը կապեմ ու կը
թագաւորեմ աշխարհիս վերայ . Մեծ նախարար
իշխան կասէ . երանի թէ արքայազուն լինէի և իմ
դլուխս թագով պսակուէր . յայնժամ ես տիրապէս
երջանիկ կը լինէի :

Այսպէս սանդուղի գլխէն մինչեւ ցվայրաստի-
ճան մարդիկ ցանկալթեամբ կը ձգտին դէպի վե-
րագոյն կարծուած երջանկութիւն . և միշտ դըժ-
գոհ լինելով իրենց կետնքէն ու վիճակէն ցանկու-
թեան մէջ մաշուելով կը վախճանին և միայն կը
յագենան գերեզմանի հողավ .

Ի՞նչ զարմանալի խաղեր կան ու կը լինին ոյս
երջանկութեան , դու ասա , թշուառութեան սան-
դուզին վերայ , յորում մարդիկ ել և էջ առնե-
լով կը մրցին և ամէն ոք դէպի ի բարձրութիւն կը
ձգտի . յուսաբով թէ ստոյգ երջանկութեան կա-
յանը՝ բարձրութեան աստիճանին վերայ է :

Բայց , աւանդ , հէք մարդկային ընկերութեան
այս դժուարին ելեւէ ջններու մէջ մեծագոյն մասն
սանգուխի աստիճաններէն վայրահոսելով , կը թօ-
թափին ի գետին , առևէն մարդ իւր չափով ու-
թափով կը ջախջախուի . և մեր աջքին առաջ կը

բացուի յայնժամ մարդոց թշուառութեան տեսարան :

Թշուառին կեանքն արդէն ինքնին ջախջախուած է իւր կարօտութեան և զրկանաց մէջ, նորա վիճակ միշտ գետնահաւասար է . նա բարձրութիւն չունի որ երկնչի կործանումէն : Իսկ երջանիկ կարծուածն , որոյ բախտն ու վիճակ բարձրագոյն աստիճանին վերայ կայացած է . մինչդեռ ինքն անկանկած է , յանկարծ սահելով կը կործանի և մեծ շառաջմամբ կը տապալի ի գետին ինչպէս մի տապարահատ մայրի ծառ : Յայնժամ միապէս կողբան անբախտն ու բարերախտն . մին իւր մերկ ոտքէն և միւսն իւր փարթամ գլխէն չարապէս ջախջախուելով :

Եթէ այսպէս , ապա ուրեմն այս աշխարհիս վերայ երջանկութիւն և ապերջանկութիւն զուգածին եղբայր են . մեր կենաց ճանապարհին մէջ միշտ համընթաց են . անհնարին կը թուի մեզ իրարմէ բաժանել . և մարդկային կեանք իրրեւ պիդրախտ . մշակել այնպէս , ուր բնաւ թշուառութեան փուչեր չը բուսնին :

Այլ որովհետեւ մարդոյն կեանք խառնաբոյս է երկրիս վերայ , քանի որ ինքն կայ , փուչն ու ծաղիկ մի և նոյն ամառէն պիտի շառաւիղէ , այլ եւս ընդունայն է ջանալ մեր այս փշալից աշխարհ ծաղկէ բուրփասաւան գարձնել :

Կը խռովիս ու կը վահատիս , Որդեակ իմ՝ երբ այսպէս յուսահատ կը խօսիմ . տեսնալով որ պարտիզան մի իւր պարտէզը մշակելով գարմանելով փրւչերէն կը մաքրէ . և անբեր երկիրը՝ բարի սեր-

մերով՝ ու տունկերով կարդիւնաւորէ, միթէ մարդըն կամ մարդկաւթեան երկիր քան զնողն անպիտանն է:

Այս՝ մարդն՝ հողին տիրապետ իշխանն է և քան զնողն բիւր անգամ գելազանց, հոգեղէն ձիրքով ու բանաւորութեամբ ճոխացած։ Բայց գիտե՞ս, մարդն ի բնէ չարին հակամէտ է։ Կը ճանաչէ զրարին, բայց ինքն դէպի ի չարն կը հակամիտի։ վասն այսորիկ կարդարանայ Աստուած։ Թէ Միտք մարդկան ի խնամս չարին են արձանացեալ ի մանկութենէ։ Մարդն ոչ միայն չարին հակամէտ է։ այլ և չարաստեղծ ու չարահնար է։ մարդըն իրեւ հեղինակ իւր օրտի գործարանին մէջ կստեղծէ զշարն և կը հանէ ի դուրս, և ահա այն է թշուառաբերութեան աղբիւր որ կը վազէ մեր ընկերական դարաստանին մէջ, կը սհուցանէ մեր ապերջանիկ կեանքի թշուառութեան փուշերը։

Քրիստոս աշխարհիս փիլիսոփայից պէս զմար։ գըն իւր երեսով և երեւոյթով չքննեց։ նա թափանցիկ հոգի էր, մոտաւ մարդոյն սիրուր, կըրկրտեց և վկայեց, որ չարութեան ու բարութեան աղբիւրը՝ մարդոյն սիրտն է, բարի սիրտն՝ զբարին կը բղխէ։ և չարն՝ զշար։ Այս երկիմսակ հոսանքներ կը ծաւալին մեր ընկերական երկրին վերայ։ որոցմով թէ երջանկութեան ծաղիկներ և թէ թշուառութեան փուշեր ի միասին կանին ու կը դօրանան։

Քաջ խելամտեցա՞ր, բարեսէր Որդեակ իմ որ շըրջելով դառնալով գտանք մարդկային ընկերութեան բուն աղբերակին ակն, որ է մարդոյն սիրտ ու միտք։

Պէտք է խցել չարին ակն , որ չարութիւն չը
բղխէ , պէտք է բանալ բարւոյն ակն ; որ բարու-
թիւն բղխէ : Փոքրիկ չարեր , փոքրիկ չարութեան
վտակներ կը բղխեն . եթէ առանձին մնան այնչափ
կարող չեն ողղղել մարդկային ընկերական աշ-
խարհը :

Իսկ մեծագոյն չարեր՝ եւս ամենամեծ չարու-
թեան գետեր կը յորդեն իրենց խորագոյն արտէն .
և առ հասարակ հեղեղելով կապականեն ժողովուր-
դին դաշտն ու դարաստանը : Եւ դարմանալին այս
է . զի չարերը՝ չարերուն եւս չեն խնայեր , որք
նոցա գործակից ու բաժանակից են . այլ զչարն
ու բարին միտհամուռ ջրատար առնելով կը հեղ-
ձուցանեն , և մի կրակով կը վառեն երջանկու-
թեան ծաղիկներ ու թշուառաւթեան փուշերը :

Մեծն աղեջսանդր և Քսերքսէս մի մի մարդ
էին , և մի մի սիրա կը կրէին . դացա լայնաբաց
սրտէն բղխեց այն աշխարհակալութեան ջրհեղեղն .
մինն Պարսկաստանէն ակսեց հասաւ մինչեւ Յու-
նաստան և Յոնիական ծովը թափեցաւ : Իսկ միւ-
սըն Մակեդոնիոյ աշխարհէն սկսեց , իւր հզօր ար-
շաւանաց հեղեղով խեղդեց Պարսիկն ու Հնդիկըն ,
դարձաւ ի Բաբելոն և Պարսից ծոց թափեցաւ :

Այսպէս նաեւ ուրիշ աշխարհակալացաց հռար-
տացող սրտերէն բղխեցին չարութեան հեղեղներ ,
ապականեցին մարդկութեան դրախտը : Ոմանք
այդպիսի արիւնկզակ սրտերէն կուզէին ձեռք լուա-
նալով չքմեղս լինել աշխարհին առաջ . ուստի
տպարծելավ կատէին . թէ մեք Աստուծոյ ձեռաց զը-
րէ ժիննդիր պատուհան եմք :

Գիտենք այդ, թէ երկնից արգարութեան մի դատաստանն է . որ մեղապարտ ժողովրդոց հատուցումն այդպէս կը տնօրինէ . դոքա անպարտ կը համարին զիրենք . Այլ գիտենք թէ աշխարհիս վերայ շատ անգամ չարերով չարեր կը պատուհասին, առ որ կը վարանի մարդոյն միտք և կարող չէ ըմբռնել Աստուծոյ արդարութեան ու դատաստանին անքննելի խարհուրդ :

Տեսար, սիրելի Որդեակ իմ, մեծասիրտ չարեր՝ մեծագոյն չարեաց աղջտներ կը բերեն աշխարհի վերայ, որոց մահապեր շունչին առաջ կը խամրին բոլոր երջանկութեան ծագիկներ և կը թօթափին ի վայր . և այն որ այսօր երջանիկ է, վաղը կը նստի թշուառութեան հողի վերայ :

Բայց փոքրասիրու չարերէն եւս վախնանք ու կասկածինք, թէպէտ առանձին առանձին մռածելով գոքա մի մի փոքրիկ սիրտ և փոքրիկ ազրիւրներ կը համարուին . իսկ երբ վտակ առ վտակ գալով միանան՝ յայնժամ ահագին գետ կը կազմեն կը յորդեն երկիրը, ազգ և ժողովուրդ միանդամայն գետատար ջրահեղճ կը լինին :

Ես չեմ ասեր չարութեան բնածին սերմեր ու կաթիլներն իսպաս չքացնել մարդոյն սրտէն . յորում ելեւէջ կառնաւն ինչպէս հիւլիքն արեւաշողին մէջ . և մարդոյն չարամէտ սիրտը բովարովին բարութեան ազրիւր մի գարճնել, անխառն և անմասն չարութեան շամեանդ աղներէն :

Որչափ դժուարին և անհնարին է կապարի նըման երկրի վերայ ծանրացած երկրագարչ մարդ այդչափ գեղագոյն բարութեան վերահել, և կար-

ծել թէ նա կարող է բարի լինել ինչպէս է Աստ :
ուած և հրեշտակ : Յիսուս տեսաւ թէ Բնչ կը
կրէ ներքուստ մարդոյն կեղծող ոզին , ասաց .
« Զիք ոք բարի բայց միայն Աստուած » :

Մարդոյն միրտ իրրեւ երկծորակ մի աղբիւր է
մերթ չարութիւն կը բղխէ և մերթ բարութիւն ,
մերթ գառն և մերթ քաղցր : Սորա համար մեր
հոգեկիր Նարեկացին մարդոյն յարափոխ վիճակն
ողբարյով կասէ . « Այսօր մաքուր հոգեկիր . վաղի-
ւն մայի խելագար » : Շատ և բաւակոն է , եթէ
կարենայ ապիկար մարդ չարութեան ակն որչափ
հնար է խցելով նուազցնել , բարութիւն բղխել և
սրբել իւր միրտն աղտղտին կաթիլներէն :

Սոկրատի նման բարոյական իմաստասէրներ կը
տքնին զօրհանապազ և թերեւս կը հաւատան
ու կը խօսին թէ՝ լոյս , գիտութիւն . դաստիա-
րակութիւն , քաղաքակրթութիւն , կարող են մար-
դոյն միրտը կրթելով . մշակելով , ուղղելով սրբել
չարութեան ախտերէն և թշուառութիւն աշխար-
հէն բառնալ :

Այդ հրաշք եթէ միայն մարդոյն ձեռք ար-
ուեստաւորէ , ես չ'եմ հաւատար , Որդեակ իմ ,
իսկ եթէ մարդոյն դաստիարակող ձեռքին հետ
Աւետարանի հոգին և ընկերսիրութեան ձեռքն
եւս հրաշագործէ . այո՛ , կը հաւատամ յայնժամ
թէ մեր ընկերական կեանք կը ծաղկազարդի ; և
կազատի չարութեան և թշուառութեան վու-
շերէն :

Երկիւղած Որդեակ իմ , ես չ'եմ խրատեր քեզ .
որ աշխարհի կրթութեան և գիտութեան իմա-

ցական լոյս չընդունիս , այլ կը յորդորեմ գքեզ .
զի քո ստացած բնական լոյսը՝ Աւետարանի լուսոյն
և սիրոյն հետ խառնես , երկու լուսով շրջիս աշ-
խարհիս վերայ . մի լուսովն՝ քո առօրեայ հացը
գտնես և միւսվն՝ յաւիտենական կեանք : Այսու-
դու միանդամայն ազատ կը մնաս մարմնոյդ և
հոգւոյդ կորատական թշուառութենէն :

Աշխատիր , որ սրտիդ բուրաստան բարեբոյս
ծաղիկներով մշակես . աշխատիր , որ փշաբայս չը
լինի սիրտդ և փշերով չը վարակի ոգիդ . գիտցիր ,
թէ չարարուեստ լինելով փուշ մշակես , փուշն
գքեզ կը վառէ . կեանքդ մոխիր կը գառնայ :
Մարդ ես դու , անշուշտ բնածին փուշեր կը բուս-
նին ի քեզ . միշտ ջանայ խնամով սրբել զանոնք ,
եթէ միանդ ամ խորարմատ ձգեն , գիտես : որչափ
դժուարին է , յետոյ արմատահան առնել : Զգու-
շացիր նաեւ եկամուտ չարութեան սերմերէն , երբ
չար մշակ ընկերներ զայն սերմանել ուզեն մա-
տաղ սրտիդ մէջ : Ընկերական կեանքիդ մէջ ոչ
չարութիւն փոխ տուր և ոչ չարութիւն փոխ առ .
այլ միշտ բարութիւն փոխ տուր և բարութիւն
ստացիր :

Ի վերջոյ , մեծ երկիւզածութեամբ կարդա
Դաւիթին սրտահան աղերս . « Սիրտ սուրբ հաս-
տատեա յիս , Աստուած , և հոգի ուղիղ նորոգեա
ի փորի իմում » :

ԴԱՍ ԺԱ.

ԲԱՐԳՈՒԱՀԱՆՔ ԵՒ ՆՅԻԱԶՈՒՄՆ

ԱՇԽԱՐՀԻՍ ԱԶԳԱՅ

Ի՞նչ է նորա անունն . որոյ ամենակալ ձեռքեն աթերեւոյք կշիռ մը կայ եր- կրթէն երկրիս վերայ կախուած :

Նորա առւրբ անունն՝ Արդարութիւն է . որ այս աշխարհիս ազգերուն մեղք եւ արդարութիւն կը կշռէ եւ կը չտփէ գնատուցումն : Մարդիկ զայն չեն տեսնար եւ կը վարանին թէ ինչո՞ւ համար ազգեր մերը կը բարձրանան եւ մերը կը խոնարհին , մերը կը բար- գաւանին եւ մերը կը նուազին :

Դորա պատճառներ գէնք եւ զօրու- թիւն չեն . այլ մեղք եւ արդարութիւն : Ուսափ կասէ Սոզոմոն . « Արդարութիւն զազգ բարձրացուցանի . մերմ նուազե- ցուցանն զազգս » . Առակ ժԴ. 11 .

ՆԱԽՈՐԴ դասին մէջ քաջ խելամտեցար , Որդ : եակ իմ , թէ ինչ էին մարդոյն ընկերական կենաց երջանկութեան սկզբնաբուղին աղբիւրներ : Սորվե- ցար թէ բարութիւն և չարութիւն էր այն . որ

յառաջ կուգայ մարդոյն սրտին ինչպէս ջուրի վը-
տակն աղբիւրի ակնէն :

Այս դասիդ մէջ պիտի սորվիս . թէ ի՞նչ են
ապա այն սկզբնապատճառ աղբիւրներ . որով աշ-
խարհիս բովանդակ ազգեր և ժողովուրդներ մերթ
կը բարդաւաճին և մերթ կը նուազին , մերթ կը
բարձրանան և մերթ կը խոնարհին . մերթ ազատ
քաղաքացի կը լինին . և մերթ ստրկական ծառապ .
մտադիւր հոգւով ուշ դիր և ես խօսիմ քեզ այդ
յեղյեղուկ բախտին պատճառներ :

Երկրիս համայն ազգեր , ժողովուրդներ , իշ-
խանութիւններ և գահեր յեղաշրջող ու փոփոխող
երկու հակառակ վարիչ տարերք կան . միոյն ա-
նունն՝ արդարութիւն է . և միւսին՝ մեղք . այս
երկաքանչիւրին հեղինակ և ծնող գարձեալ մար-
դըն է , մարդոյն սիրտն է և մարդոյն աշխարհիս
վերայ վարած կեանքին արդասիքն է :

Սուրբ գիրք այդ երկու որոշակի բառերով կը
հասկցնէ խրայէլի ժողովուրդին կեանքը , զի այդ
երկու բառերուն ընդարձակ նըշանակութեան տակ
կը փակէ մարդոյն կենաց բովանդակ գործքեր ,
մեղք և արդարութիւն :

Մարդն այս աշխարհիս վերայ այդ երկու ճա-
նապարհին վերայ կը քալէ . կամ արդարութեան
և կամ մեղաց . Ուղիղ ճանապարհ արդարութեան
ճանապարհն է . մոլար ճանապարհ՝ մեղքի ճանա-
պարհն է : Մարդն ազատ անբռնադատ է . ինքն
ազատաբար կընտրէ իւր ճանապարհ , կամ արդա-
րութիւն գործելով արդար կը լինի . կամ մեղք
գործելով՝ մեղապարտ կը լինի :

Եւ ինչպէս մի մարդ , այնպէս մի ազգ , մի ժողովուրդ . մի երկիր և թագաւորութիւն , դարձեալ այդ երկու ճանապարհով կընթանան : Եթէ արդարութիւն գործեն , դորա պտուղն է փառք , ազատութիւն , խաղաղութիւն , երջանկութիւն և բարեկեցիկ կեանք : Իսկ եթէ մեղք և անօրէնութիւն գործեն , այդ եւս իւր մօտալուտ վախճանըն ունի . որ է , անարդանք , ստրկութիւն , սուր և պատերազմ . տառապանք աղքատութեան և չարավար կեանք :

Ով է , որ այս հատուցումներ կուտայ ազգերուն , ով է որ կը կշռէ ու կը չափէ ազգերու մեղք և արդարութիւն և կը վճարէ փոխարէնն , ով է որ արդարագործ ազգերն օրհնելով նոցա կեանք և սերունդ բազմապատկելով բարգաւաճ կառնէ երկրիս վերայ . ինչպէս կը խոստանար արդար Նահապետին . «Օրհնելով օրհնեցից գքեզ և բազմացուցանելով բազմացուցից զզաւակ քո ի վերայ երկրի» :

Իսկ ով է , որ անիրաւ , մեղաւոր ազգեր իւր օրհնութենէն , կը զրկէ . նոցա կեանքն անձեաւ անսերունդ կը թհղու առանց բարգաւաճելու , որով կամ իսպառ կը ջնջուին և կամ կը նուազին :

Ահաւասիկ այդ ամէն չափող և տնօրինող՝ Արդարութիւնն է , նոյն ինքն Աստուած՝ որ արդարութիւն և ուղղութիւն կը սիրէ , ինչպէս կը խօսի Դաւիթ : Նոյն արդարութիւն է , որ իւրաքանչիւր ազգերու գործոց չափով կը չափէ զիրենք : Քրիստոս եկաւ աշխարհ այդ արդարութեան համար վկայեց և ասաց . «Որով չափով չափէք . չափեսցի ձեզ» :

Բայց արդ սկսիմ ճառել քեզ, Որդեակ իմ, թէ ի՞նչպէս կը տարածի թէ մեղք և թէ արդարութիւն մի ազգի և ժողովուրդի մէջ։ Շատ բը-նական է որ մեղք նախ անհատ անձիքներէն կըս-կըսի և երթալով կը բազմանայ, կանցնի բոլոր ժողովուրդի դասակարգութեան մէջ։ այսինքն դլիսէն մինչեւ ոտքը միահամուռ կախտանայ ժո-ղովուրդի մարմինն. ահաւասիկ այդ է ամբողջ ազ-դին և ժողովուրդին մեղք։

Իսկ երբ ընդհակառակն ժողովուրդի բարոյա-կան մարմինը գլխէն սկսեալ մինչեւ ոտք արդա-րութիւն կը գործեն, մեծ և փոքր առ հասարակ իւրաքանչիւր կարգի մարդ կը ճանչնայ իւր պար-տիք և իրաւունք. այդ եւս ժողովուրդին և ազ-դին արդարութիւնն է։

Թէ մեղք և թէ արդարութիւն իրենց նկարա-գիրն ունին. ես նախ մեղքին տղեղ սոսուերագիր հանեմ քեզ, թէ զիա՞րդ մեղք իւր ամէն հանդա-մանօք իբրեւ համատարած ախտ երբ կը ճարակի ժողովրդոց բոլոր մարմնոյն մէջ, մահառիթ կը լի-նի նմա, որով կսկսի յայնժամ տակաւ տակաւ հիւ-ծելով մեռնիլ։

Եւ ի՞նչ է այդ մահացուցիչ մեղք։ Ինչ որ ինձ յուշ կուգան, զայն թուեմ քեզ։

Երբ մի ազգի և ժողովուրդի խղճի գիտակցու-թեան խայթ խապառ կը բթանայ, երբ պարտուց և իրաւանց արդարաշափ կշիռ՝ ժողովուրդի ըն-կերական կեանքէն կը բարձուի, երբ ազգի և աշ-խարհի վարիչ իշխաններ՝ արդարութեան պար-տիքներ կը մոռնան, երբ դատաւորներ կանիրա-

ւեն, և օրինաց տեղ կամք և բռնութիւն կը տիրէ, երբ ժողովուրդ կը մոռնայ այն պատուէրներ և պարտիքներ զորս Քրիստոս և Պօղոս պատուիրեցին, Կայսերինը կայսեր տալ և հատուցանել ում պարտական է ժողովուրդ և ումեք պարտական չմնալ. Երբ կ'ստահակի ժողովուրդ, երկրին և ազգին օրէնքները հնազանդութեամբ չի յարգեր, կը հեստէ և անիշխան վարիլ կուզէ, երբ ժողովուրդ իւր ընկերական շահավաճառութեան մէջ առանց արդար կշռի կը գննծէ, այլ եւս իւր խիզնըն ի բաց կը թողու, և որչափ կարող է կանիրաւէ և կը նենդէ, երբ նիւթապաշտութիւն կը տիրէ ժողովուրդին մէջ, հոգին կը նուաստանայ ու կը մեղկանայ, հովիւն իւր հօտով, պաշտօնեայն իւր ժողովրդով և իշխան իւր երկրով առ հասարակ Աստուծոյ ճանապարհէն կը խոտորին, երբ ժողովուրդ ճշմարտութիւն կ'ատէ, գէպ ի լոյս երթալ չուզեր, երբ խաւարասէր լինելով՝ խաւարագործութեան մէջ կը թափառի, երբ ազգի և երկրի կառավարութեան անձնիւր կարգեր վերիվայր լինելով կը շփոթին, ժողովուրդն իբրեւ իշխան կը լինի, մանուկ՝ ծերոյն աթոռը կը բազմի, քահանայն իբրեւ ժողովուրդ կը լինի և ժողովուրդըն իբրեւ քահանայ. տէրն իբրեւ ծառայ և ծառայն իբրեւ տէր. տիկին իբրեւ աղախին և աղախին իբրեւ տիկին, երբ անարգն իբրեւ պատուական կը յարգուի և պատուականն կահարգուի, երբ տգէտք ու խարեբայք կը տիրեն. ժողովուրդի հաւատարիմներ կը մերժուին:

Մի խօսքով համառօտեմ քեզ, երբ երկրի ժո-

զովուրդ բանաւորութեան լցոս, մարդկութեան պատիւ խսպառ կը մոռնայ. թէ բնական խղճի օրէնքներ, թէ Աստուծոյ յայտնեալ օրէնքներ, թէ քաղաքային և ընկերական օրէնքներ, գլխովին կեղծանէ և կապրի նա այնպէս ինչպէս նոյեան դարու ապիրատ ժողովուրդ. որոց համար կը վկայէ Սուրբ գիրք. «Ապականեցաւ ամենայն մարմին առաջի Տեառն» :

Խսրայէլի ժողովուրդի մարմին երբ ոտքէն մինչեւ ցգլուխ կը զեղծանէր ու կախտանայր, Եսային իրրեւ բժիշկ նորա ցաւերը շօշափելով կասէր. «Ամենայն գլուխ ի ցաւս և ամենայն սիրտ ի տրտմութիւն, յոտից մինչեւ ցգլուխ չիք ի նմա առողջութիւն, և այլն» :

Եթէ կուզես թէ եբրայական ժողովուրդին և թէ աշխարհիս այլ և այլ հին ժողովրդոց բարուց ապականութեան բոլոր նկարագիրը տեսնալ, մեծ մտադրութեամբ կարդա Սուրբ Գրոց մէջ Դատաւորաց և Թագաւորաց պատմութիւն. կարդա բոլոր մարդարէութեանց գրքեր ու բողոքները. տես որչափ կենքանի նկարագիր կը հանեն Աստուծոյ ընտրեալ Մարդարէք և կը դնեն զայն ժողովուրդի աշքին հանդէպ :

Թուղ Սուրբ Գիրքը, կարդա ընդհանուր ագդաց պատմութիւնները, յորս յայտնի կերեւի նոյն ժամանակի մարդոց կեանքի հանդամանքներն . և կը տեսնաս դու թէ ժողովրդոց համատարած մեղք կործաներ է աշխարհիս հին տզգեր և գահերը. ինչպէս Եգիպտասի, Յունաստանի, հին Հռովմայ վերջին հարստութիւն, կարքեդոնի,

Բարիլօնի , Ասորեստանի , և այլն : Զմոռնանք նա
և նոր Հռովմայ Կոստանդիանոսի գահը , որ Բիւ-
ղանդիոնի գագաթան վերայ բարձրացած էր :

Այլ եւս տակաւին աշխարհիս նոր ազգերու
մեղք պիտի կործանէ այն ամէն ազգեր , որ ճը-
մարիտ քաղաքակրթութեան լոյսէն խոյս կուտան .
և գեռ ապրիլ կուզեն հնութեան և հին մեղքե-
րու մէջ :

Ճշմարիտ քաղաքակրթութիւն ասացի , որպէս
զի դու կարենաս որոշել թէ աշխարհիս վերայ
սուտ քաղաքակրթութեան երեւոյթներ եւս կան .
որք թէպէտ ի հեռուստ այլ և այլ գոյներով
շպարեալ կը տեսնուին , այլ ի ներքուստ ժողո-
վուրդին կեանք երթալով կը վատթարեն կը զեղ-
ծանեն զեխութեան ու ծայրայեղ ազատութեան
մէջ : Նոքա եւս թէ վազ թէ անագան այժմեան
բարգաւաճութենէն կը նուազին և կը կործանին :
Վասն զի ցոյց կուտայ աշխարհիս փորձը թէ ա-
մէն ծայրայեղութեանց վախճանը կործանումն և
կորուստ է :

Բայց դու , ողջամիտ Որդեակ իմ , մի գուցէ
այնպէս ըմբռնես ու դատես թէ ազգ և ժողո-
վուրդ երբ իւր վարիչներով հանդերձ միահամուռ
կը մեղանչեն , զոր ի վեր անդր նկարագրեցի քեզ ,
յայնժամ համայն ազգ , հայրենիք , և պետութիւն
կը կործանին . իրրեւ արդար և անաշառ հատու-
ցումն բոլորն ի միասին կրելով կորստեան աղէտը ,
որոյ ճիշդ օրինակ կը տեսնամք Սոդոմայ և Գո-
մորայ ամբարիշտ ժողովրդոց վերայ : Արդար նա-
խապես Աբրահամ խոնարհելով իրսեւ հող և մո-

խիր երկնից Արդարութեան առաջ կամեցաւ նորա ցատւմն իջուցանել, ուստի մտերմօրէն հարցանելով կասէր. Տէր, եթէ այն քաղաքներուն մէջ քառասուն արդար գտնուի, դարձեալ պիտի կործանեն. նոցա համար շը պիտի խնայես մնացեալ ժողովրդոց: Եւ այսպէս հարցանելով հարցանելով իջաւ մինչեւ հինգ արդարոց թիւ, այն եւս չը գտնուեցաւ. միայն արդար Ղովտ մի կար՝ զայն ի դուրս հանեց. և անդէն կործանեց, մոխիր դարձուց ամբարշտաց քաղաքները:

Սակայն շատ անգամ արդարութեան հատուցումն ուրիշ եղանակաւ կը տեսնամք. այսինքն ժողովուրդի կամ երկրի մի մասն կը մեղանչէ, օրինազանց կը լինի. հատուցումն ամրողջ ազգ հաւասարապէս կընդունի: Վասն զի անցելոյն մէջ պատմութենէն դիտենք, և ներկային մէջ մեր աչքով կը տեսնամք. և ի՞նչ է այս, շատ յայտնի է աշխարհին առաջ: Զի երկրի վարիչներ կը գործեն մեղք. երկիր և ժողովուրդ կը տուժէ և կը կործանի: Հայրեր կուտեն ազոխ, և որդւոց ատամունքներ կառնուն. առաջնորդներ կը խոտորին և ժողովուրդ մոլորելով կը հետեւի: Եւ այսպէս աշխարհիս մեծամեծ լեռներուն մեծակոյտ մեղքեր՝ զայրացած հեղեղներու և գետերու նման բարձրադիր լեռներէն կը թափին ժողովուրդի դաշտին վերայ, և զայն հեղեղատար առնելով՝ ամէն բարեշինութիւն կը քանդեն ու կաւերեն: Եւ ի՞նչ կը լինի սորա վախճանը, ոչինչ, իրենք եւս կը նստին, այնուհետեւ աւերակ հողաբլուրին վերայ:

Համառօտ անցայ այս կէտին վերայ, Որդեակ

իմ։ ուշիմ ես գու, կը հասկնաս թէ ինչ կը խօսիմ։ Թողլով արդ ժողովուրդին մեղք, բաւ է որշափ ինչ խօսեցայ, մկսիմ այժմ նորա արդարութեան վերայ խօսիլ։

Ինչպէս տեսար ի վեր թէ՝ մեղք մեծնալով տարածելով կը քանդէ աշխարհ և ժողովուրդ, և նորա վախճանը դէպի կորուստ կը տանի, այսպէս նա և արդարութիւն կը շինէ և կը կանդնէ ժողովուրդին տուն, քաղաք և երկիր. և ինքն հոն կը հանգչի։ Արդարութիւն ժողովուրդը դէպի կորուստ չի տանիր, այլ դէպի գիւտ, դէպի փառաւորութիւն, բարձրութիւն և անմահութիւն. «Զի արդարութիւն մշտնջենաւոր և անմահ է»։

Եւ թէ ի՞նչպէս կը լինի որ երկիր մի իւր ժողովրդով, վարիչներով, իւրաքանչիւր կարգի և վիճակի մարդիկ մէն մի իւր պարտուց բաժին արդարութեամբ կը գործէ, դու միտ դիր և ես կարճաբանեմ քեզ։

Երբ պետական աթոռի վերայ նստող թագաւոր արդարութեամբ կը գործէ, իշխանն՝ իրաւունքով կիշխէ, դատաւորն օրէնքով կը դատի, ժողովուրդն՝ օրինաց կը հնազանդի։ Երբ ընկերական շահազանառութեան մէջ՝ գինւոյն հետ ջուր չի խառներ, կամ անփորձ արծաթը փորձեալին տեղը չի ծախեր, զոր վերէն կը տեսնար Աստուածու կը յանդիմանէր իսրայէլի ժողովուրդը։

Այս, Արդարութիւն զազգ և ժողովուրդ կը բարձրացնէ. երբ նա ճշմարտութեամբ պաշտէ իւր տէր Աստուածը, չկեղծ աւորի միայն շրթամք պատուել գոյն. և երբ նա երախտագէտ կը լինի

իւր պարզեւասու Արարջէն, և չափերախտեր ինչպէս Խսրայէլի ապաշնորհ ժողովուրդ . որոց ապերախտութիւն դատելով Աստուած՝ վկայ կը գոչքր երկինք և երկիր . ու սրտառուչ կերպով կը դանդատէր . « Մանեաւ եզն զստացիչ իւր և էւ զմսուր Տեառն իւրոյ , և Խսրայէլ զիս ոչ ծանեաւ և ժողովուրդ իմ զիս ի միտ ոչ էառ » :

Արդարութիւն կը գործեն ու կը բարձրանան երբ քահանայն և ժողովուրդ կը կատարեն նկեղցւոյ օրինաց պարագերը : Քահանայն պաշտօնանասէր կը լինի , ժողովրդասէր կը լինի . և գիտութիւն չի մերժեր . տեսուչ հովիւն ու հօտ կը ճանչնան զիրեար . մինն անձնագիր լինի , արթնութեամբ հսկէ ու հովուէ . և միւսն կամտակար լսէ նորա ձայնին :

Այսպէս երբ ժողովուրդի բոլոր դասակարգութիւն և իւրաքանչիւր անհատ անձն թէ առ Աստուած և թէ առ մարդիկ իրենց պարտքեր կը ճանչնան , և Աւետարանին քարոզած ընկերական օրէնք լիովին կը կատարեն :

Ժողովուրդ եւս կը բարձրանայ , եթէ Աւետարանին և եկեղեցւոյ աւանդած այդ արդարութիւններ գործելէն յետոյ՝ սիրէ նաեւ ճշմարիտ քաղաքակրթութեան յառաջդիմութիւնը . որ Աւետարանի քարոզած ազատութեան լոյսէն լոյս առնելով , մարդկային ընկերավարական աշխարհ կը լոյսաւորէ , մարդ իւր հին բարուց բրտութիւնէն կազնուացնէ և դէպ ի կատարելութիւն կը վարէ :

Ես գիտեմ , դու այս մեր ժամանեակը տեսնալով , քաղսքակիրթ աշխարհին վերայ կը գալթակ-

զիս, երբ կը թողու Աւետարանի խաղաղութեան դարը. կը թողու արդարութեան իրաւախոհութիւնը, կոյւր, սուր ու թնդանօթ ի գործ կը դնէ, արիւնով կը լուանայ կեանքը, մահով կը զըրաւէ ժողովուրդին որդիքները:

Այդ մի հարցներ այժմ, գորա պատասխանը շատ դժուարին ու ընդարձակէ. դու չդիտե՞ս որ նոյն իսկ քաղաքակիրթ աշխարհ իւր կին ոգիէն փոխուելով գեռ զգօնացած չէ, և այդ հրազէն սպանիչ գործիքներն իրեւու արդարութիւն ի գործ կը դնէ: Ո՞վ կը լսէ Քրիստոսի խօսքին, որ կը սաստէ: «Սուրգ ի պատեան դիր, և այլն:»

Թող գահեր, թող պետական մարդիկներ, նոյն իսկ ժողովուրդն եւս գահ կը սիրէ, փառք կը սիրէ, սուր կը սիրէ. իւր ընկեր ժողովուրդին վերայ յաղթութիւն կը սիրէ: Եւ ես չասացի քեզ, թէ արեւմտեան քաղաքակիրթ աշխարհին մէջ արդարութիւն հանգուցեալ է տիրապէս:

Ո՞չ, դեռ նորա մեղքեր շատ են, դեռ նա կը պահէ կին վայրենութեան այն մեծ ահուելի մեղքն. և Ի՞նչ է այգ, փոխանակ խաղաղարար արդարութեան՝ խռովութիւն և արիւնագործութեան արհեստ. զի երբ զայրանայ՝ իւր հնարած գերանդիներով մարդոց կեանքը կը հնձէ ու կը բառնայ աշխարհէն. մարդոց հոգիներն ինքն չէ տուեր. չդիտենք թէ Ի՞նչ իրաւունքով կառնէ:

Տեսանի, արդարասէր Որդեակ իմ, թէ քանի՞ զօրաւոր է արդարութիւն, և քանի՞ հզօր ձեռընկալու է աշխարհիս վերայ այն աղգերուն, որ դայն կը սիրեն ու կը պահեն. նոքա միայն օր

ըստ օրէ կը բարգաւաճին ու կը բարձրանան : Իսկ այն ազգեր . որ արդարութիւն կարևամարհեն , արդարութեան ուղիղ ճանապարհէն կը խոտորին , պարտուց և իրաւանց իշխուը ոտնհարելով կը խորտակեն , մարդկութեան չնորհ ու խղճի գիտակցութիւն կը կուրացունեն . աստուածապաշտութեան կրօն և հաւատ առ ոչինչ կը համարին . ահաւասիկ այդ ազգերու սերունդ՝ Աստուծոյ արդարութեան օրհնութիւն կարող չեն ժառանգել :

Եւ Բնչ կը լինին . այդ յայտնի է , թէ հազար տարի եւս ապրին , թէ աշխարհակալ լինին , թէ գահերն ամպերու վերայ դնեն , ի վերջոյ արդարութեան կայծակէն զարնուելով կը տապալին ի գետին , կը խոնարհին մինչեւ գերեզմանին խոր ինչպէս մի մարդու համար ծնունդ , աճումն , մահ և գերեզման կայ , այսպէս ազգերն եւս իրենց գերեզմանն ունին . և ահագին վիհ մի է , որոյ մէջ կը ծածկուի նոցա յիշատակ : Եւ Բնչ կը թողուն նոքա . Եղիպտոսի բուրգեր . Բարելօնի աշտարակներ և Հռովմայ կրկէսներ . դոքա պահ մի աշխարհիս վերայ կը վերանան կը բարձրանան որպէս Լիբանանու մայրիներ . զոր անցաւ տեսաւ Դաւիթ , և ամբարշտին կեանք նմանցուց նոցա . «Տեսի զամբարիշտն վերացեալ և բարձրացեալ որպէս զմայրս Լիբանանու : Անցի և ահա ոչ էր . խնդրեցի , և ոչ գտաւ տեղի նորա » :

Այլ եւս հերիք է , Որդեակ իմ , թողունք ազգերու մեղք և արդարութիւն , շատ յարմարագոյն է թէ ասեմ , մահ և կեանք : Դու ինքնին անշուշտ խելամտեցար . թէ այդ երկուքին սկըզբ-

նական սերմեր ժողովուրդի անհատներէն կակսին և ցանուելով ցանուելով կը տարածին ազգութեան երկրին բոլոր երեսը : Եւ դու , որ մի ազգի և ժողովուրդի անհատ սերմիկ և զաւակն ես , մանկութեանդ հասակէն սկսելով ուղղութիւն և արդարութիւն միրէ : Ոչ մտքէդ և ոչ ձեռքէդ երբէք մի թողուր այդ ուղղութեան սուրբ կշիռ , որ ընկերական կեանքիդ մէջ կուսուցանէ քեզ պարտուց . և իրաւանց կատարեալ ճանաչումն : Այդ կշիռ թէ անարատ պահես , դու աշխարհիս վերայ մուրացիկ չես լինիր . Դաւիթ կերաչխաւորէ . «Մանուկ էի ես և ծերացայ , և ոչ տեսի զարդարն արհամարեալ և ոչ զաւակ նորա թէ մուրանայ հաց » : Քեզ ըստ իսկ է թէ աղքատ լինիս , արդար լինիս . քան մեծատուն սուտ և անիրաւ , ըստ Սողոմոնի առակին : Նոյն կը խօսի դարձեալ . «Մեծութիւն խոկեալ անիրաւութեամբ , պակասացի . իսկ որ Աստուած պաշտութեամբ ժողովէ , բազմացի » :

Կը փառաւորիս , Որդեակ իմ . թէ նախանձաւոր ու հետեւող լինիս նախնի արդարոց շաւղին : Թէ Արխատիտէսին պէս արդարութեամբ վարուիս կեանքիդ մէջ , անիրաւութենէն խորշիս և արդար տնունը թողուս աշխարհիս վերայ , յայնժամ քո արդար գործքեր , քո յիշատակ կը յաւերժացնեն քո հայրենի ժողովուրդին մէջ : Եւ քեզ ԲՇնչ մեծ փառք , գիտե՞ս , թէ անունդ կենդանի մնայ , կարդացուի միշտ ժողովուրդի կենդանի սրտին մէջ . և չը լինիս գու այնպէս՝ ինչպէս կասէ Դաւիթ . բիւ կարգաւոցին անուանք նոցա ի հողս իւրեանց » :

ԴԱՍ ՃՐ

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ

ԵԿ ՊԱՏԱՀԱՐԴ ԱՇԽԱՐԴԻ

Ի՞նչ են ժամանակի պատմաբներ, որ մեծամեծ աղէտները կը բերեն աշխարհիս վերայ. տարերին են, հոգսին են, ծովերին են, ցամաքին են է, շաքարին է, սովն է, մահտարածուն է, Ո՛չ ո՛չ. աշխարհիս մեծ պատահարներ՝ մարդիկ են, եւ նոյն իսկ մաքրդն է մարդոյն պատահար. տարտպարտ է մարդոց դատաստանը, որ պատահարները՝ միայն տարերաց վերայ կը ձգեն կամ կասեն թէ չար ժամանակ բերաւ:

ՀԱՐՑՈՒՐ, նորատի Որդեակդ իմ Սամուէլ, և և ես խօսիմ քեզ թէ ի՞նչէ ժամանակ և իւր պատահարներ աշխարհիս վերայ. դու որ նոր ժամանակի գարնան ծաղիկն ես. դու որ նոր թեւակոխներ ես կենացդ առաջին շրջանին մէջ. դու դեռ ամառն ունիս, որ քո պատղարերութեան շրջանն է. աշունն ունիս, յորում պիտի ժողովես.

պտղաւէտ կեանքիդ արդիւնք . ձմեռն ունիս , յորում պիտի հանգչիս ու վայելես .

Մեծ մտադրութեամբ ուսիր այն գաան . ուսիր թէ Բնշպէս կը դառնայ արտգ արտգ ժամանակի անիւն ու շրջանը , և իւր յարակարձ հոլովման մէջ կը վարէ կը տանի մարդոյն կեանքը խանճարուրէն մինչեւ ի գերեզման , և յառաջ կը բերէ աշխարհիս այլ և այլ պատահարներ . մերթ չարիքներ ի վեր կը հանէ և մերթ բարիքներ . և չարն ու բարին , անիրաւն և արդար առ հասարակ իւր հզօր գաւազանին տակ վարելով հէք մարդոյն կեանքը իրրեւ աշխարհիս գետերը կը տանի կը թափէ յաւիտենական ծովուն անգունդը :

Ժամանակն աշխարհիս գահերուն , թագերուն տիրող մեծ աշխարհակալն է . միապէս հաւասար կիշխէ իւր յաւիտենական գաւազանով , գահին և ստրուկ ծառային վերայ . զամէն մարդ միահամուռ կը վարէ դէպի գերեզմանին վիհը :

Ժամանակ հանուր մարդկային գործոց մեծ դիւնապեան է . նա է որ կարձանագրէ մեր կեանքին հաշիւը . աշխարհիս տիրող թագաւորաց հաշիւը . մեծ դիւնագէտներու հաշիւը , պատերազմի և արեան դաշտերու հաշիւը , հպատակ ժողովուրդին հաշիւը , բողոքող զրկեալներուն հաշիւը , յղիացեալ մեծատանց հաշիւը , տուայտեալ Ղազարոսներու հաշիւը , ամէն կարգի և վիճակի մարդոց հաշիւը :

Ժամանակ երկնից արդարութեան և հատուցման գործադիր ոստիկանն է . իբրեւ սուրհանգակ կը շրջի աշխարհիս վերայ : Կերթայ կը մտնի յան-

տառ , անտառին տիրապետ առիւծ կսպաննէ . կը դառնայ թագաւորին պալատը , նորա շունչ և ո-դին կը քաղէ , կը հասնի Բարիլօնին դաշտը հը-պարտացող գոռազին դիցապատկեր արձանը կը կործանէ : Ժամանակ իւր ձեռքի տապարով կըտ-րեց այն աշխարհասփիւռ ծառը , որ բարձրամտե-լով իւր ճիւղերը դէպի երկինք կարծակէր . ան-կաւ տարածեցաւ գետնին վերայ . և ճանչցաւ իւր չափը :

Ժամանակ քան զարծիւն սռւր արագաթեւ է . կը բարձրանայ և չեշտակի կը դիաէ զաշխարհ , կիջնայ և քաղաքներ հողաբլուր կը դնէ . Բարիլ-նի , Նինուէի , և հին Արմաւիրի , Արտաշատ ու պերճ Անւոյն փառքն աւերակաց տակ կը թաղէ : Թողլով հողագնդին երեսը՝ կերթայ Վետովի լե-ռան տակ կը մտնէ . կրակ կուտայ , հրանիւթ կը բորբոքի , և Պօմպէի պերճութիւն մոխրաթաղով կը ծածկէ :

Բայց կանիրաւիմք , եթէ ասենք ժամանակի պատահարին ձեռքը միշտ կը քակէ ու չի շիներ . կամ թէ կաշտոէ , զաշխարհ մի կը շինէ միւս կը քակէ : Ժամանակ վաղուց է , որ թողլուց արեւելքը դնաց արեւմուտք . երեք դար է , որ անդ կը դե-գերի , արեւմուեան հին աշխարհ իւր ամէն չէնքե-րով տապալեց . նոր հիմն դրաւ , նոր աշխարհ կանգնեց , նոր մարդ վերածնեց , լոյս . գիտու-թիւն և քաղաքակրթութիւն ծաւալեց ընկերա-կան աշխարհին մէջ : Անշուշտ ժամանակ միշտ յարեւմուտս չի մնար . մի օր կը դառնայ յարե-ւելս և զայն եւս իւր հնութենէն կը վերանորոգէ :

Թողունք այս վերացեալ մտածութիւններ .
Որդեակ իմ . և այսպէս չը կարծենք ու դատինք
հեղգամտութեամբ , թէ երբ մարդիկներ անգործ
նատին , ժամանակն ինքնին նոցա համար կը գործէ :

Մենք թէպէտ աշխարհիս բոլոր պատահարներ
ժամանակի ազդեցութեան կուտանք , բայց հե-
տազօտել պէտք է . թէ պատահարներն Բնչ են ,
ուստի՞ է նոցա սկիզբն և ծնունդ :

Ուղիղ դատելով հարկ է խոստովանիլ , թէ
ժամանակի պատահարներ մեր անցեալ գործոց
հետեւանձներն են . եթէ մենք չգործենք՝ ժամա-
նակ իւր պատահարով կը գաղարի , ի բաց թող-
լով այն բնական տարերաց պատահարներ : Ժա-
մանակը , մինչեւ գերեզմանին գուռը կը վարէ իւր
պաշտօնը և կիշխէ մարդոյն կենաց վերայ , այ-
նուհետեւ կը կնքէ իւր հաշիւը , ինչպէս կնքեր է
մեռելոց աշխարհին հետ :

Որչափ զարմանալի է , երբ մարդիկ առանց
գործելոյ ժամանակէն գործ և յաջողութիւն սպա-
սեն , որպէս թէ ժամանակն աշխարհին տնտեսն
ու մատակարարն է , և կամ թէ մեր ագարակին
մէջ վարձաւոր մշակ : Նախախնամութեան օրէն-
քով ժամանակն իւր պարտիքը լիովին կը կատարէ :
Ցանկալի գարուն կը բերէ մեզ , որ վարենք ցա-
նենք . ամառն կը բերէ . որ մեր ցանածներ բուս-
նին . աշուն կը բերէ որ մեր ամէն աշխատութեանց
ու վաստակոց պտուղները ժօղովելով շտեմարա-
նենք . ձմեռն կը բերէ , որ երկրին հող , վաստա-
կաբեկ մշակն . եզնամոլներ համգչին , և մարդ իւր
վաստակը քաղցրութեամբ վայելէ : Անպշխատ և

տրտնջող մարդ , որ ամէն բան ժամանակի յաջողութենէն կը յուսայ , ոչ ի գարնան կը ցանէ , ոչ յամարան կը գարմանէ . ոչ յաշնան կը ժողովէ և կը ցանկայ նա որ ի ձմերան նստի հանգիստ ուտէ և վայելէ :

Մարդիկ որ վիճակի մէջ որ լինին թէ յաջողութեան և թէ ձախորդութեան , միշտ սովորած են անշնորհակալու լինել ժամանակէն . ուստի և կը խօսին թէ ժամանակ չար է , անյաջող է , միշտ արկածներ կը բերէ . մի օր ծաղրերես կերեւի և միւս օրը կը խոժոռի . թէ այսօր հաց տայ՝ վաղն անօթի կը թողու և այլն :

Գիտենք , ժամանակին բախտ և մարդոյն յեղյեղուկ կեանքը անհաստատ է , գիտենք նա և ժամանակը մեծամեծ արկածներ ունի , որ մեր ուժէն կը խուսափին և մարդ կարող չէ խոյս տալ կամ փախչիլ . Ամպեր կորոտան , հուր և կայծակ կը փայլատակեն , խեղճ հովիւ որ կաղնի ժառի տակ ապաստաներ է , կը զարնուի և անգէն մրկած ու սեւցած խանձող կը դառնայ : Ժամանակ՝ նոյն ամպերէն սոսկալի կարկուտ և անձրեւ կը տեղայ , սարն ու ձոր հեղեղ կը դառնան , գեղն ու քաղաք կողողեն ու կը քանդեն : Ժամանակ՝ ամպերէն կիշնայ գետնի տակ կը մտնայ . ահագին երկրաշարժներ կը հանէ . կը կործանէ մեր շքեղ կառուցած շէնքերը . ո՛հ մեր շինած տունը մեզ համար գերեզմանի դուք կը լինի : Ժամանակն իբրեւ ժանտ հրեշտակ մահտարաժամ կը բերէ , աշխարհէ աշխարհ կը յածի , չորն ու կանաչ , առ հասարակ կը վառէ , և չդիտես դու թէ ուր տեղէն կը բերէ

այն անհուն անհամար ջորեակն ու մարախ , որ ցանած արտեր և դաշտերու կանաչներ կուտէ կսպառէ : Ժամանակն մերթ եւս երկնից անձրեւարեր ամպերը կը վանէ ու կը ցրուէ , երկինք կը պղնձանայ երաշտութեամբ և կը հարուածէ խեղճ երկրագործին բոլոր աշխատութիւնը : Ժամանակը չէ թէ սաստկաշունչ հողմերով կը փչէ ու ծովու ալիքներ միայն կը յուզէ , և ծովավաստակ աշխատաւորները ջրոյ անդունդին տակ անհող , անգերեզման , անյիշատակ կը թաղէ . այլ և նոյն իսկ ցամաք երկրին վերայ , զոր մարդիկ ապահով կը կարծեն , նոյն հողմերով կը տապալէ ծառեր ու շէնքերը , և Ավրիկէի մէջ շատ անգամ գեղեր ու կարաւաններ անապատի աւազներուն տակը կը թաղէ :

Չենք ժխտեր թէ ժամանակն այլ եւս շատ արկածներ ունի , որուն տակ ենթարկուած է աշխարհն ու հէք մարդ , բայց ժամանակի բերած այդ պատահար արկածներ շատ նուազ են և ոչինչ համեմատութիւն չունին այն արկածներուն հետք , զորս մարդ ինքնին իւր ձեռօք կը բերէ ; կամ անգիտութեամբ կամ գիտութեամբ ու շրութեամբ հանդերձ :

Մտադրութեամբ լսէ , Որդեակ իմ , ես մարդոց ու ժամանակի իրաւանց դատաստանը ի վեր պիտի հանեմ . և դու մանուկ իմաստուն ես , իբրեւ ծեր՝ դատաւոր եղիր ու վճիռ տուր :

Մարդիկ իրաւունք ունին ասել , թէ ժամանակն իւր այդ արկածներով մեր աշխարհ կաւերէ , և կը թշուառացնէ մարդկային ընկերութիւնը ,

երբ ազգ՝ ազգի գէմ, մարդոյ, գէմընկեր՝ ընկերի գէմսուր հանելով եղրայր՝ հարազատ եղրօր գէմ իրրեւ թշնամի կը զինեն։ Եւ երբ աշխարհիս գահակալաց հոգին զայրանայ, դիւանագիտութեան ծածկեալ հրաբուխներ պայթին, ծովալիքներու պէս բանակները պատերազմի դաշտը իսաղան, վիթխարի հրանօթներ որոտան, բիւր բիւր հազար կտրիճ կայտառ երիտասարդներու կեանք՝ մի փոքր ժամանակի մէջ դիտոպաստ ի գետին փոռուին, ոտնաքարչ անարդարար լցուին այն վիհերուն մէջ, զորս այդ դժբաղդ զինուորներն իրենց ձեռքով փորեցին։ մայրեր սգան որ կորուսին զաւակները, ամուսիններն ողբան որ կորուսին լծակից սիրելիներ։

Ահաւասիկ քեզ ամենամեծ պատահար և պատուհաս մարդկային ազգի. որ բիւր անգամ բնական պատահարներէն դժնգակ է։ Եւ ով է այդ արուեստական ու կամածին պատահարներ յառաջ բերող. մարդն է, մարդ. նորա մեծամիտ ոգին է, նորա բարձրացած ձեռքն է. որ կը ծանրանայ մարդոյն վերայ և անխնայ կը ջախջախէ Աստուծոյ ճարտարապետած պատուական անօթները, զորս իբրեւ բրուտ մի մի կը շինէ նա, և թրծելով զայն հոգեղէն կրակով կը հանէ ի լոյս։

Բայց միթէ սորա համար ցան կ'զգան աշխարհիս անսիրտ սառնահոգի գիւանագէտներ, եթէ պատահին իրարու՝ կատակով կը խօսին. — Թող մայրերը կրկին ծնին. Ո՛հ, միթէ չգիտե՞ն դոքա վշտակիր մայրերուն երկունք. չգիտե՞ն թէ մի մանուկ քանի՞ դժուարութեամբ կը մեծնայ, մարդ կը

լինի : Զգիտեն , այս , նոցա մեծ դիտութիւն՝ միայն շահն ու փառքն է . որոց համար փոյթ չէ երբէք թէ կոտորուին ժողովուրդի որդիքները :

Համկցար , խոհական Որդեակ իմ , թէ մարդոյն կենաց մեծ պատահարն ու պատիժը՝ դարձեալ նոյն իսկ մարզն է : Տարերաց պատահական արկածներ ոչինչ համեմատութիւն չունին այն արկածներուն հետ . զորս խորամանկ մարդոց ձեռք կարուեսաւորէ :

Սակայն շատ զարմանալի կը թուի ինձ այս . զի մարդիկ , ժողովուրդներ այնքան սովորած են մարդոց ձեռքէն պատահարներ կրել . մինչեւ ոչխարի նման ի սպանդանոց թէ վարին , ոչինչ չեն զգարկասեն թէ մեր բախտ , մեր ճակատագիրն այս է : Մանաւանդ արեւելեան ժողովուրդներ . և սորաբարոյական և ներքին պատճառն ուրիշ բան չէ . քան թէ ագիտութեան անլոյս խաւարին մէջ կաշկանդուած՝ մարդոց ստրկացած , ընկճուած , խեղողուած ոգին :

Դառնանք , այժմ խօսինք այդպիսի ժողովրդոց կարծեաց վերայ , որք միշտ յամենայն ժամ տըրտունջ կը բառնան թէ՝ ժամանակի պատահարներ չար են . ժամանակ մեզ համար զլացող է , մեք մանուկ ժողովուրդ ենք , մեր ձեռքէն բռնելով յառաջ չի վարեր . այլ թողեր է զմեզ կիսաճանրուն վերայ այնպէս անշարժ ու յետագէմ , մինչ արեւմտեան բոլոր ազգերը տարաւ հասոյց յառաջդիմութեան օթեւան և հանդիսաւ :

Բայց միթէ այդ աչառող կարծուած ժամանակը՝ արեւելեան աշխարհին և նորա ժողովրդոց

Համար բարի պատահումներ չը բերան : Այս՝ քսան տարիէն յառաջ նա մի մեծ պատահար անցուց, այնուհետեւ քնացաւ, ասաց ու կարծեց թէ այլ եւս պատահար չունիմ ես, դարձեալ կապրիմ այնպէս ինչպէս կապրէի յառաջ հին օրէնքով . հին դրութեամբ և հին ճանապարհով . որոյ ելքը դարձեալ հին պատահար բերաւ մեր աշխարհին վերայ . յանկարծ մեր քնացած տէղէն արթնցանք և ահա պատահարը մեր դուռը հասեր էր :

Դու ասա, Որդեակիմ, այլ եւս իրաւունք ունի՞ այսպիսի աշխարհ և ժողովուրդ . որ սուր աչք ունի՝ հեռատեսել չգիտէ, սուր միտք ունի՝ սովորիլ չի կամիր . հանճար ունի, ուղեղին մէջ թմրած է, ի գուրս հանել չը գիտէ . մեռք ունի՝ արտեստագործել չգիտէ . առոյգ ոտք և սրունքներ ունի, քալել չգիտէ, լեզու և ազատ կամք ունի՝ խորհելու և խօսելու փաստ չգիտէ . կը ճըշշուի՝ ճիչ բառնալու եզանակ չգիտէ . բնակավայր ունի՝ կը մոռնայ, յիշել ու շինել չգիտէ . ընդարձակ հող ունի՝ մշակել արդիւնաւորել չգիտէ, աղքատ է՝ դեռ կը սիրէ զեղիս կեանք, խնայութեամբ տնտեսել չգիտէ . թէ պատեհութիւնն յաջողի՝ ժամանակ ճանչնալ չգիտէ, թէ ոտն մի փոխէ՝ կը պարծի, կաղաղակէ, լրին ու խոհեմ յառաջդիմութիւն չգիտէ . թէ ասեն ճանբուն վերայ առիւծ կայ, փատարտելով կը դողայ, առիւծի ճեռքէն անցնիլ աղատիլ չգիտէ . ինքնավար օրէնք և սահմանագրութիւն ունի, վարիլ ու հընազանդիլ չգիտէ . դեռ մտօք մանուկ լինելով քուէն և ընտրութիւն չգիտէ . միշտ իւր վարիչ-

ները փոփոխել կուզէ , անփոփոխ պահել չգիտէ .
միշտ ներկային մէջ զեղծանելով , ապադային հե-
տեւանքները չգիտէ :

Լսեցիր ու դատեցիր , Որդեակ իմ , երբ մի եր-
կիր , ազգ և ժողովուրդ այսչափ և այսպիսի անգի-
տութեան և խակութեան կեանքին մէջ կը թափա-
ռի . այլ եւս իրաւունք ունի՞ նա մեղադրութեան
յանցանքը ժամանակի վերայ դնել , և ինքն չքմեղա-
լինելով ասել թէ ժամանակը չար է . և թէ երկրի
պատահարներ կը կապեն մեր ձեռք և ոտքը :

Գիտենք այդ , այ՞ , կան երկրի պատահարներ ,
ծանր ու գժուարին . որք մարդոյն յառաջդիմու-
թեան քայլերը . կը կաշկանդեն . Բայց միթէ ժա-
մանակի պատահարները կը բարձուին կամ կը
պակսի՞ն աշխարհէս : Եթէ մարդոյն մեծ պատա-
հար մարդն է . պէտք է մրցիլ այդ պատահարին
հետ գիտութեամբ և կրթութեամբ . այդ միակ
միջոցն է , որ կը յաղթէ պատահարներուն :

Թողունք այժմ երկրի և ժողովուրդի ընդհա-
նուր պատահարները , դառնամք առանձին ընտա-
նեաց , գերդաստանաց և առանձին անհատ ան-
ձիքներու համար խորհրդածել . որք զօրհանա-
պազ դառն տրտունջ կը բառնան , թէ ժամանա-
կի չարութենէն մեր տուն մեր գերդաստանը կոր-
ծանեցաւ . ճոխ ու հարուստ ազնուական ընտա-
նիք շքաւորեցան . և այլն :

Բայց ուղղութեամբ դատելով տեսանք դոցա
և ժամանակի պատահարին դատոաստանը , տես-
նամք նաեւ թէ այդ կործանիչ ձեռք առաւել ի-
րենց ձեռքն էր , թէ չարապատեհ ժամանակին :

Եթէ այդ ճոխ ու փարթամ ազնուական ընտանիքներ, երբ ուղիղ տնտեսութեան օրէնքէն ու չափաւորութենէն խոտորելով՝ զեղծան, շռայլեցան ամենազեխ կեանքի մէջ, թափեցան թէ հին և թէ նոր հարստութենէն. այս բնական վախճանը՝ չար ժամանակ բերաւ, թէ չափազանցութեան հետեւանքն էր, որ չդիտցան հարստութեան կեանք տնտեսել :

Դու կը տեսնաս ու կը ճանչնա՞ս մեծատանց այդ ժառանգորդ զաւակներ. դսքա երանի կուտանի իրենց հօր և պապու ժամանակին, ասելով, թէ նոցա ժամանակ շատ բարի ու յաջող էր, իսկ մեր՝ չար ու դժուարին. Այսպէս արդարանալ կուզեն դոքա որք իրենց կեանքը հեղզութեան և անգործութեան մէջ վարեցին, ոչ միայն անսպառ դանձեր վատնեցին, այլև այդ նիւթական ճոխութեան հետ կորուսին հայրենի տան բարոյական համբաւն, փառքն ու յիշատակն. Արդ, ո՞ւմ է մեղանդրանք, ո՞ւմ է յանցանք, չար ժամանակին թէ չարավար ժառանգորդներուն :

Գուցէ դոքա սրտմտին և չ'ընդունին այս դատաստանը, ասեն թէ չար ժամանակ զեխութեան չարորինակ նորասիրութեան պերճանքները հեղեղի նման արեւմուտքէն քշեց բերաւ մեր աշխարհ, մեք եւս կամայ ակամայ ողողեցանք. և նոյն իսկ ժամանակ զմեղ ստիպեց որ հետեւինք քաղաքակիրթ աշխարհին :

Կը դրուատէի ես Հայոց ընտանիքը, եթէ ըստոյդ և իրապէս փափաքէին քաղաքակիրթ աշխարհի օրինակին հետեւիլ. Երանի թէ այնպէս լի-

նէր . բայց իրաց ճշմարտութիւն կը վկայէ որ գոռքա թողով Եւրոպիոյ մեծամեծ բարեմասնութեան օրինակները , միայն նորասիրութեան պերճանքները գրկեցին . թողին ներքին կրթական մասն , և միայն արտաքին կեղեւն առին . թողին ինչ որ վայելուչ էր մեր ազգային բնիկ յատկութեան , և ինչ որ մեր յառաջդիմութեան ձեռնտու օգտակար էր , այսինքն բուն քաղաքակրթութեան ճշմարիտ տարերք , որ է գիտութիւն , կը ըթութիւն և լուսաւորութիւն :

ԷՇ , լսասէր Որդեակ իմ , ես ճանճրացայ այս տնտեսական խնդրոյն վրայ քարոզելով , խօսելով , գրելով և կրկնելով . այս մի քանի օրինակները քեզ բաւական են , մնացորդները դու ինքնին իմաստասիրէ : Գիտցիր , որ աշխարհիս վերայ ամէն չարացար կեանք՝ իւր չար հետեւանքն ունի , զորս մարդիկ չար ժամանակ կը կոչեն :

Բայց մենք կը հաւատանք թէ՝ ժամանակն երկնից արդարութեան ձեռաց մի չափին է . Քրիստոս վկայեց այդ չափին համար . « Որով չափով չափէք , չափեսցի ձեզ » : Կը հաւատանք նաև որ այդ չափին գործադրիչ ոստիկանը՝ ժամանակն է , որ իւր չար կարծուած պատահարներով կը հատուցանէ իւրաքանչիւրին գործոց համեմատ չափով :

Այլ եւս աւարտենք այս դասը , Որդեակ իմ , և դու ուղղէ քո դատաստանը ժամանակի պատահարին վերայ , գիտնալով թէ ժամանակն ինքնին պատահար չ'ունի . այլ ամէն պատահարներ մեր նախորդ գործքերուն վերջին հետեւանքներն են , և հետեւանքները Աստուծոյ յաւիտենական օրի-

նաց հատուցումն են : Ինչ որ այսօր կը կրենք ,
անցելոյն հետեւանքն է , և ինչ որ այսօր կը գոր-
ծենք՝ նորա հետեւանքն եւս ապագայն կը կրէ :

Ուրեմն , երկիւղած Որդեակ իմ , վախցիր դոր-
ծերէդ քան ժամանակի պատահարէն . ներկայ
կեանքիդ մէջ միշտ ջանացիր ուղղութիւն գործել ,
հաւատալով որ ուղիղ գործին հետեւանքը ու վախ-
ճանը՝ ուղիղ կը լինի : Ուղիղ ճանապարհ դէպի
ուղիղ նպատակը կը տանի : Ուսիր Քրիստոսի՝ ա-
ռակէն . որ անառակութեան հետեւանք սովամա-
հութիւն է , ուսիր աշխարհի օրէնքէն , որ գողու-
թեան հետեւանքը՝ կախաղան է : Ուսիր կեանքի
փորձերէն . որ զրկանաց հետեւանքը՝ չարաչար
հատուցումն է :

Շատ մի ծիծաղիր , հետեւանքն լաց է , եթէ
սդաս ու համբերել գիտնաս՝ հետեւանքն միսիթա-
րութիւն է : Ամենայն օրինազանցութեան հետե-
ւանքը միշտ պատիժ , անարդանք և կորուստ է ,
ինչպէս առաքինութեան հետեւանքը՝ վարձատրու-
թիւն և փառք է : Եթէ աշխարհ արդարապէս չը
վարի , ոչ օրինազանցին պատիժ տայ և ոչ արդա-
րոյն վարձ . թողյայնժամ քո դատաստանը երկնից
արդարութեան , և դու առաքինացիր զօրացիր
բոլոր կեանքիդ մէջ . և հաւատա որ ժամանակի
պատահարներու հեղեղներ եթէ յառնեն ու բազ-
իսն զքեզ , գու անսասան , անկործան կը մնաս ,
երբ հաւատոյդ չէնքը՝ գու եւս Աւետարանի այն
իմաստուն մարդոյն պէս , խորագիր վիմի վերայ
հաստատես :

Թէ ժամանակի պատահարներ զքեզ տարութե-

րեն, գու անշարժ կաց. մի թերեհաւատելով սասանիր, պատահարներ կուգան կանցնին. զի այս աշխարհ պատահարի աշխարհ է. հեք մորդ պատահարներուն տակ ձնչուած է և կարող չ' խոյս տալ. սորա համար Քրիստոս կարեկցելով մեր անպաշտպան խեղճութեան վրայ՝ սորվեցուց, որ ազօթենք առ Հայր, «Մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա ի չարէ»:

Ազօթէ, Որդեակ իմ, յԱստուած ապաւինիր, և պատահարներ քեզմէ կը հեռանան: Ուղիղ մըտածէ, ուղիղ գործէ: ուղիղ ընթացիր և պատահարներ քեզ չ' են պատահիր: Այլ մանաւանդ աղօթէ որ մարդոց պատահարին չը հանդիպիս: Դաւիթառաւել ընտրեց Աստուծոյ պատահար քան մարդոց, որ խստասիրտ են, ողորմիլ չը գիտեն: սորա համար քեզ միշտ լաւագոյն է որ Աստուծոյ ձեռքն յանձնուիս, և սրտեռանդ աղօթես Դաւիթին բերանով: «Աստուած ապաւէն իմ և ես յուսամ ինա:»

ԴԱՍ ՃԳ.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Ե Կ Ը Ն Կ Ե Ր Ա Ւ Ի Ր Ո Ւ Խ Թ Ի Խ Ն

Ի՞նչ է դարձան այս մեր հիւանդ ու
բշտառ աշխարհին . — Աւետարան
ընկերսիրուրիւն եւ միարան գօրու-
րիւն . առա համար՝ բաթ քժիշկն ,
իթնին եկաւ յաշխարհ . մեր վկրմեր
բուժել եւ մարդկուրեան հնացեալ
կեանքր վերանորոգել . Եւ որոյ ա-
նունն՝ նշմարտուրիւն եւ կեանք էր ,
այսպէս Աւետարանց . « Ես եկի ,
զի զենանս ունիցիք եւ առաւել եւս
ունիցիք » :

ԱհեջԱՐԱՆԻՆ որդեգիր , հաւատացեալ որդեակ
իմ Սամուէլ . Աւետարանը և Աւետարանին քարո-
զած ընկերսիրութեան դասը պիտի խօսիմ քեզ . ա-
կանջդ բաց արա , սիրտդ ինձ տուր , խոնարհ երկիւ-
ղածութեամբ լսէ Յիսուսի դատին , որ քեզ լսյս
կուտայ , յոյս կուտայ , կեանք և անմահութիւն
կուտայ :

Յիսուս , որ աշխարհիս վերայ ինքն անդիր ան-
դըպրոց էր , Պաղեստինոյ աշխարհին մէջ բացաւ
իւր Աւետարանին համալսարանը և սկսեց քարոզել :

Ես կը թողում այժմ Աւետարանին քարոզած ընդհանուր դասեր, միայն ընկերափութեան դասըն պիտի աւանդեմ քեզ, և այն բաւական է թէ սրտի մոոք պահես։ Վասն զի սէր և ընկերափութիւն Աստուածային պատուէրներուն դլուխն է և օրինաց հիմն։

Մովսէս, որ Խորայէլի ընկերութեան օրէնսդիրըն էր, Աստուածափութենէն յետոյ, յարեց ընկերափութեան պատուէրը։ Բայց Մովսէս այս գերագոյն պատուէրը միայն քարէ տախտակին վերայ գրեց՝ թողուց ու գնաց, և զայն անձնազոհ արիւնով մկրտելով չը նուիրագործեց։

Իսկ Յիսուս սիրոյ մեծութիւնն՝ իւր անձին վերայ չափելով ասաց . «Մեծ քան զայս սէր ոչ գոյ, եթէ ոք զանձն դիցէ ի վերայ բարեկամին»։ Ասաց, և անդէն իւր բարեկամ մարդոյն համար գնաց ի խաչ և ընկերափութեան օրէնքը իւր արիւնով, իւր մահով և իւր մեծ ու անկշիռ սիրով մկրտեց, և այս իւր գերագոյն օրինակով սէրը տուաւ աշխարհին՝ իրեւ մի միայն դեղ ու դարման, փրկութիւն, ազատութիւն, հիւանդ ու թշուառ մարդկային ընկերութեան։

Այս դեղն ու դարման մի բառով կը կազմուի .— Սիրեծիք . իւր զօրութիւնն անչափ է, իւր չնորհն՝ անկշիռ է, իւր բժշկութիւնն՝ ամենարուեստ է, իւր ձեռքն՝ ամենահաս է, և իւր սուրն է միայն, որ կսպաննէ մարդոց ոգւոյն մահառիթկիրքերը։

Երկնային սէր, որ մարդոյն կերպարանքով երեւցաւ աշխարհին, և որ մեր փրկութեան ճար-

տարագետն է . նա խորագոյն դրաւ սիրոյ այս հիմն . և չէ թէ հողի վերայ , հապա մարդոց սըրտին ու հոգւոյն մէջ , որպէս զի այդ հիման վերայ նորոգէ մարդկութեան հնացեալ շէնքը :

Սիրոյ այս մեծագոյն օրէնքն է միայն , որ կարող է աշխարհիս վերայ հաստատուն պահել մեր ընկերական շէնքը , ապա թէ ոչ՝ հիմնայատակ կը քայլայուի :

Խոստովանիլ և վկայել պէտք է , Որդեակ իմ , որ դիտութիւն և քաղաքակրթութիւնն եւս արդի մարդկային ընկերական վիճակը բարւոքեցին առաւել արոտաքուստ : Բայց դու մի հետեւիր այնչափ այն անապարծ մարդոց մեծախօսութեան . որ այդ շնորհ և պարծանք՝ միայն գիտութեան և քաղաքակրթութեան կուտան . և առ ոչինչ կը համարին Աւետարանին արդիւնքը :

Այլ դու ճշմարտութեամբ հաւատա , թէ աշխարհիս արդի ընկերական յառաջդիմութեան հիմունքը՝ Յիսուս իւր Աւետարանով և ձեռքով դըրաւ : Եւ Բնէն այդ բարոյական հիմունքը , ահաւասիկ . սէր , հաւասարութիւն , եղբայրութիւն , միութիւն և ընդհանուր անխտիր մարդասիրութիւն . որով բովանդակ երկրիս անհամասեռ ազգերը , մի համաշխարհական եկեղեցւոյ գաւիթը ժողովելով մի հօտ կը կազմէ , մի հօր որդիքները կը կոչէ , և ինքն է միայն այդ հօտին հօվիւ և պոտջնորդ :

Եւ Բնէն է առաւելագոյն և ճշմարիտ կեպնեք զոր Յիսուս բերաւ յաշխարհ , եթէ ոչ Աւետարանին քարոզած ընկերական սէր , և հաւատացելոց՝

Համատարած խաղաղութիւն . զոր Յիսուս միայն տոււաւ , և աշխարհ կարող չէ տալ զայն . Ուստի իբրեւ . իւր վերջին կտակ , վերջին ընթրեաց երեկուն խօսեց . « Զիսաղաղութիւն զիմ տամ ձեզ . զիսաղաղութիւն զիմ թողում ձեզ : Ոչ որպէս աշխարհու տայ՝ տամ ես ։ »

Կարդա հնախօս պատմութիւններ և կը տեսնաս , որ մեծամեծ աշխարհակալներ եկան այս աշխարհ անցան ու դնացին . աշխարհ խռովութեան մէջ թողին , իրենք գերեզմանին մէջ խաղաղութիւն գտան : Դոքա իրենց զօրութեամբ ու սրով բնաւ չկարացին խաղաղութիւն տալ երկրին . այլ մանաւանդ երկրին երեսը արիւնով լուացին և սոսկալի բռնութեան տակ ջախջախեցին մարդոյն ազատութեան կեանքը :

Եկան վերջին դարեր և մանաւանդ իննեւտասաներորդ դարը , զոր քաղաքակրթութեան դարը կը կոչեն և յորում ես և դու ծնանք ու կապրինք . կասեն թէ մարդոյն յառաջդիմութեան քայլեր քիչ մնաց որ մինչեւ ի կատար համնին : Քաղաքային և աշխարհի կառավարութեան համար դիւնագէտներ ժողովեցան , մեծամեծ ստուար ստուար օրինադրքեր շինեցին , և երկրի խաղաղութիւն մշտնջենաւոր պահելու համար դաշնակցութիւններ կուեցին : Եւ ի՞նչ էր նոցա բոլորի նըպատակը . մարդկային ընկերական կեանքը հաւասար բարւոքելու . թէ՝ մէն մի գահեր իրենց երկրի շահը առաւել հոգալու : Այդ իրաւունք է , գիտենք , բայց առանց ընկերին և ազգերու իրաւունքը խլելու :

Այժմեան աշխարհիս վերայ տիրող մեծ աշխարհակալ՝ շահն է . սորա համար մարդ չի հաւատար թէ քաղաքակրթութիւն՝ Յիսուսին տուած խաղաղութիւն կամ Աւետարանին քարոզած ընկերսիրութեան դաշնակցութիւնը կընդունի :

Ո՞հ , որչափ հեռու են իրարմէ գիւանագիտութիւն և Աւետարան , Խաջն և Կրուրի թնդանօթն . եկեղեցւոյ միաժողով գաւիթն և պատերազմի արեան դաշտ . և Բնէ համեմատութիւն կայ մահուան և կեանքի մէջ . Քաղաքակրթութիւն դեռ մահ կը լիերէ , դեռ մարդոց համար սպաննութեան գործիքները կը հնարի . քուն և հանգիստ չունին աշխարհիս տիրապետներ ու դիւանագէտներ . վիշապի նման տուտի վերայ կեցած կը Փշան կըսպառնան , և Բնջ կը խնդրեն , պատերազմ . անշուշտ զիրեար կլանելու համար :

Այսպէս , մինչգեռ Յիսուս իւր Աւետարանին ազատ սիրով խաղաղութիւն կուտայ երկրին , մեր կարծեցեալ քաղաքակրթութիւն՝ դեռ սրով և արիւնով և հին աշխարհի խելքով խաղաղութիւն հաստատել կուզէ :

Տես դու և համեմատէ այս երկու հակառակեղանակները . այլ եւս կը հաւատան թէ սոսկ քաղաքակրթութիւն առանց Աւետարանի աջակից զօրութեանն՝ մարդոյն խոռված ընկերական վիճակը խաղաղութեան մէջ կը պահէ . զգօնսանան հանդարտին այն զայրացած ոգիները , որ հուր , սուր , կոիւ և վրէ ժխնդրութիւն կը գոչեն :

Աւանդ մարդկային թշուառաբաղդ ընկերութեան , ով գիտէ , դեռ քանի՞ ժամանակ , քանի՞

դարեր աշխարհ իւր ազգերով ժողովրդով պիտի
հեծեն աղիողորմ . երկրիս մեծամեծ պետական
ծովեր պիտի խռովին , ալիքներ կոհակներ պիտի
հանեն . այդ ինքնավառ հրաբուխներ , ինչպէս գը-
րեցի , միշտ պիտի բորբոքին , շարժեն երկա-
գունդ , աշխարհ սասանեն , ջրով ու մոխրով ծած-
կեն ժողովրդոց կեանքը :

Ոդիդ կը լքանի՞ , Որդեակ իմ , և յուսահամտ
կը լինիս . եթէ տակաւին աշխարհավար դիւանա-
դէտներ այսպէս շարունակեն , աշխարհի վիճակ
ու վախճանն ուր կը հանի :

Ես խօսիմ քեզ , Որդեակ , մեր աշխարհի կարդ
իսկզբանէ անտի այս է և այսպէս պիտի երթայ
տակաւին : Դու գիտես գեռ մարդն անհալ և ան-
կատար հանք մի է . աշխարհիս պատահար քու-
րային մէջ . այսինքն կրակի և իւր արեան մէջ նա
դեռ պիտի հալի ու մաքրուի , մինչեւ որոշուին
ընտրեալներ , մինչեւ գայ ճշմարիտ քաղաքակըր-
թութեան ոսկեղար . յորում աշխարհիս վարիչներ
անկեղծ սրտով և անխար մտքով ընդունին Աւե-
տարանի ընկերութեան և խաղաղարար ոգին :
Մեռնին երթան աշխարհիս երեսէն , խռովարար
և անարդար տիրապետող ողիներ : Այն օր միայն
հաւատանք , Որդեակ , որ Դաւթի գուշակութիւ-
նը տիրապէս կը լրանայ . « Եզիցի խաղաղութիւն
ընդ ամենայն երկիր . և ի վերայ գլխոց լերանց :
Առցեն լերինք զխաղաղութիւն ժողովրդեան և
բլուրք զարդարութիւն : »

Դառնանք այժմ խօսինք ընկերասիրութեան
այն պարտիքներու վերայ , որոց առ հասարակ

պարտական են Աւետարանին հաւատացող որդիք-ներ :

Բայց թէ կուզես ճշդիւ իմանալ, Որդեակ իմ, թէ ի՞նչ է ընկերսիրութեան պարտիք, որչափ և մինչեւ ուր, և ով է մեր ընկեր. միայն մեր ընտանիք, մեր ազգականնք, մեր բարեկամնք, մեր դրացնք, մեր ազգայինք կամ հայրենակիցնք, և կամ այն մարդիկ, զորս մենք կը ճանաչեմք : Ո՞չ, Աւետարանի ընկերսիրութեան պարտիքը ընդհանուր մարդասիրութիւնն է . երբէք այդ խտրող բառերը չի ընդունիր . « Եթէ սիրէք դուք զսիրելիս ձեր, կամ փոխ տայք միայն բարեկամաց ձերոց ո՞ր շնորհ է ձեր » . ասաց Քրիստոս :

Ուստի ընկերսիրութեան մեծ պարտիք պէտք է համատարածի բոլոր մարդկային ընկերութեան վերայ, չխտրելով երբէք, ոչ ազգ, ոչ կրօնք, ոչ մեծ, ոչ փոքր, ոչ ծանօթ, և ոչ անծանօթ . այլ ընկեր համարել հաւասարապէս ամէն մարդ որ իւր նմանակից պատկեր կը կրէ :

Եւ առ այս ապացոյց՝ մի առակ բերեմ քեզ Աւետարանէն, որով ծայրագոյն ընկերսիրութեան օրինակը կուտայ Յիսուս իւր բոլոր հաւատացելոց : Երբ կեղծող օրինական դպիր մի փորձելով զՅիսուս կը հարցանէր . — Վարդապետ, զի՞նչ գործեցից, զի զկեանս յաւիտենականս ժառանգեցից : Յիսուս պատասխան կուտայ, յօրէնս զի՞նչ գըրեալ է և որպէս ընթեռնուս : Կը պատասխանէ դպիրն . թէ . Սիրեսցես զԾէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ . . . և այլն . և զընկեր քո իբրեւ զանձն քո » : Յիսուս դարձեալ կը պատաս-

խանէ . Ուղիղ ետուր զպատասխանիդ . զայդ արա և կեցցես : Պարծող գպիրն սկսեց կրկին անգամ հարցնել . « Եւ ո՞վ է իմ ընկեր » . որպէս թէ չը գիտէր : Յիսուս յայնժամ ճշմարիտ ընկերսիրութեան՝ և սբանչելի առակով մի պատասխան տուաւ :

« Այն մի իշանէր յԵրուսաղէմէ յԵրիքով , անկաւ ի ձեռոս աւազակաց » և այլն :

Դու շատ անգամ լսեր ու կարդացեր ես այս խորհրդաւոր առակը , որով Յիսուս ընդհանուր և անխտիր մարդամիրութիւն կ'ուսուցանէ , և աշխարհիս համայն մարդկային ազգը միապէս ու հաւասար ընկեր կ'անուանէ : Յիսուս Մովսիսի նման միայն Եբրայական ազգին մարդ չ'էր , որ խտրէր Եբրայեցին ու Եգիպտացին . այլ նա համայն աշխարհի , համայն ժողովրդոց մարդն էր : Նա չը գիտէր երբէք Հրէայն և Սամարացին խտրել : Այնպէս կը թուի թէ այդ հարցաբան օրինասէր գըպիրն Հրէայ էր , որ զԱմարացին մահու չափ կատէր . Քահանայն և Ղեւտացին եւս Հրէայ էին . որք ճամբու վերայ ինկած անյարիր արիւնշաղախ վիրաւորը տեսան և առանց երբէք կարեկցելու՝ անցան գնացին : Զը գիտենք թէ աւազակներէն հարուածեալ անձն ի՞նչ աղգէ էր . Յիսուս նորա ազգի անունը կը պահէ և կը յիշէ միայն անկեալ թշուառին կարեկցող մարդ՝ որ բնիկ Սամարացի էր , և ինկոյն գթացաւ խեղճին վրայ , պատեց ու դարձմանեց նորա վէրքը :

Ով գիտէ , գուցէ անկեալ վիրաւորն եւս կամ Սամարացի էր և կամ անծանօթ մի անձն . սորա համար այդ երկու անցնող հրէայ ուղեւորներն մո-

լեկունութեամբ իրենց պիրաը խստացուցին և չուզեցին տեսնալ անկելոյն աղէտը :

Երանի՛ քեզ, Որդեակ իմ, թէ ազնուասիրա լինիս և այս առակի օրինակէն Քրիստոսի քարոզած ընդհանուր ընկերսիրութեան՝ մարդասիրութեան օրէնքը սրտիդ մէջ խորագոյն դրոշմես, գթասիրտ գորովասիրտ լինիս այս աշխարհիս հըրապարակին վերայ անկեալ վիրաւորներ շատ կան, չէ թէ միայն ամայի լեռներու մէջ, ուր աւազակաց որջերն են, այլ նոյն իսկ բազմաժողով քաղաքներու և շինութեանց մէջ . Ն ո'վ զարկեր ձըգեր է ի գետին . — զօրաւորաց զրկանք և հարըստահարողաց ձեռք : Երբ կը պատահին քեզ այդպիսի զրկեալներն, անկարեկից աչքով մի տեսներ և անցնիր առանց կատարելոյ ընկերսիրութեան պարտիքդ որչափ և կարող ես: Աշխարհիս թշուառները մի զններ թէ ո'վ են և ի՞նչ ազգէ . բաւական է որ տեսնաս թէ նոքա եւս քեզ նման մարդեն, քո պարտիքն է թշուառին վերայ գթալ . քեզ ի՞նչ փոյթ նորա լեզուն և կրօն :

Յիշէ, որդեակ իմ, Յիսուսի վերջի պատասխանը, զոր տուաւ օրինասէր դպրին, « Զայդ արա և կեցցես »: Գնա կատարէ ընկերսիրութեան պարտիքներդ . և յայնժամ կապրիս դու :

Այլ աւաղ, չը գիտեմ թէ մարդիկ ե՞րբ պիտի ճանչնան այդ մեծ բարոյական զօրութիւն ; այդերկնային զօրավիգ ձեռք, զոր Յիսուս տուաւ իւրհաւատացեալ ժողովուրդին և զայն այդ զէնքով դինուորեց . որպէս զի նա կոռուի աշխարհին դէմ :

Բոլոր կեանքդ և քո անձն թէ Աւետարանին

և թէ նորա քարոզած ընկերսիրութեան համար նուիրես՝ արժան է։ Սիրոյ մեծ օրինակ մեր առջեւէն անցաւ գնաց Գողգոթային գլուխ։ Սէրն ի սէր մարդկային ընկերութեան նուիրեց իւր անձն, և որ բանիւ կը քարոզէր զայն՝ արդեամբ կատարեց աշխարհին առաջ։ Տեսէք ու չափեցէք, մարդիկ։ Մեծ քան զայս սէր ոչ գոյ։ Եթէ ոք զանձն դիցէ ի վերայ բարեկամին։ ասաց և մեռաւ։

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Ս Ի Ր Ա Փ Ա Ռ Ս Ա Մ Ո Ւ Կ Ե Լ

ՅԱՆԿԱԼԻ Որդեակդ իմ Սամուէլ, կեանքիդ առաջին շրջանի դասերն աւարտեցի։ Թոյլ տուր ինծ որ փոքր մի հանգչիմ, միտքս ու հոգիս կ'ազդուրի, թէ ողջ մնամ ես, եւ Աստուած զքեզ ողջ պահէ, մի բարեդէպ ժամանակի մէջ կսկսիմ դարձեալ խօսիլ երկրորդ շրջանի դասերդ։ զի դեռ եւս գրել կը սիրեմ, ոգիս յօժար է։ Եւ դու լսել ու կարդալ կը սիրես, ոգիդ փոյթեռանդ է, գիտես ու կը ճանաչես քո յառաջդիմութեան ժամանակ։

Հայրական ու կրթական դասերս խնամով պահէ յուշիդ, միշտ յիշէ թէ՛ եւ ես քանի՞ խնամով եւ սիրով խօսեցայ քեզ։ Ես քո սերմնացան մշակն եմ, Որդեակ, այս իմ սեւ սեւ գրեր իբրեւ մի մի ցորենանատիկ սրտիդ պարարտ երկրին վերայ ցանեցի այժմիկ։ Երկինք իւր արեւով եւ անձրեւով բուսուցանէ, եւ Աստուած անեցուցանէ, ինչպէս կը խոստովանի Պօղոս։ Դու պտղաբեր լինիս այն-

չափ մինչեւ միոյն տեղ հարիւր քերես , եւ ես , եւ քո հայրենեաց կարօտ որդիքներ՝ ուրախ ուրախ վայելենք քո առատ ու շահեկան արդիւնքը :

Քրիստոս իւր աջով գքեզ օրինէ , ինչպէս օրինեց իւր մշակ աշակերտները . եւ դու երթալով պտղաբեր լինիս , եւ քո բարի պտուղն ու յիշատակ մնայ աշխարհիս վերայ :

Ես քո հայր Սիրաք ամենայն ինամով աւանդեցի քեզ այս դասեր եւ դու երկիւղած հնագանդութեամբ լսեցիր . բայց գիտցիր , որ միայն լսելով չես արդարանար . այլ առնելով եւ ուսուցանելով : Եւ դու այժմէն ուխտ դիր որ իմ դասերս որդիքներուդ աւանդես եւ այսպէս յորդւոց յորդի , թոռնէ ի թոռ շարունակուելով՝ անմոռաց եւ կենդանի կը մնայ Սիրաքայ հօրդ խրատներ ու դասեր . որով տիրապէս կատարող կը լինիս Առակաց բանին . « Որդեակ , գօրէնս իմ մի մոռանար եւ զբան իմ պահեսցէ սիրտ քո , զի երկայնաւուրբք լիցիս ի վերայ երկրի : »



Վարէ՛ , Արդեակդ իմ Սամսէլ ,
Ուղիղ վարէ՛ զմանն եւ ակօս .
Արձակ զաշերն են մեր արտեր ,
Պարաբար թերուն եւ բարերեր .
Եւ ես ցանեմ ցործի հատեր ,
Քաղենք յուսով բաղմապատիկ .
Օրհնեալ է հողն եւ սերմեր ,
Օրհնեալ մշակք եղնամոլներ ,
Օրհնեալ է անդ եւ անդաստան ,
Օրհնեալ Աստուած
Ար տայ անձրեւ եւ արեւ .
Օրհնեալ վաստակ երկրագործին ,
Արդար ազատ ի գ ժրանաց :